

A large, modern skyscraper with a grey facade and dark horizontal stripes at the base. A large, solid green triangle is overlaid on the upper portion of the building, covering approximately the top third. Inside this green triangle, the numbers "1", "2", "9", and "0" are arranged in a cross pattern: "1" is on the left, "2" is at the top, "9" is in the center, and "0" is on the right.

1 2 9 0

ՏՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ	2
Խորհրդի նախագահի ուղերձը	5
Գլխավոր տնօրենի ուղերձը	7
Պատմական իրադարձություններ	9
Միջազգային գործընկերներ	11
Մրցանակներ	13

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արտաքին միջավայր	15
ՀՀ բանկային համակարգը	20
Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում	27
Բիզնես-մոդելը և ռազմավարությունը	30
Մանրածախ բանկային գործառնություններ	33
Կորպորատիվ և ներդրումային բանկային գործառնություններ	38
Առևտրային գործառնություններ	49
Նորարարություն և թվայնացում	51
Շրջակա միջավայրի և սոցիալական խնդիրների կառավարում	59

ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ոիսկերի կառավարման նպատակները և սկզբունքները	62
Ոիսկի ախորժակ	65
Հիմնական ռիսկերը և ռիսկերի կառուցվածքը	66
Ոիսկերի կառավարման մեխանիզմը	78
Ոիսկերի գործընթացների կազմակերպում և կառավարում	80

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի նախագահի կորպորատիվ կառավարման ուղերձ	86
Կորպորատիվ կառավարման կառուցվածքը	87
Տնօրենների խորհուրդը	88
Տնօրենների խորհրդին կից կոմիտեները	90
Տնօրենների խորհրդի անդամները	92
Տնօրինություն և Գլխավոր տնօրեն	99
Վարչակազմակերպական կառուցվածքը	106
Մեր անձնակազմը	108

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

114

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անկախ առողջապահ հաշվետվությունը	118
Ֆինանսական հաշվետվություններ	124

ՀԱՎԵԼՎԱԾ

Հապավումներ	227
-------------	-----



ՃԵՎԱՆԻՐ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ





ԱՄԵՐԻԿԱՆԿ՝ ՀԱՍԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Ամերիաբանկը Հայաստանի դինամիկ զարգացող բանկերից է: Այն դասվում է երկրի ամենակայուն և խոշոր ֆինանսական հաստատությունների շարքին և ունի հստակ ձևակերպված թվայնացման օրակարգ: Լինելով առաջին ներդրումային բանկը Հայաստանում «Ամերիաբանկ» ՓԲԸ այսօր ոնհիվերսալ բանկ է, որը մատուցում է կորպորատիվ, ներդրումային և մասրածախ բանկային ծառայություններ՝ տրամադրելով բանկային լուծումների ամբողջական փաթեթ: 2019թ. արդյունքներով Ամերիաբանկը ՀՀ բանկային համակարգի առաջատարն է գրեթե բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով (ակտիվներ, պարտավորություններ, վարկային պորտֆել, զուտ շահույթ, կապիտալ): Առաջնորդվելով կյանքի որակը բարելավելու առաքելությամբ Ամերիաբանկն այժմ անցնում է վերափոխման գործընթաց ավելի հաճախորդակենտրոն բանկ դառնալու նպատակով՝ ընդլայնելով թվային հնարավորությունները և մշակելով նոր պրոդուկտներ և լուծումներ հաճախորդների կարիքներն ու նախասիրությունները բավարարելու համար:




2019թ. ՀԻՄԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ բանկային համակարգի բացարձակ առաջատարը
հիմնական ֆինանսական ցուցանիշներով.



Ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ հարթակ՝ թվային լուծումների լայն կիրառմամբ



հեռահար և թվային ուղիներով
կատարված գործարքների
մասնաբաժինը

տարեկան աճ
5.4 տոկոսային կետով ↑



ինտերնետ-բանկինցի
օգտագործման գործակից

տարեկան աճ
10 տոկոսային կետով ↑

Հաճախորդների գերազանց սպասարկում և բարձր բավարարվածություն

NPS*

70.0%

CEI** 9.45



Հայաստանում գործող բանկի համար հնարավոր ամենաբարձր վարկանիշներ

S&P

Moody's

Երկարաժամկետ

B+

Բանկային ավանդներ
(ավգային արժույթով)

Ba3/NP

Կարճաժամկետ

B

Բանկային ավանդներ
(արտադրույթով)

B1/NP

Հեռանկարը

կայուն

BCA

ba3

SACP

bb-

CRA

Ba3(cr)/NP

Հեռանկարը

կայուն

*NPS՝ Հաճախորդների հավատարմության գործակից

**CEI՝ Հաճախորդների փորձառության գործակից, որի առավելագույն արժեքը 10 է



Խորհրդի նախագահի ուղերձը

Անդրեյ Մկրտչյան
Տնօրենների խորհրդի նախագահ



Հարգելի բաժնետերեր,

2019թ. Ամերիաբանկը ևս մեկ անգամ ապահովեց բարձր ֆինանսական ցուցանիշներ՝ մեծ առաջընթաց կատարելով՝ իր ռազմավարական նպատակների հրականացման ուղղությամբ։ Անցած տարին հավակնութ Վերափոխումների տարի էր, որոնք իրագործեցինք ավելի թվային, արդյունավետ և հաճախորդակետնորոն ընկերություն դառնալու նպատակով։ Այս տարի մենք հաջողությամբ ամփոփեցինք դեռ 2018թ. Նախաձեռնած կառուցվածքային փոփոխությունները՝ ստեղծելով ավելի ճկուն, արդյունավետ և թվայնացման մեր ռազմավարությանը համահոնչ կազմակերպական կառուցվածք։ Այս փոփոխություններն արդեն իսկ արդյունքներ են տալիս՝ բարձրացնելով գործառնական արդյունավետությունը, բարելավելով ընդհանուր սպասարկման որակը և օգնելով մեզ իրականացնել 2019թ. թվային օրակարգով նախատեսված մեր նպատակները։

2019թ. մենք ոչ միայն պահպանեցինք առաջատարի դիրքը շուկայում, այլև գրանցեցինք ակտիվների առաջանցիկ աճ շուկայի համեմատ, ինչի արդյունքում մեր մասնաբաժնը շուկայում աճեց 0.9 տոկոսային կետով։ Մենք զգալիորեն բարելավեցինք բոլոր հիմնական ցուցանիշները՝ ապահովելով էլ ավելի բարձր շահութաբերություն, ավելի կայուն կայտալ, վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման և ծավալի զգալի աճ։ Մենք երբեք այսքան մոտ չենք եղել բաժնետոմսերի առաջնային հանրային տեղաբաշխման մեր նպատակի իրագործմանը՝ արդեն իսկ ապահովելով տարիներ առաջ մեր կողմից սահմանված ֆինանսական ցուցանիշների մեծ մասը։

Այս տարվա ցուցանիշների ապահովումը խթանեցին արտաքին միջավայրի բարենպաստ պայմանները։ 2018թ. Վերջում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո քաղաքական իրավիճակը Հայաստանում կայունացավ՝ ստեղծելով բարենպաստ գործարար միջավայր և նպաստելով հետագա տնտեսական աճին։ 2019 թվականը հերթական հաջող տարին դարձավ Հայաստանի տնտեսության համար։ ՀՆԱ-ն գրանցեց աճ 7.6%-ով, տարեկան գնաճը կազմեց 1.4%, փոխարժեքը կայուն էր՝ չնայած պետական ծախսերի սահմանափակ լինելուն և մի շարք խոշոր ծրագրերի կասեցմանը և հետաձգմանը։

Լավ մակրոտնտեսական արդյունքների և պետական պարտքի ցուցանիշների բարելավման շնորհիվ Moody's վարկանիշային գործակալությունը բարձրացրեց Հայաստանի սուվերեն վարկանիշը B1-ից դարձնելով Բա3, որին հաջորդիվ Fitch Ratings գործակալությունը բարելավեց իր կողմից տրված վարկանիշը՝ սահմանելով BB- B+ փոխարժեն։ Այս դրական նախադրյալների պայմաններում 2019թ. 3-րդ եռամյակում ՀՀ կառավարությունը կրկին մուտք գործեց կայտալի միջավայրին շուկաներ բարեհաջող թողարկելով 10 տարի մարման ժամկետով 500 միլիոն ԱՄՆ դրամ ընդհանուր ծավալով Եվրապարտատոմսեր Վերաֆինանսավորելով Եվրապարտատոմսերի նախկին թողարկումը և Էապես

բարելավելով պարտքի ապագա սպասարկման բեռը: Բարձր պահանջարկի արդյունքում վերջնական եկամտաբերությունը կազմեց 4.2%, ինչն ամենացածր տեղաբաշխման եկամտաբերությունն էր դոլարով արտահայտված սուվերեն պարտատոմսերի համար Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Միջին Արևելքի և Աֆրիկայի ԲԲ վարկանիշ ունեցող երկրներում 2013թ. ի վեր:

Բարձր մակրոտնտեսական ցուցանիշները դրական անդրադարձան բանկային համակարգի վրա, մասնավորապես, բարձրացավ ընդհանուր շահութաբերությունը, բարելավվեց վարկային պորտֆելների որակը և ապահովվեց ռիսկերի՝ ընդհանուր առմամբ հավասարակշռված կառուցվածք: ՀՀ բանկային համակարգի հիմնական բնորոշչիններից շարունակում էր մնալ թեժ մրցակցությունը, ինչն զգալի ճնշում էր գործադրում մարժաների և եկամտաբերության վրա: Չնայած այս մարտահրավերներին՝ մենք կարողացանք բարելավել մեր մարժաները և շահութաբերությունը:

Տարին նշանավորվեց նաև թվայնացման ոլորտում զգալի հաջողություններով, քանի որ շուկայի գործեք բոլոր մասնակիցները մեծ ներդրումներ էին կատարում նոր տեխնոլոգիաների և լուծումների մեջ: Մենք ուշադիր հետևում ենք շուկային, քանի որ մրցակցությունն այս ոլորտում շարունակում է աճել ոչ միայն բանկերի կողմից, այլև հեռահաղորդակցման և ֆինտեխ հատվածների կողմից: Այդ իսկ պատճառով 2019թ. մենք ամուր հիմքեր ստեղծեցինք միջնաժամկետ թվային ռազմավարության իրականացման համար, որպեսզի դառնանք առավել հաճախորդակենտրոն, ավելի արագ և հաճախորդների համար պարզ ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերություն: Մենք ակտիվ աշխատում էինք հաճախորդների համար նորարարական լուծումների մշակման և ներդրման և մեր շուկայում հեղափոխական լուծումներով հանդես գալու ուղղությամբ:

Մենք պարարտ հող ենք նախապատրաստել հետազայում ավելի լավ արդյունքների համար և կարող ենք հպարտությամբ փաստել, որ ավելի քան երես պատրաստ ենք նոր մարտահրավերների: Մենք գործում ենք տարածաշրջանի ամենաշրջահայաց կարգավորող դաշտի պայմաններում, ինչը թեև ապահովում է ֆինանսական կայունություն, նաև ավելի խիստ նորմատիվային պահանջներ է թելադրում: Մեր բանկային համակարգն առաջատարներից է ՄՖՀՍ 9, ՄՖՀՍ 16 չափանիշների ներդրման և բանկային օրենսդրությունը Բարել III պահանջներին համահունչ վերանայման հարցում: Նորմատիվային կապիտալի ակնկալվող բարձրացմանն ընդառաջ մենք կուտակել ենք բավարար ֆինանսական պաշար՝ ապահովելու համար կապիտալի այնպիսի մակարդակ, որը մեկ թույլ կտա պահպանել հավասարակշռությունն ապահովության ու եկամտաբերության միջև:

Շարժվելով դեպի 2020թ.՝ մենք վճռակամ ենք շարունակելու նորարարի դերը ՀՀ ֆինանսական շուկայում և հաստատելու առաջատարի մեր դիրքն ըստ չափի և ֆինանսական ցուցանիշների: Թեև արդյունավետությունը և դիվերսիֆիկացումը կշարունակեն մնալ մեր ռազմավարական նպատակներին հասնելու հիմնական գործիքները, մենք մտադիր ենք ավելի կենտրոնանալ հաճախորդների սպասարկման և թվային վերափոխման վրա: Առաջնորդվելով կյանքի որակը բարելավելու առաքելությամբ՝ մենք կօգտագործենք թվային մեծ հնարավորություններ՝ հաճախորդի բավարարվածությունը և նորարարական պրոդուկտներ և լուծումներ ապահովելու համար: Մենք նաև կշարունակենք լուրջ ներդրումներ կատարել տաղանդների ներգրավման և զարգացման մեջ՝ մեր հավակնոտ նպատակների հրագործման նպատակով բարձր պրոֆեսիոնալիզմ և ճիշտ կորպորատիվ մշակույթ ապահովելու համար:

Տնօրենների խորհրդի անոնից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր թիմին հիմնայի աշխատանքի և մշտապես բարձր արդյունքների համար: Մեր թիմի նվիրվածության, եռանդի ու քրտնաշան աշխատանքի շնորհիվ է, որ մենք հասնում ենք նոր բարձունքների: Վստահ եմ, որ մեր միասնական թիմի շնորհիվ մենք հաջողությամբ կիրագործենք մեր նոր ռազմավարական նպատակները՝ ապահովելով կայուն եկամուտներ մեր բաժնետերերի համար և ստեղծելով երկարաժամկետ արժեք բոլոր շահառուների համար:

Անդրեյ Մկրտչյան
Տնօրենների խորհրդի նախագահ



ԳԼԻԱՎՈՐ ԱՆՈՒՆԻ ՌԱԴԱՐ

Արտակ Հանեսյան
Տնօրինության նախագահ,
Գլխավոր տնօրին

Հպարտ եմ հայտարարել, որ Ամերիաբանկը հաջողությամբ ավարտեց 2019 թվականը, որի ընթացքում մենք ամրապնդեցինք մեր առաջատար դիրքը բանկային համակարգում՝ ըստ հիմնական ֆինանսական ցուցանիշների՝ ակտիվների, վարկերի, պարտավորությունների, սեփական կապիտալի և զուտ շահույթի:

2018թ.-ին տեղի ունեցած խաղաղ քաղաքական փոփոխությունը շահեկան հարթակ էր ստեղծել երկրի բարգավաճման համար: 2019 թվականը երկրում սպասվող կայունության ժամանակագրական հետևանքն էր ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական տեսանկյունից: Հայաստանում կայուն տնտեսական աճ ապահովվելու նպատակով կառավարությունն իր առջև առաջնահերթ խնդիր է որդել իրականացնել հարկային բարեփոխումներ և ապահովել արդար մրցակցություն, թափանցիկություն և հաշվետվողականություն՝ որպես բարենպաստ բիզնես միջավայրի նախադրյալներ:

Դրական տնտեսական վիճակն ամուր հիմքեր ստեղծեց մեր բարձր ֆինանսական կատարողականի համար: Մենք տարին ամփոփեցինք զուտ շահույթի անսախաղեա բարձր ցուցանիշով, որը կազմեց 12.1 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 15.4%-ով: Դրա արդյունքում միջին կապիտալի եկամտաբերությունը (ROAE) կազմեց 12.8%՝ գրանցելով աճ 0.2 տոկոսային կետով տարվա կտրվածքով: Կայուն շահութաբերությունը պայմանավորված էր բարձր եկամտով և ակտիվների բարելավված որակով: Բանկի զուտ տոկոսային եկամուտն աճել է 13.4%-ով տարեկան կտրվածքով՝ կազմելով 31 մլրդ ՀՀ դրամ: Պրոակտիվ մոտեցման և ռիսկերի խելամիտ կառավարման շնորհիվ մենք գրանցեցինք ակտիվների որակի էական բարելավում՝ տարվա վերջում արձանագրելով չաշխատող վարկերի 2.9% գործակից (2018թ.՝ 3.3%) և արժեվորկման կորուստների զգալի նվազում (23.4% նվազում նախորդ տարվա համեմատությամբ):

Ինչ վերաբերում է հաշվեկշռային ցուցանիշներին, մենք արձանագրեցինք ակտիվների աճ 24.2%-ով, ինչի արդյունքում մեր մասնաբաժինը շուկայում կազմեց 16.8%, որը բարձր է նախորդ տարվա ցուցանիշից 0.9 տոկոսային կետով: Մեր համախառն վարկային պորտֆելն աճեց 6.3% -ով մանրածախ վարկավորման ծավալի շարունակական աճի շնորհիվ (48.3%-ով), քանի որ կենտրոնացման ռիսկը նվազեցնելու և դիվերսիֆիկացումն ապահովելու նպատակով մենք սահմանափակում էինք խոշոր կորպորատիվ հաճախորդների վարկավորումը: Ներգրավված ավանդների և պարտատոմսերի պորտֆելն ավելացավ 44.0%-ով, իսկ մեր մասնաբաժինը շուկայում կազմեց 17.7%՝ 3 տոկոսական կետով աճելով նախորդ տարվա համեմատ:

Շահութաբերության մշտապես բարձր ցուցանիշների, ուժեղ կապիտալի և բավարար իրացվելիության շնորհիվ Moody's վարկանշային գործակալությունը բարձրացրեց Ամերիաբանկի ազգային արժույթով երկարաժամկետ ավանդների վարկանշը՝ սահմանելով Ba3/NP B1-ի փոխարեն, իսկ արտարժույթով երկարաժամկետ ավանդների վարկանշը՝ B1/NP B2-ի փոխարեն:

2019թ. մենք շարունակեցինք արդյունավետ համագործակցությունը միջազգային ֆինանսական հաստատությունների հետ: Երկրի տնտեսության հիմնական ուղղություններում վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման ամուր հիմք ստեղծելու համար՝ մենք կնքեցինք 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր Ավստրիական վարդացման բանկի (OeEB) հետ: Վարկային միջոցներու ուղղվել են փոքր և միջին ձեռնարկությունների, ինչպես նաև Հայաստանում վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտներում իրականացվող նախագծերի ֆինանսավորմանը: Մեկ այլ վարկային պայմանագիր՝ 25 մլն ԱՄՆ դոլարի, ստորագրվեց ՕՊԵԿ-ի (Նավա արտադրող երկրների կազմակերպության) Միջազգային վարդացման հիմնադրամի հետ: Միջոցներն օգտագործվել են Ամերիաբանկի միջազգային առևտորի ֆինանսավորման պորտֆելն ընդլայնելու նպատակով: Մենք նաև կնքեցինք 20 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով վարկային պայմանագիր Նիդերլանդների ձեռնարկատիրական վարդացման բանկի հետ (FMO) ուղղված Հայաստանում, կանաչ ծրագրերի և երիտասարդ անձանց ֆինանսավորմանը: Սա FMO-ի ՀՀ դրամով առաջին ֆինանսավորումն էր Հայաստանում սեփական միջոցների հաշվին:

2019 թվականը նշանավորվեց բազմաթիվ հեղինակավոր մրցանակներով և անթերի աշխատանքի ճանաչմամբ, որոնք բոլորն ել փաստում էին մեր առաջատար դիրքը տեղական շուկայում: Մենք ճանաչվել ենք 2019թ. ,Տարվա լավագույն բանկ The Banker ամսագրի կողմից և արժանացել Euromoney 2019թ. Գերազանցության մրցանակին համապատասխանբար վեցերորդ և յոթերորդ անգամ: Ամերիաբանկը ճանաչվել է լավագույն բանկ Հայաստանում նաև EMEA Finance ամսագրի կողմից՝ հաշվի առնելով սպասարկման ուղիների եական բարելավումը և ձեռքբերումները թվային բանկինցի ոլորտում:

Ուրախ եմ հայտնել, որ 2019թ. մեծ հաջողություններ ունեցանք նաև ներդրումային բանկային գործառնությունների ոլորտում՝ հանդես գալով որպես Հայաստանի խոշորագույն ընկերություններից մեկի՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի՝ 50 միլիոն ԱՄՆ դոլար և 2.5 միլիարդ ՀՀ դրամ ծավալով առաջին պարտատոմսերի տեղաբաշխող: Սա շրջադարձային գործարք էր ՀՀ կապիտալի շուկայում՝ պատմականորեն ամենախոշոր ծավալով, որը մեծ դեր կրունեան Հայաստանի կապիտալի շուկայի խոստումնալից ապագայի գործում:

2019 թվականը բացարիկ տարի էր մեզ համար նաև մեր ռազմավարական նպատակի իրականացման՝ թվային վերափոխման տեսանկյունից: Մենք ավարտեցինք դեռ 2018թ. նախաձեռնած կառուցվածքային փոփոխությունները՝ ճանապարհ հարթելով բիզնես-գործընթացների արդյունավետության բարձրացման, պրոդուկտների ներդրման ժամանակի կրճատման և ռազմավարական ծրագրերի իրականացման ավելի ճկուն՝ թվային վերափոխման վրա հիմնված մոտեցման համար: 2019թ. զգալի առաջընթաց ունեցանք թվայնացման օրակարգի իրագործման և հեռահար բանկային գործառնությունների հնարավորությունների ընդլայնման հարցում: Թվային և հեռահար ուղիներով կատարված գործարքների մասնաբաժնը կազմեց 82.4%, ինչը 5.4 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից: Նոյն ժամանակահատվածում ինտերնետ-բանկինցի օգտագործման գործակիցն աճեց 10 տոկոսային կետով՝ կազմելով 34%: Ինտերնետ-բանկինցի օգտագործողների թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճեց 89%-ով, իսկ ինտերնետ-բանկինցով կատարված գործարքների քանակը՝ 76%-ով: Առաջիկա տարիների համար սահմանել ենք թվային փոխակերպման բավականին հավակնութ նպատակներ և կաշխատենք հաճախորդներին պարզապես հեռահար սպասարկման ուղիներից բացառապես թվային տիրույթ տեղափոխելու ուղղությամբ:

Ինչպես վկայում են մեր գործունեության անցյալ տարիները, մենք հավատարիմ ենք մեր ռազմավարական նպատակներին՝ ճկուն լինելով փոփոխվող շուկայական պայմաններում: Վստահ եմ, որ մենք ճիշտ ուղղու վրա ենք՝ պահպանելու այս առաջընթացը և շարունակելու ստեղծել արժեքը մեր բաժնետերերի համար աճի, արդյունավետության և թվային վերափոխմանն ուղղված մեր կենտրոնացման միջոցով: Եվ, իհարկե, մենք այս ամենն ի վրու ենք իրականացնել բացառապես մեր փորձառու թիմի շանքերի, նվիրվածության և մեր եկակի կորպորատիվ մշակույթի շնորհիվ:

Արտակ Հանեսյան
Տնօրինության նախագահ-
գլխավոր տնօրեն

ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2019թ. ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԶԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԸ

1. Moody's վարկանիշային կազմակերպությունը բարձրացրել է Ամերիաբանկի ազգային արժույթով երկարաժամկետ ավանդների վարկանիշը՝ B1-ից սահմանելով Բա3, իսկ կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշը (ազգային արժույթով և արտարժույթով)՝ Բա2-ից սահմանելով Բա3 կայուն հեռանկարով:
2. 5 մին ԱՄՆ դոլարին համարժեք եվրոյի երկարաժամկետ ստորադաս վարկային գործարք կնքվեց ԿԼԻՄԱՋԱԼԱՆ գործընկերության համաշխարհային հիմնադրամի հետ:
3. 20 մին ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով վարկային պայմանագիր՝ ուղղված վերականգնվող Էներգետիկայի և Էներգաֆանայող ծրագրերի, ինչպես նաև մինչև 35 տարեկան անձանց բնակարանի ձեռքբերման, կրթության և բիզնեսի ֆինանսավորմանը, կնքվեց Նիդերլանդների ձեռնարկատիրական վարզացման բանկի (**FMO**) հետ: Սա FMO-ի սեփական միջոցների հաշվին ազգային արժույթով իրականացված առաջին ֆինանսավորումն է Հայաստանում:
4. 25 մին ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր կնքվեց OPIEC-ի Միջազգային վարզացման հիմնադրամի հետ: Վարկային միջոցներն ուղղվեցին տնտեսության տարբեր ոլորտներում առևտությունների ֆինանսավորման՝ նպաստելով Ամերիաբանկի միջազգային առևտությունների ֆինանսավորման պորտֆելի ընդլայնմանը:
5. 30 մին ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր կնքվեց **ԱՎԱՏՐԻԱԼԱՆ ՎԱՐԴԱԳՄԱՆ ԲԱՆԿԻ** հետ՝ ՓՄՁ աճը սատարելու, ինչպես նաև Հայաստանում վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության ոլորտներում իրականացվող նախագծերը ֆինանսավորելու համար:
6. 9.7 մին ԱՄՆ դոլարի ֆինանսավորում **ՌԱՅՖԱՅՎԵՆ ԲԱՆԿ ԻՆՍՏՐՈՆԵԽՆԱԲՐԱՆԿԻ** կողմից և 7.0 մին ԱՄՆ դոլարի գործարք **ՅՈՒՆԻԿՐԵԴԻՏ ԱՎԱՏՐԻԱ ԲԱՆԿԻ** հետ առևտությունների ֆինանսավորման նպատակով:
7. 14 մին ԱՄՆ դոլարի վարկ, որի մի մասը տրամադրվել է **ՍԻՐԹԻԲԱՆԿԻ** կողմից բացված վարկային սահմանաշափի շրջանակներում, իսկ մնացածը ապահովված է **ԱՍԻԱԿԱՆ ՎԱՐԴԱԳՄԱՆ ԲԱՆԿԻ** երաշխիքով:
8. 175 մին ԱՄՆ դոլարին համարժեք ֆինանսավորման արժեթղթավորում **responsAbility Investments AG** կողմից, որտեղ JP Morgan-ը հանդես է եկել որպես տեղաբաշխող, ԱՄՆ Օսարերկրյա մասնավոր ներդրումների կորպորացիան՝ որպես ներդրող, իսկ Ամերիաբանկը՝ որպես ֆինանսական միջնորդ Հայաստանում 9.4 մին ԱՄՆ դոլար մասնակցությամբ:
9. Ամերիաբանկը հանդես եկավ որպես Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի՝ 50 միլիոն ԱՄՆ դոլար և 2.5 մլրդ ՀՀ դրամ ծավալով և 3 տարի մարման ժամկետով պարտասովումների տեղաբաշխող, ինչը շրջադարձային գործարք էր ՀՀ կապիտալի շուկայում:

ԱՄԵՐԻՀԱԲԱՆԿԻ հաջողության ուղին

2018-2019

30 մը ԱՄՆ դոլարի **Ամերիդոմ**
կապիտալում Ասիական
վարգացման բանկի կողմից
(2018թ, սկզբում):**

Moody's **Ba3** վարկանշը:
«դրական» հեռանկարով:
S&P-ի **B+** վարկանշը:
«կայուն» հեռանկարով:

2015

30 մը ԱՄՆ դոլարի
Ամերիդոմ կապիտալում
A2ԵԲ-ի կողմից:*
50 մը դոլարի **ստորադաս**
փոխառնություն **ԱՖԿ-ից:***
1-ին հրապարակված
միջազգային վարկանշը
Fitch B+ «կայուն» հեռանկարով:

2010

1-ին միաձուլման գործարքը
Հանկային համակարգում՝
Ամերիաբանկ և Կասկադ Բանկ

2007

1-ին ձեռքբերման գործարքը
Հանկային համակարգում՝
Հայաստանի ամենահին, սակայն
ամենափոքր բանկերից մեկի
բաժնետոմսերի ձեռքբերում:

1998

Հայաստանի և սփյուռքի
գործարարները հիմնադրեցին
«Ամերիա» խորհրդատվական
ընկերությունը

2017

Հանկային համակարգի
բացարձակ առաջատարն
ըստ հիմնական ֆինանսական
ցուցանիշների:

2011-2014

Ամերիաբանկը դարձավ
Հայաստանի առաջատար բանկը:

Ըստունվեց ռազմավարական որոշում
կրապուտատիվից դաշնալ ունիվերսալ
բանկ, զարկ տալ մարզածախ
գործառնություններին:

2008-2009

Վերանվանվեց
Ամերիաբանկ:

Անսախադեպ աճ
համաշխարհային
ճգնաժամի
պայմաններում:

2000-2007


Ամերիան դարձավ
ընկերությունների ԽՈՒՏԲ՝
գործունեության սոր ուղղություններով՝
իրավաբանական և հարկային
խորհրդատվություն, բիզնես
խորհրդատվություն, Ամերիդոմ մարզակային
գործառնություններ, ակտիվների
կառավարում:

* խոշորագույն գործարք ֆինանսական կազմակերպության հետ Հայաստանում

** Ասիական վարգացման բանկի առաջին բաժնային ներդրումը Հայաստանում

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Ամերիաբանկի գործընկեր հանդիսացող միջազգային ֆինանսական հաստատությունները և ներգրավված միջոցների հանրագումարը համագործակցության մեջնարկից ի վեր





GROUPE AGENCE FRANÇAISE DE DÉVELOPPEMENT

35 մլն

սկսած
2013



55 մլն



25 մլն

սկսած
2014



45 մլն



38.4 մլն , որից 9 մլն՝
ստորադաս փոխառություն

սկսած
2016



45 մլն , որից 15 մլն՝
ստորադաս փոխառություն



11.5 մլն

սկսած
2018

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

2019թ. մրցանակներ և հավաստագրեր



AMX Armenia Securities Exchange

- **The Banker** ամսագրի «Հայաստանի տարվա լավագույն բանկ 2019» մրցանակ
- **Euromoney** ամսագրի 2019 թ. Գերազանցության մրցանակ՝ որպես տարվա լավագույն բանկը Հայաստանում
- Հայաստանի լավագույն ներդրումային բանկ՝ **Global Finance** ամսագրի վարկածով
- «Կովկասում և Կենտրոնական Ասիայում 2019թ. լավագույն թողարկող բանկ» մրցանակ **IFC-ի** (Միջազգային ֆինանսական կորպորացիա) կողմից
- «Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում սարքավորումների ֆինանսավորման գծով 2019թ. լավագույն գործընկեր-բանկ» մրցանակ **IFC-ի** (Միջազգային ֆինանսական կորպորացիա) կողմից
- 2019թ. «Լավագույն գործընկեր բանկ Հայաստանում» մրցանակ **Ասիական վարզացման բանկի** կողմից
- «Ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակ **ՎԶԵԲ-ի** (Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ) կողմից 2018թ. արդյունքներով
- «Փոփոխության գործակալ 2018» մրցանակ **ՎԶԵԲ-ի** (Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ) կողմից շերմոցային տնտեսությունում «կանաչ» ներդրումների աջակցության համար
- «Պետական պարտասումների շուկայում բորսայի անդամ 2019» և «Օտարերկրյա արժեթղթերի շուկայում դեպովիտար համակարգի լավագույն հաշվի օպերատոր-պահառու 2019» մրցանակներ **Հայաստանի ֆոնդային բորսայի** և Կենտրոնական դեպովիտարիայի կողմից անցկացվող «AMX մրցանակաբաշխություն 2019»-ին
- Ամերիաբանկի Տվյալների մշակման կենտրոնը՝ որպես լավագույն լրացում **Global CIO** պաշտոնական պորտալի կողմից անցկացվող «Տարվա նախագիծ» մրցույթում
- Հաղթող **WOW!HR** Հայաստան բիզնես-մրցանակաբաշխության Workplace անվանակարգում՝ «Ամերիա քաղաք» նախագծով




ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ՄԻԶԱՎԱՅՐ

Սակրոտնտեսական նախադրյալներ*

2019 թվականը հերթական հաջող տարին էր Հայաստանի համար մակրոտնտեսական միջավայրի առումով, թեև համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական իրավիճակը համեմատաբար անբարենպաստ էր աշխարհաքաղաքական լարվածության և առևտրային քաղաքականության անորոշությունների պատճառով:

ՀՀ տնտեսական աճի արագացված տեմպը, որն սկսվել էր 2017թ.-ին, փոքր-ինչ դասղաղեց 2018թ.-ին՝ գրանցելով, այսուամենայնիվ, բարձր՝ 5.2% ցուցանիշը, իսկ 2019թ.-ին կազմեց ռեկորդային բարձր՝ 7.6%: 2009թ.-ին կտրուկ անկմանը հաջորդել էր չափավոր վերականգնման շրջան (2010-2015թթ.) տարեկան 4% միջին աճով: 2016թ. աճը կազմել էր ընդամենը 0.2%, մինչդեռ 2017-2019թթ. միջին աճի տեմպը վերականգնվեց կազմելով 6.8%: 2019թ.-ին Հայաստանի տնտեսական աճի տեմպը բարձր էր ոչ միայն նախորդ տարիների համեմատ, այլև ամենաբարձրն էր հարևան և ԵՄ երկրների շրջանում:



2019թ.-ի տնտեսական աճի բարձր տեմպը գրանցվել էր հիմնականում ի հաշիվ արդյունաբերության, որն ամենամեծ նպաստում էր ունեցել ՀՆԱ-ի աճին, և որի մասնաբաժիկը ՀՆԱ-ում գերազանցեց բազմամյա առաջատարի գյուղատնտեսության մասնաբաժիկը: Շինարարության դեռ 2017թ.-ին սկսված աճի տեսակը հաշվետու տարում ոչ միայն պահպանվեց, այլև արագացավ: Նախկինում ՀՆԱ-ում ամենամեծ մասնաբաժիկն ունեցող այս ոլորտի համար տարին լավ էր սկսվել, և, չնայած տարվա ընթացքում գրանցվեց որոշակի անկում, տարին ամփոփվեց դրական արդյունքներով: Երկրորդ տարին անընդմեջ ամենամեծ դրական փոփոխությունը գրանցվել է կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտում: Միևնույն ժամանակ, արդեն երրորդ տարին անընդմեջ մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտը չի վերականգնում առաջատարի նախկին դիրքն ըստ աճի տեմպերի: Նախկինում ամենաարագ աճող ոլորտը՝ ֆինանսական և ապահովագրական ծառայությունները, հաշվետու տարում նույնպես պահպանեց դեռևս 2016թ.-ին սկսած վերականգնման տեմպը, որը շարունակաբր աճում էր: Գյուղատնտեսությունը 2019թ. շարունակեց անկում ապրել և ամենամեծ բացասական ազդեցությունն ունեցավ ՀՆԱ-ի աճի վրա:


*Տվյալներն՝ ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումների

Ծյուղերի մասնաբաժինը ՀՆԱ-ում


	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	11.1%	11.3%	10.6%	10.0%	10.3%	10.6%	11.4%
Գյուղատնտեսություն, որսորդություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	18.4%	18.1%	17.2%	16.4%	15.0%	13.7%	11.6%
Արդյունաբերություն	16.2%	16.0%	16.3%	17.8%	18.5%	18.4%	18.6%
Շինարարություն	10.5%	9.3%	9.4%	7.8%	7.3%	6.6%	6.2%
Մեծածախ և մակրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	12.0%	11.8%	10.9%	9.8%	11.1%	11.3%	11.4%
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	8.1%	8.4%	8.7%	8.6%	7.8%	7.9%	7.8%
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	4.0%	4.3%	3.9%	4.4%	4.9%	5.3%	5.9%
Այլ	19.5%	20.9%	22.9%	25.2%	25.1%	26.1%	27.1%

ՀՆԱ բաղադրիչներ՝ աճի տեսակ և նպաստում

■ Աճի տեսակ, % ● Նպաստում ՀՆԱ-ի աճին, տ.կ.



ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ ընտրված տնտեսության ճյուղերի, %




2019թ.-ին (դեկտեմբերից դեկտեմբեր) սպառողական գների ինդեքսը կազմում էր 0.7%՝ ՀՀ ԿԲ-ի նպատակային գնաճի շեմից ցածր՝ 4% ($\pm 1.5\%$): Տարե կան միջին գնաճը կազմել էր 1.4%: Գրեթե բոլոր ապրանքախմբերի գները տարվա ընթացքում համեմատաբար կայուն էին: 2020թ.-ին սպառողական գների ինդեքսի կտրուկ տատանումներ չեն նախանշվում. ինդեքսը կլինի գնաճի կանխատեսված սահմաններում: Տարվա ընթացքում զգալիորեն կայուն էր նաև դրամ/դոլար փոխարժեքը: Արձանագրվել էր նաև գործազրկության մակարդակի բարելավում. ըստ 2019թ.-ի տարեկան արդյունքների գործազրկության ցուցանիշը կազմել է 18.9%, ինչը 1.6 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

Փոխարժեք և սպառողական գների ինդեքս (ՍԳԻ) Դրամ/դոլար փոխարժեք


	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Միջին տարեկան	409.63	415.92	477.92	480.49	482.72	482.99	480.45
Տարեկերի դրությամբ	405.64	474.97	483.75	483.94	484.10	483.75	479.70
ՍԳԻ, % (Դեկտեմբերին այսորդ տարվա դեկտեմբեր)	5.6%	4.6%	-0.1%	-1.1%	2.6%	1.8%	0.7%
ՍԳԻ, % (12 ամսվա կուտակային)	5.8%	3.0%	3.7%	-1.4%	1.0%	2.5%	1.4%

Երկրի արտաքին առևտուրի աճի միտումն սկսվել էր 2016թ.-ին (2015թ.-ին տեղի ունեցած բավականին շոշափելի անկումից հետո՝ Ռուսաստանի ՀՆԱ-ի աճի դանդաղեցման, մետաղների գների անկման և ՀՀ դրամի ու ԱՄՆ դոլարի նկատմամբ տարածաշրջանի արժույթների արժեկույթան արդյունքում առևտուրի պայմանների վատթարացմամբ պայմանավորված) և պահպանվեց 2019թ.-ին նույնական: 2019թ.-ի ընթացքում արտահանման ծավալների աճը կազմեց 9.4%, ներմուծման ծավալների աճը՝ 10.8%, թեև առաջին կիսամյակում արտահանման ծավալների աճի տեմպը ներմուծման աճի տեմպից քարձի էր: Երկրորդ կիսամյակում ներմուծման արագացքած աճը մեծամասամբ պայմանավորված էր ավտոմեքենաների ներկրման ծավալի զգալի աճով՝ Եվրոպական տնտեսական միության կարգավորումների արդյունքում, և տևական ավելցություն չի ունենալու:

Արտանքների արտահանում և ներմուծում
(մլն ԱՄՆ դոլար)



Արտաքին առևտրի հաշվեկշիռ
(մլն ԱՄՆ դոլար)



Հաշվետու ժամանակահատվածում պահպանվեց նաև դեպի Հայաստան փոխանցումների ծավալի աճի տեմպի վերականգնումը, որը նախորդ տարվա համեմատ բավականին բարձր էր (9.7%՝ նախորդ տարվա 1.6% համեմատ):

Ընթացիկ վճարային հաշվի պակասուրդի հարաբերակցությունը ՀՆԱ-ին կազմում է -8.2%, ինչը 1.2 տոկոսային կետով բարձր է 2018թ.-ի ցուցանիշից (-9.4%, 2018թ.):

Հայաստանի արտաքին պարտքը 2019թ.-ին կազմում էր ՀՆԱ-ի 42.5%-ը՝ 2018թ.-ին 44.5%-ի համեմատ, գումարային արտահայտմամբ 5,790 մլն ԱՄՆ դոլար տարեվերջին, ինչը 4.6%-ով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից: Ըստ որում, 91.5%-ը կառավարության պարտքն է, որը կազմում էր 90.1% 2018թ.-ին, իսկ մասցած 8.5%-ը Կենտրոնական բանկինը կազմելով 9.9% նախորդ տարի: Արտարժույթով պահուստների պաշտոնական հայտատարված ծավալը 2019թ.-ին ավելացել է 25.7%-ով՝ կազմելով 2.84 մլրդ ԱՄՆ դոլար: Շարունակում էր բարելավվել պետական բյուջեի դեֆիցիտի ցուցանիշը. 2019թ. այն կազմում էր ՀՆԱ-ի ընդամենը 1.0%-ը՝ նախորդ տարվա 1.8%-ի համեմատ: 2019թ-ին, հարկային եկամուտը կազմեց 1,507 մլրդ ՀՀ դրամ՝ ներառյալ 42.8 մլրդ ՀՀ դրամ ԱԱՀ-ի վերադարձը գերակատարելով նախանշված ցուցանիշն ավելի քան 100 մլրդ ՀՀ դրամով:

Բարձր մակրոտնտեսական ցուցանիշների և պետական պարտքի ցուցանիշների բարելավման շնորհիվ Moody's գործակալությունը բարձրացրեց Հայաստանի սովորեն վարկանշից՝ սահմանելով Բա3 նախկին B1-ի փոխարեն: Այս դրական նախադրյալների պայմաններում սեպտեմբերին Հայաստանը թողարկեց 10

տարի մարման ժամկետով և 4.2% Եկամտաբերությամբ 500 մլն ԱՄՆ դոլարի Եվրոպարտատոմսեր (RegS/144A ձևաչափով): Սա ամենացածր արժեկարողային Եկամտաբերությունն է, որը գրանցվել է ԱՄՆ դոլարով ոչ Ներդրումային կարգի սուվերեն պարտատոմսերի համար Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Միջին Արևելքի և Աֆրիկայի BB վարկանիշ ունեցող Երկրներում 2013թ. հունվարից ի վեր և 2-րդ ամենացածր արժեկարողային Եկամտաբերությունը ԱՊՀ Երկրների կողմից ԱՄՆ դոլարով թողարկված սուվերեն պարտատոմսերի (այդ թվում Ներդրումային կարգի) համար վերջին 10 և ավելի տարիների ընթացքում: 2019թ.-ի վերջում Fitch Ratings գործակալությունը նույնական բարձրացրեց Հայաստանի արտադրությունը թողարկողի Երկարաժամկետ վարկանիշը դարձնելով BB- նախկին B+-ի փոխարեն, կայուն հեռանկարով:

Վերջին մի քանի տարվա ընթացքում ՀՀ ձեռնամուխ է եղել Երկրում նաև Ներդրումային և գործարար միջազգյան բարելավմանը: Ըստ ՀԲ Doing Business 2020 վեկույցի Հայաստանը 47-րդն է 190 Երկրների շարքում՝ ունենալով 2019թ.-ի 73.2 գնահատականի բարձրացում 74.5-ի 2020թ.-ին, ինչը խոսում է անցած տարվա ընթացքում գործարար միջազգյան կարգավորող իրավական դաշտում տեղի ունեցած դրական փոփոխությունների մասին: Համաշխարհային տնտեսական ֆորումի 2019թ. մրցունակության ինդեքսում Հայաստանը 69-րդն է 141 Երկրից և 70-րդը՝ 140-ից ըստ 2018թ.-ի արդյունքների: Heritage Foundation հետապոտական կենտրոնի 2019թ. տնտեսական ազատության ինդեքսի համաձայն Հայաստանը զբաղեցնում է 47-րդ տեղը 180 Երկրներից և դասվում է չափավոր ազատ տնտեսությամբ Երկրների շարքին:

Հայաստանը շարունակում էր ակտիվորեն համագործակցել միջազգային կառուցյան հետ և տեղաբաշխել Ներգրավված միջոցները (ՀԲ, Արժույթի միջազգային իիմնադրամ, ԱԶԲ, ԵՄ): Մասնավորապես, 2019թ. ՀԲ աջակցությամբ իրականացվում էր ավելի քան 20 ծրագիր տնտեսության տարբեր բնագավառներում՝ էներգետիկա, գյուղատնտեսություն, կրթություն, ճանապարհաշինություն, առողջապահություն, ոռոգման համակարգեր, գյուղական համայնքների վարգացում, համարային կառավարում և այլն: Ասիական վարգացման բանկի մշակած՝ 2020-2022թթ. Երկրի գործառնությունների բիզնես պլանը (ԵԳԲՊ) կազմվել է այսպես, որ համահունչ լինի Հայաստանի հետ 2019-2023թթ. գործընկերության ռազմավարությանը, որի ռազմավարական նպատակներից է աջակցությունը կառավարության աշխատանքին՝ դիվերսիֆիկացված և Ներառական աճ ապահովելու համար: Ծրագիրը համահունչ է նաև ԱԶԲ 2030թ. ռազմավարության առաջնահերթ գործառնական խնդիրներին (աղքատության կրծատումը, քաղաքներում կյանքի որակի բարձրացումը, շրջակա միջազգյար, կառավարումը, տարածաշրջանային համագործակցությունը և սեռական հավասարությունը), ինչպես նաև Հայաստանի 2019-2023թթ. ազգային վարգացման ծրագրին: ՎԶԵԲ-ի Երկրի ռազմավարությունը (2019-2024թթ.) Հայաստանի համար Ներառում է հետևյալ գերակա ռազմավարական խնդիրները. (1) բարձրացնել մասնավոր հատվածի մրցունակությունը, բարելավել կառավարումը և աջակցել գործարար միջազգյան վերաբերող բարեփոխումներին, (2) կարգացնել կայուն Ենթակառուցվածք առևտրայնացման և, կանաչ տնտեսության անցնելու միջոցով:

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ*

Բարձր մակրոտնտեսական ցուցանիշները դրական են անդրադարձել ՀՀ ֆինանսական համակարգի վրա 2019թ., որտեղ գրանցվել է աճ բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով:

Հայաստանում գործող ֆինանսական կազմակերպությունները	2018	2019
 Բանկեր	17	17
 Վարկային կազմակերպություններ	39	43
 Ապահովագրական ընկերություններ	7	7
 Ներդրումային ընեկորություններ և ֆոնդեր	31	37

Բանկերը երկնիշ աճ գրանցեցին բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով: Մասնավորապես, բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն աճեցին 16.2%-ով՝ նախորդ տարվա համեմատ, իսկ վարկերը՝ 16.3%-ով:

Ֆինանսական ցուցանիշների զգալի աճ են գրանցել նաև վարկային կազմակերպությունները: Մասնավորապես, ընդհանուր ակտիվների տարեկան աճը կազմեց 27.9%, իսկ ընդհանուր վարկերի տարեկան աճը՝ 33.5%:

Ընդհանուր կենսաթոշակային միջոցներն ավելացան շուրջ 60%-ով՝ կազմելով 251 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 3.8%-ը (2018թ. հովհանքի 1-ից պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգն ուժի մեջ մտավ ամբողջությամբ. 2.5%-ը պահպում է աշխատակից աշխատավարձից, իսկ 7.5%-ը վճարում է պետությունը, մինչդեռ նախկինում յուրաքանչյուրը վճարում էր 5%):

2019թ. արդյունքների համաձայն բոլոր բանկերը և որոշ վարկային կազմակերպությունները ներառվել են առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում:

Հայաստանի ֆինանսական համակարգում բանկերը շարունակում են դոմինանտ դեր խաղալ՝ տիրապետելով ֆինանսական համակարգի ընդհանուր ակտիվների 85%-ին:

*Բանկային համակարգի ցուցանիշները հիմնված են 4-րդ եռամսյակի առողջական չափանիկությամբ:

ԲԱՐՁՐ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ ԱՃԻ ՀԱՄԱՐ

2019թ. տարեվերջի արդյունքների համաձայն՝ ՀՀ բանկային համակարգը բավականաչափ կապիտալացված է, ուսակ է կյանքի հիմնական ռիսկերը և դիմակայելու ցնցումներին, ինչը վկայում է հետագա աճի և զարգացման համար բավարար հիմքերի մասին:

Համակարգի իրացվելիության ցուցանիշները նոյնական բարձր են, ինչը վկայում է բանկային համակարգի հանդեպ բիզնեսի և քաղաքացիների վստահության և տնտեսությունը սահուն ձևով սպասարկելու ուսակության մասին:

Սրա մասին են վկայում նաև բանկերի նորմատիվային ցուցանիշները, համաձայն որոնց բոլոր բանկերն ունեն տնտեսությունը ֆինանսավորելու և նոր միջոցներ ներգրավելու մեջ ներուժ:

- Բանկային համակարգի **կապիտալի համարժեքության ցուցանիշը** 17.6% էր, ՀՀ ԿԲ նվազագույն նորմատիվային չափը 12.0%:
- **Իրացվելիության ցուցանիշները** և բավականին բարձր են. Ն2.1՝ 27.1%, Ն2.2՝ 111.7%:

ՀՀ բանկային համակարգի նորմատիվային դաշտն ավելի խիստ է, քան տարածաշրջանի և անգամ եվրոպայի շատ երկուներում:

2019 թվականը բանկերի համար Բավել III ստանդարտների ներդրման համար նախապատրաստման տարի էր, որոնք Հայաստանում ուժի մեջ կմտնեն 2020թ. ավելի ամրապնդելով համակարգի կայունությունը:

ՀՀ ԿԲ-ն այժմ երկու գլխավոր նպատակ ունի. ապահովել գների և ֆինանսական համակարգի կայունությունը: 2019թ. ընթացքում Կենտրոնական Բանկը շարունակում էր վարել խթանող դրամավարկային քաղաքականությունը՝ երկու անգամ հջեցելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը հունվարին (0.25 տոկոսային կետով մինչև 5.75%) և սեպտեմբերին (0.25 տոկոսային կետով մինչև 5.5%): Անցած 10 տարում տնտեսությունում ֆինանսական միջնորդության ցուցանիշներից մեկը՝ վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին, գրեթե եռապատկվել է, թեև Հայաստանն այս առումով դեռ հետ է մնում արևելակորպական երկրներից:

Տարեվերջի դրությամբ վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին 54.5% էր, մինչդեռ 2008թ. այն 17.8% էր: Բանկային համակարգում գրանցվեց ակտիվների աճ գրեթե 16.2%-ով և վարկերի աճ 16.3%-ով: 2019թ. արձանագրվել է սոցիալական աջակցության շրջանակներում իրականացված հիփոթեքային վարկավորման անսախադեալ աճ՝ գրեթե 41%-ով, ինչը Կենտրոնական բանկի և կառավարության համատեղ ծրագրերի արդյունք էր:



ՀՀ կառավարությունը հանրային քննարկման է ներկայացրել օրինագիծ, համաձայն որի օրենսդրությունը ամրագրվում է դժվար կացության մեջ գտնվող վարկառուների՝ հիփոթեքային արձակուրդից օգտվելու իրավունքը և դրա իրացման պայմանները: Վարկառուն կարող է դիմել մինչև 6 ամիս ժամկետով հիփոթեքային արձակուրդ ստանալու նպատակով՝ կողմերի միջև համաձայնեցված պայմաններով: Նման դեպքում վարկի դասակարգումը չի փոխվի, տույժեր և սույնական չեն կիրառվի:



ՀՀ Կենտրոնական բանկը դիտարկում է ՀՀ առևտրային բանկերի և վարկային կապմակերպությունների համար պարտքային բերի հաշվարկման գործակցի ներդրումը: Պարտքային բերի գործակցի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է վարկառուներին պաշտպանելու ստադրությամբ: Մասնավիրապես, սպառողական վարկերի ձևակերպման ժամանակ բոլոր տեսակի, այդ թվում «արագ» վարկերի դիմաց վճարումները հետագայում դառնում են անհաղթահարելի վարկառուների համար:

Դոլարացման բարձր մակարդակը դեռևս բանկային հատվածի մարտահրավերներից մեկն է, թեև 2019թ. կային դրական փոփոխություններ): Դրամով արտահայտված վարկային պորտֆելի ավելի արագ աճի պայմաններում վարկային դոլարացումը 2019թ. վերջում Հայաստանում նվազեց մինչև 51%՝ 2018թ. 56%-ից: Սա պատմականորեն դոլարացման ամենացածր ցուցանիշն է Հայաստանում:

Հաճախորդների անցումը թվային բանկային տիրույթ նոր մարտահրավեր է ՀՀ բանկային համակարգի հիմար: Մրցակցության աճը և ամբողջ աշխարհում թվայնացման ակտիվ միտումները տևականության բոլոր հատվածներում, նպաստեցին նրան, որ հայկական ընկերությունները ևս վերանայեն իրենց գործընթացները՝ ավելի արագ գործարքներ, բարեկաված ծառայություններ ապահովելու և աճը խթանելու նպատակով: Սա խթանում են նաև արտաքին միտումները և ՏՏ ոլորտի դիմամիկ կարգացումը:



Այսօր բանկերը ոչ միայն ակտիվորեն համագործակցում են ՏՏ ընկերությունների հետ, այլև ստեղծում հետապոսությունների և նորարարական մշակումների սեփական կենտրոնները, որոնց նպատակն է խթանել թվային բանկային ծառայությունների ներդնումը:



Միաժամանակ, գործունեության ընդլայնումը և հաճախորդների թվի աճը թելադրում են բանկերին վերանայել տվյալների կառավարման համակարգերը և ներդնել մեծածավալ տվյալների կառավարման լուծումներ:




Անկանխիկ գործարքները շահավետ են ինչպես հաճախորդի ու բանկի, այնպես էլ պետության համար (օրինակ՝ հարկերի տեսանկյունից), ուստի կառավարությունը նոյնպես խրախուսում է անկանխիկ և առցանց գործառնությունները՝ նախաձեռնելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

2019թ. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՃ՝ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՏԵՄՊԵՐՈՎ

Բանկերի ռեկորդային շահույթը

ՀՀ բանկային համակարգի վուտ շահույթը 2019թ.-ին կազմեց for 78 մլրդ ՀՀ դրամ՝ գրանցելով տարեկան աճ 25.4%-ով:

Սա ռեկորդային ցուցանիշ է ՀՀ բանկային համակարգի ամբողջ պատմության ընթացքում: 2019թ.-ին միայն մեկ բանկ էր աշխատում վնասով:




2019թ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի **երկնիշ աճը** պահպանվեց, և աճ արձանագրվեց բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով:

Հաշվետու տարում համակարգի ընդհանուր **կապիտալը** շարունակում էր աճել՝ հասնելով 845 մլրդ ՀՀ դրամի, ինչը 13.4%-ով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից: Այսպիսով, ըստ 2019թ.-ի արդյունքների բանկային հատվածի մասնաբաժնին ՀՆԱ-ում կազմել է 12.9%:


Կապիտալի աճին վուգընթաց աճում էին նաև **ակտիվները** և **պարտավորությունները**: Մասնավորապես, 2019թ. բանկային համակարգի **ակտիվներն** ավելացան 16.2%-ով՝ կազմելով 5.8 տրիլիոն ՀՀ դրամ, **վարկերը՝** 16.3%-ով՝ կազմելով 3.6 տրիլիոն ՀՀ դրամ: Համակարգի ընդհանուր ակտիվները կազմեցին ՀՆԱ-ի 88.1%-ը, վարկերը՝ 54.5%-ը:

*Աղյուր՝ բանկերի՝ առողջության չափության ցուցանիշները

Ակտիվներ, մլրդ << դրամ*




Վարկեր, մլրդ << դրամ*




*Աղբյուր՝ բանկերի՝ առողջականության ցուցանիշները

Բանկերի **պարտավորություններն** ավելացան 20.3%-ով՝ կազմելով 5 տրիլիոն ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 75.2%-ը: **Ընթացիկ հաշվերը և ժամկետային ավանդներն** ավելացան 21.6%-ով՝ կազմելով 3.5 տրիլիոն ՀՀ դրամ: Ինչպես նշվեց, 2019թ.-ին բանկերը շարունակում էին ակտիվ կերպով միջոցներ ներգրավել տեղական կապիտալի շուկայից պարտքային արժեթղթեր թողարկելու միջոցով: Ուստի, եթե հաշվի առնելով բանկերի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը, հաճախորդների հանդեպ ընդհանուր պարտավորությունների բացարձակ ծավալը կկազմի 3.7 տրիլիոն ՀՀ դրամ:

Պարտավորությունների հաճախորդների նկատմամբ, մլրդ ՀՀ դրամ*
(Ներառյալ բանկերի թողարկած արժեթղթերը)



Կապիտալ, մլրդ ՀՀ դրամ*



ՀՀ ԿԲ-ի համաձայն՝ բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը կազմում է 60.7%:


*Աղյուր՝ բանկերի՝ առողջիւ չափած տարեվերջյան ցուցանիշները

Ակտիվների որակի եվ արդյունավետության բարելավում


2019թ.-ին նոյնապես չաշխատող վարկերը շարունակում էին մնալ բանկային համակարգի հիմնական մարտահրավերներից մեկը: Հարկ է նշել, սակայն, որ վերջին 3 տարվա ընթացքում բանկային համակարգի պորտֆելի որակը շարունակում էր բարելավել: 2019թ.-ին այս ցուցանիշը 5.5% էր (ըստ ՀՀԿԲ տվյալների), մինչդեռ 3 տարի առաջ՝ 6.7%: Միաժամանակ, որոշ բանկերի ընդհանուր վարկային պորտֆելում դեռ առկա են էական ծավալի չաշխատող վարկեր:

Ինչեւ, բանկերը կարողացան ոչ միայն կսպել ցուցանիշի աճը, այլև բարելավել այն՝ մաքրելով պորտֆելները ժամկետանց վարկերից: Սրան նպաստող միջոցների թվում էին չաշխատող վարկերի դուրսգրումը, վարկավրուման աճը, անհուսալի վարկերի մասնակի վերականգնումը:

Չաշխատող վարկեր*



Կապիտալի եկամտաբերություն



Ակտիվների եկամտաբերություն**



*Աղբյուր՝ ՀՀԿ ենտրոնական Բանկ


**Աղբյուր՝ հաշվարկված է բանկերի հաշվետվությունների հիման վրա

ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԴԻՐՔԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վերջին հինգ տարում Ամերիաբանկն ապահովել էր աճի բարձր տեմպ, որը գերազանցում էր միջին շուկայական ցուցանիշը: Արդյունքում, Ամերիաբանկը պահպանեց բացարձակ առաջատարի դիրքը գործեթափության ժամանական ցուցանիշներով:

Հիմնական ֆինանսական ցուցանիշների աճ՝
2015 - 2019թթ. Միջին աճի տեմպ






Պարտավորությունների համախորհների նկատմամբ (Անդամական Ամերիաբանկի թողարկած արժեթղթերը)

2019թ.-ի արդյունքների համաձայն՝ Ամերիաբանկը ՀՀ բանկային համակարգի բացարձակ առաջատարն էր ըստ սեփական կապիտալի, շահույթի, ակտիվների, վարկերի և պարտավորությունների: Անցյալ տարվա ընթացքում Բանկը գրանցեց սեփական կապիտալի աճ 12.8%-ով 2018թ.-ի համեմատ, և այժմ Ամերիաբանկին է պատկանում ամբողջ բանկային համակարգի սեփական կապիտալի շուրջ 12.0%-ը: 2019թ.-ի ընթացքում Բանկն արձանագրեց ակտիվների աճ ավելի քան 24.2%-ով և պարտավորությունների աճ՝ 25.6%-ով, ինչի արդյունքում բանկին պատկանում է շուկայի ակտիվների և պարտավորությունների համապատասխանաբար 16.8%-ը և 17.6%-ը: Հաշվետու տարում կուտ վարկերի և փոխատվությունների ծավալն ավելացավ 6.9%-ով, ինչի արդյունքում Ամերիաբանկի մասնաբաժինը շուկայում կազմեց 16.4%, իսկ հաճախորդների հանդեպ պարտավորություններն աճեցին 48.6%-ով (44.0%՝ արժեթղթերով հանդերձ), իսկ շուկայի մասնաբաժինը կազմեց 17.1% (17.7% համապատասխանաբար):


Հիմնական ֆինանսական ցուցանիշների աճը՝ 2019թ.




Պարտավորությունների համախորհների նկատմամբ (Անդամական Ամերիաբանկի թողարկած արժեթղթերը)

Բանկի հիմնական ֆինանսական ցուցանիշների և շուկայի մասնաբաժինների դինամիկան ներկայացված է գծապատկերներում:

2019թ. արդյունքներով վարկերի մասնաբաժինը բանկի ակտիվներում կազմում էր 60.5% (2018թ.՝ 70.3%), մինչույն ժամանակ աճել է իրացվելի ակտիվների մասնաբաժինը:




Վարկային պորտֆելի տարեկան աճը 2019թ. կազմել է 6.9%: Մինչույն ժամանակ, բանկի ռազմավարության համաձայն 2019թ. հիմնական շեշտը դույլ է մանրածախ և ՓՄՁ վարկավորման ծավալների աճի վրա: Արդյունքում, ֆիզիկական անձնանց և անհատ ձեռնարկատերերի վարկավորման ծավալների տարեկան աճը կազմեց շուրջ 50%, իսկ ՓՄՁ վարկավորման աճը գրեթե 11%:



2018թ.-ի սկզբին դառնալով շուկայի առաջատարն՝ ըստ ընդհանուր կապիտալի, նոր ներդրողի շնորհիվ բանկը պահպանեց առաջատար դիրքը 2018 և 2019թ.-երին նույնականացնելու: 2019թ.-ին բանկի ընդհանուր կապիտալը ավելացավ 4.7 մլրդ ՀՀ դրամով կամ 12.8%-ով: Աճն ապահովվել է մեծամասամբ չբաշխված շահույթի հաշվին: Արդյունքում, բանկի մասնաբաժինը շուկայում ըստ ընդհանուր կապիտալի կազմեց 12%:


Բանկը գրանցել է նաև **կապիտալի համարժեքության ցուցանիշի աճ**, որը կազմեց 14.7%, ինչը 1.04 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից: Դա թույլ տվեց բանկին ապահովվել բավարար ֆինանսական պաշար և կապիտալ՝ ապահովության և եկամտաբերության միջև հավասարակշռությունը պահպանելու համար:

1-ին ըստ ընդհանուր կապիտալի Մլրդ ՀՀ դրամ




2019թ. պարտավորությունների տարեկան աճը կազմեց 25.6%, միևնույն ժամանակ Բանկը շարունակում էր դիվերսիֆիկացնել պարտավորությունների կառուցվածքը: Բանկն ակտիվորեն միջոցներ էր ներգրավում թե՛ հաճախորդներից, թե՛ ֆինանսական կազմակերպություններից:

1-ին ըստ շահույթի Մլրդ ՀՀ դրամ



1-ին ըստ պարտավորությունների Մլրդ ՀՀ դրամ



Ամերիաբանկը նաև զգալիորեն բարելավեց շահութաբերության ցուցանիշները: Տարեվերջի դրությամբ Բանկի կապիտալի եկամտաբերությունը զգալիորեն բարձր էր բանկային համակարգի միջին ցուցանիշից կազմելով 12.8%, մինչդեռ միջին բանկային ցուցանիշը կազմում էր 9.8%:

ԲԻԶՆԵՍ ՄՈԴԵԼԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Բիզնես տեսլական և ռազմավարություն

2019 թվականը ձեռքբերումներով լի հերթական տարին էր Ամերիաբանկի համար: Բանկն ամրապնդեց իր դիրքը ՀՀ առաջատար բանկերի շարքում՝ որպես մրցունակ, կայուն և ժամանակակից ֆինանսական հաստատություն՝ հետագա աճի և զարգացման հսկայական ներուժով:

Առանձնակի ուշադրություն դարձնելով հաճախորդների պահանջների բավարարմանը՝ Բանկն արդեն իսկ ամուր դիրք է գրավել որպես առաջատար ըստ նորարարության և սպասարկման չափանիշների: Մենք մշտապես կատարելագործում ենք աշխատանքի կազմակերպումը՝ կորպորատիվ կառավարումն ու հաճախորդների սպասարկման տեխնոլոգիաները, ձգտում ընդլայնել առաջարկվող ծառայությունների և պրոդուկտների ցանկը, ներգրավել հմտությունը ու արհեստավարժ անձնակազմ և ապահովել պահանջվող ռեսուրսների մշտական առկայությունը:

Ամերիաբանկը վերահսկում է իր որդեգրած ռազմավարությունը՝ դառնալ ունիվերսալ բանկ: Այս առողջությունը 2019թ. հսկայական աշխատանք կատարվեց ընդլայնվեց մակարդակությունների ցանկը, շարունակական ներդրումներ կատարվեցին մակարդակությունների և ԱԳՄ-ների ցանցի ընդլայնման ուղղությամբ: Վերջին տարիների ընթացքում մակարդակությունները շարունակաբար աճել են. մասնավորապես, այս պահից ի վեր, երբ ընդունվեց ունիվերսալ բանկ դառնալու մասին որոշումը, պորտֆելի ծավալը ավելացել է 8 անգամ, բայց մենք դեռ անելիք ունենք՝ մեր սահմանած նշանողին հասնելու համար: Բանկը նախաձեռնել է լայնածավալ ներքին փոփոխությունների և գործընթացների, պրոդուկտների և սպասարկման ուղիների վերանայման հերթական փուլը՝ ելեկտրոնային հաճախորդների պահանջմունքներից: Հաշվի առնելով թվային ծառայությունների ու համակարգերի ավելի ակտիվ կիրառումը՝ ակնկալում ենք մակարդակությունների ավելի մեծ աճ: Թվային նորարարական նախագծերն առանձնացված են ըստ ուղղությունների՝ ներքին արդյունավետություն, թվային պրոդուկտներ և ծառայություններ, սպասարկման թվային ուղիներ և տեխնոլոգիական հենքի ապահովում:

Ամերիաբանկի ռազմավարությունը և դրանից բխող գործողությունները հիմնվում են մեր առաքելության վրա:

Մեր առաքելությունն է.



Բարելավել կյանքի որակը

- մեր հաճախորդներին տրամադրելով միջազգային որակի ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ,
- իրականացնելով հասարակության բարօրության համար նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր,
- ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության զարգացման մեր սեփական մոդելը՝ միավորելով հաջողակ մարդկանց,
- շարունակաբար ավելացնելով մեր բաժնետիրական արժեքը:

Բացի մեր առաքելությամբ սահմանված խնդիրների, մենք սահմանել ենք նաև միջնաժամկետ զարգացման իինք հիմնական ուղղություններ, ինչպես նաև որոշ միջնաժամկետ նպատակներ:

- Լինել **ՇՈՒԿԱՅԻ ԱՌԱՋԱՏԱՐԾ՝** աճել առաջանցիկ տեմպերով: Առաջատարի դիրքը պահպանելու նպատակով Բանկը մտադիր է շարունակել նորմատիվային կապիտալի համալրումը, շահութաբերությունը չափել ոիսկով կշռված ակտիվներով, ավելացնել ոչ տոկոսային եկամուտը, ընդլայնել հաճախորդների բազան, խթանել խաչածն վաճառքը՝ ըստ հաճախորդների նախընտրությունների, ինչպես նաև դիտարկել միաձոլումների հնարավորությունները:
- Բարձրացնել **ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝** ապահովել կապիտալի եկամտաբերության պատշաճ մակարդակ՝ ցածր ծախսատարության պայմաններում: Արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Բանկը մտադիր է ավտոմատացնել ներքին բիզնես-գործընթացները և մի շաք գործառույթներ, ինչպես նաև ավարտին հասցել կազմակերպական կառուցվածքի և բիզնես-մոդելի վերանայումը, ինչը պետք է դրական անդրադառնա Բանկի արդյունավետության վրա:
- Ընդլայնել **ԹՎԱՅՆԱՑՄԱՆ** ծավալները՝ դառնալ հեռահար բանկային ծառայություններ մասնաւոր առաջատար բանկ՝ հնարավորինս ավտոմատացնելով գործընթացները: Բանկը նախատեսում է նշանակալի և երկարաժամկետ ներդրումներ կատարել այս ոլորտում՝ այս ուղղությամբ նոյնպես առաջատար դիրքեր գրավելու համար: Թվային լուծումները պետք է հնարավորություն տան ընդլայնել հեռահար բանկային ծառայություններից օգտվողների թիվը, իսկ թվային պրոդուկտներն ապահովեն հաճախորդների արագ և որակյալ սպասարկումը:
- Բարձրացնել **ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՄԱՆ** աստիճանը՝ հիմնական շեշտը դնելով մանրածախ և ՓՄՁ ծառայությունների և բանկային գործաքնների մասնաբաժնի ընդլայնման վրա: Առաջիկա տարիներին Բանկն իր ռազմավարության համաձայն կշարունակի խթանել մանրածախ և ՓՄՁ վարկավորումը՝ իր ներկա և պոտենցիալ հաճախորդներին առաջարկելով համապարփակ ֆինանսական ծառայություններ:
- Բարելավել **ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ՝** լինել հաճախորդակենտրոն բանկ գործունեության բոլոր ուղղություններում, ապահովել հաճախորդների վստահության և բավարարվածության ինդեքսի ամենաբարձր ցուցանիշները: Մենք խթանում ենք շարունակական ուսուցումը, զարգացումն ու մոտիվացումը, որոնց նպատակն է զարգացնել անձնակազմի հաղորդակցման հմտությունները, շարունակաբար բարձրացնել սպասարկման որակը և նպաստել հաճախորդների գործունակության աճին: Բանկը նաև շարունակաբար ուսումնասիրում է շուկան՝ հասկանալու համար հաճախորդների կարիքներն ու նախընտրությունները և ըստ այդմ մշակելու անհատականացված լուծումներ:

Իր զարգացման ներկա փուլում Ամերիաբանկը կարևորում է տվյալների վրա հիմնված որոշումների կայացումը: Այս նպատակով մենք նախաձեռնել ենք տվյալների բազաների ընդլայնումը և նախապատրաստվում ենք որոշումների կայացման նպատակով ավելի մանրակրկիտ ու բավարակողմանի վերլուծության կիրառմանը: Մենք հավատարիմ ենք մեր սկզբունքներին՝ վարել պատասխանառու գործունեություն և պահպանել մեր կազմակերպությունում արդեն վաղուց ձևավորված ու կայացած դրական մշակույթը ու թիմային ոգին: Մենք լիարժեքորեն ներդրել ենք կորպորատիվ կառավարման միջազգային լավագույն փորձը, ունենք խորհրդի դիվերսիֆիկացված կազմ և խորհրդին կից գործող երեք կոմիտե:

Ենելով Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունից, հիմնական մրցակիցների գործողությունների ու պոտենցիալ զարգացումների վերաբերյալ կանխատեսումներից՝ Ամերիաբանկը տեսնում է աճի նոր հնարավորություններ, որոնք մտադիր է օգտագործել առաջիկա տարիների ընթացքում:

Թեև Բանկն ունի աճի մեծ հնարավորություններ խոշոր բիզնեսի ֆինանսավորման ոլորտում, հիմնական շեշտը դրվելու է մանրածախ և ՓՄՁ բիզնեսի զարգացման վրա վարկային պորտֆելը հավասարակշռելու նպատակով: Ակնկալիում է, որ ուսիւնական բանկային մոդելի դեպքում աճելու է նաև բանկային գործառնություններից ստացված գուտ եկամուտը:



ՄԱՆՐԱԾԱԽ ԲԱՆԿԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌԱՆԴԵՇՅՈՒՆՆԵՐ

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2019թ. հիմնական ցուցանիշները




Ընդհանուր ակնարկ

Ամերիաբանկը շարունակում է ներդրումներ կատարել մանրածախ բանկային գործառնությունների զարգացման մեջ, որն իր հիմնական ռազմավարական նպատակներից մեկն է: Մենք ձգտում ենք լինել առաջին ընտրության բանկն ինչպես անհատների, այնպես էլ պրեմիում հաճախորդների համար և առաջարկել անհատականացված լուծումներ և գործիքներ երկարաժամկետ համագործակցությունն ապահովելու համար: Մենք կենտրոնացած ենք նաև մանրածախ բիզնեսի բանկինգի հաճախորդների (միկրո և փոքր բիզնեսի) ուղղությամբ՝ առաջարկելով հատուկ մշակված բանկային լուծումներ և նորարարական ծառայություններ:

Մենք առաջարկում ենք ծառայությունների լայն տեսականի բազմաֆունկցիոնալ հարթակի միջոցով՝ ձգտելով ապահովել հաճախորդների անթերի սպասարկում: Հոգ տանելով հաճախորդների համար հարմարավետություն ապահովելու մասին մենք շարունակաբար արդիականացնում ենք մեր թվային լուծումները, որպեսզի մեր պրոդուկտներն ու ծառայությունները հասանելի լինեն ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում: Արդյունքում, 2019թ. մեր մանրածախ հաճախորդների թիվը ավելացավ 45%-ով՝ գերազանցելով 294,800, մինչդեռ թվային բանկային ծառայություններից օգտվողների մասնաբժինը կազմեց 34%: Բացի այդ, Ամերիաբանկի մանրածախ վարկավորման պորտֆելն աճեց 48.3%-ով, ինչին զուգահեռ բարելավել է վարկային պորտֆելի որակը: Մասնավորապես, չաշխատող վարկերի մասնաբժինը կազմեց 1.9%, ինչը 1.9 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից:

Հիմնական ձեռքբերումները



Բարձր կապիտալ և նախադրյալներ աճի համար

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վճարային քարտեր

2019թ.-ին քարտային գործառնությունների աճն Ամերիաբանկի մանրածախ ուղղության գերակա խնդիրներից մեկն էր: Մենք գրանցեցինք աճ բոլոր հիմնական ոլորտներում, այդ թվում թողարկված քարտերի քանակի, վճարումների ծավալի, էլեկտրոնային վճարումների, POS և vPOS տերմինալներով կատարված գործարքների գծով և այլն:

Մասնավորապես, թողարկված քարտերի ընդհանուր քանակը 2019թ.-ին ավելացավ 33%-ով:

Ի լրումն դրան, մենք ձեռնամուխ եղանք մի շարք ծրագրերի, որոնց նպատակն էր բարձրացնել ուսանողների որպես Բանկի պոտենցիալ հաճախորդների ֆինանսական գրագիտության աստիճանը: Մասնավորապես, VISA Inc. ընկերության հետ համատեղ մենք իրականացրինք ուսանողների կողմից քարտերի օգտագործման խթանման ուղղված արշավ՝ նպաստելով նրանց բանկային պատմության ձևավորմանը: Գնահատելով երիտասարդների գործունակությունն ու եռանդը՝ արշավի շրջանակներում մենք նաև կապմակերպեցինք մասնավոր համերգ հատուկ երիտասարդների համար:

Հաճախորդների գերավանց սպասարկումն ապահովելու նպատակով հունիսին մենք ներդրեցինք մեկանգամյա կիրառման զաղունաբառերով վճարային քարտեր, ինչը զգալիորեն արագացրեց քարտերի տրամադրման և ակտիվացման գործընթացները հաճախորդներին հնարավորություն տալով ինքնուրույն ակտիվացնել քարտը բանկում ատելի մոտ մի քանի պարզ գործողությունների միջոցով:

Աշխատավարձային քարտեր

Աշխատավարձային նախագծերը միշտ մեր ուշադրության կենտրոնում էին: 2019թ.-ին 1.000-ից ավելի ընկերություն ավելի քան 100,000 աշխատակիցներով, օգտվում էր Ամերիաբանկի քարտերից իրենց անձնակավմին աշխատավարձ վճարելու նպատակով: Փոքր բիլետի շրջանում աշխատավարձային քարտերի օգտագործումը խթանելու նպատակով 2019թ.-ի վերջում մենք հայտարարեցինք արշավ, որի շրջանակներում առաջարկում էինք ԱՐՔԱ վճարային քարտերն առանց տարեկան սպասարկման վճարի:

Քարտային գործառնությունների աճ

Կարևորելով անկանխիկ գործառնությունների դերը տնտեսական զարգացման և սուվերային տնտեսության նվազեցման գործում 2019թ.-ի Բանկը թիրախավորված քայլեր ձեռնարկեց քարտային գործառնությունները խթանելու ուղղությամբ: Մենք ապահովեցինք քարտային վճարումների ծավալի աճ 30%-ով՝ իրականացնելով համատեղ արշավ VISA ընկերության հետ, որի հաղթողներն ստացան Հայաստան-ՀԽՍՀ ֆուտբոլային խաղի տոմսերը: Արշավը ծառայեց նաև որպես Հայաստանում ֆուտբոլին աջակցելու միջոց:

2018թ.-ի վերջում մենք ներդրել էինք Visa Pay Sticker վճարային միջոց՝ որպես քարտային գործառնությունները խթանելու և մեկ միջոց: Այս ծառայությունն անմիջապես հաջողություն էր ունեցել, առաջին մի քանի ամսվա ընթացքում թողարկվել էր ավելի քան 4,000 ,կազմուն քարտ:

Ընդհանուր քարտային վճարումների ծավալը 2019թ.-ին գերազանցեց 100 մլրդ ՀՀ դրամը:

POS և vPOS տերմինալների ցանցի ընդլայնումը և արդիականացումն անհպում վճարումներն սպասարկելու նպատակով էապես նպատեցին այս նպատակի իրականացմանը: Ինտերնետ էջվայրինգի (vPOS) ծառայությունների մասով արձանագրվեց շրջանառության տարեկան աճ 76%-ով, որը կազմեց 9.3 մլրդ ՀՀ դրամ նախորդ տարվա 5.3 մլրդ ՀՀ դրամի փոխարեն, իսկ գործառնությունների թվում 74% տարեկան աճ կազմելով 2,285,726 նախորդ տարվա 1,317,345-ի փոխարեն:

Բանկը շուկայում պահպանում է առաջատար դիրքը՝ ըստ էլեկտրոնային առևտության և վճարային տերմինալեռնի միջոցով իրականացվող գործարքների ծավալների: 2019թ.-ին վիրտուալ POS տերմինալեռնի քանակն ավելացավ 68%-ով՝ հասնելով 395-ի, իսկ դրանցով իրականացված գործարքների ծավալն աճեց 112%-ով: POS տերմինալեռնի քանակն ավելացավ 31%-ով՝ հասնելով 2,639-ի, իսկ դրանցով իրականացված գործարքների ծավալը 54%-ով:

Հեռահար և թվային բանկային ուղիներով կատարված գործարքների մասնաբաժինը 2019թ.-ին կազմեց 82.4%:

ԱՎԱՆԴՆԵՐ

2019թ.-ին ցանկանց ավանդների ծավալն ավելացավ 27%-ով՝ կազմելով 93.5 մլրդ ՀՀ դրամ, մինչդեռ ժամկետային ավանդների ծավալն աճեց 29%-ով՝ հասնելով 173.4 մլրդ ՀՀ դրամի:

Ազգային արժույթով խնայողություններ խրախուսելու նպատակով ապրիլին մեկնարկեց, Ապրիլի հայերեն արշավը, որը հիմնականում ուղղված էր դրամային ավանդների ներգրավման խթանմանը: Մինչնոյն ժամանակ արշավի նպատակն էր աջակցել տեղական արտադրողներին. ՀՀ դրամով ավանդ ներդրած բոլոր հաճախորդներին առաջարկվում էին տեղական արտադրության պատրաստված է Հայաստանում նշումով նվերներ:

ՀԱՅԱԳՈՐԾԱԿցՈՒԹՅՈՒՆ «ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ» (REPAT ARMENIA) ԻՀՄՆԱԴՐԱՄԻ ԻԵՍ

Մեր հերթական հաջողված նախաձեռնություններից էր 2019թ.-ի մայիսին իրականացված «Վերադարձ Հայաստան» նախագիծը, որի շրջանակներում մենք համագործակցության պայմանագիր ստորագրեցինք «Վերադարձ Հայաստան» (REPAT ARMENIA) հիմնադրամի իես առաջարկելով շահավետ փաթեթներ հայրենադարձ համայնքի անդամներին: Ծրագրի հիմնական նպատակն էր աջակցել հայրենադարձներին իրենց տնտեսական ներուժի օգտագործման գործում դառնալով Հայաստանում սիյուռքահայության համար նախընտրելի բանկը:

Սքորինգի հիման վրա օնլայն սպառողական վարկեր

Հաճախորդների հարմարությունն առաջնային է մեզ համար: Դեռ 2018թ.-ին մենք գործարկեցինք սքորինգային վարկավորման առցանց հարթակ, որը հնարավորություն էր տալիս հաճախորդներին րոպեների ընթացքում ստանալ կրտսեղ անհրաժեշտ վարկը կամ վարկային գիծը: Հաշվետու տարվա ընթացքում համակարգը շարունակաբար բարելավվում էր, ինչի շնորհիվ սքորինգային վարկերը կազմեցին 74%:

2019թ. մենք համալրեցինք սքորինգային համակարգը նոր մոդուլով, որը թույլ տվեց վերաֆինանսավորել սպառողական վարկերը: Սա կարևոր առավելություն էր հատկապես աշխատավարձային քարտեր ունեցող քարտապանների համար, որոնք այժմ կարող են վերաֆինանսավորել իրենց վարկերը արտոնայի տոկոսադրույթներով աշխատավարձային նախագծերի շրջանակներում: Ներկայումս մենք աշխատում ենք արհեստական բանականության վրա հիմնված վարկավորման տարբերակների ուղղությամբ և նպաստեսում ենք գործարկել դրանք 2020թ.-ին:

ԱՎՏՈՎԱՐԿԵՐ

2019թ.-ին մենք ընդլայնեցինք մեր գործունությունն ավտովարկավորման հատվածում՝ մինչնոյն ժամանակ պահպանելով ավտովարկավորման պորտֆելի բարձր որակը: Տարեկան դրությամբ մեր վարկային պորտֆելն այս ճյուղում ավելացել էր 49%-ով՝ կազմելով 3 մլրդ ՀՀ դրամ:

Ամերիաբանկը համագործակցում է Հայաստանի գրեթե բոլոր ավտոսրահների հետ: Մենք մշակել ենք հատուկ արտոնայի պայմաններ՝ ընդամենը 10% կամխավճարով և պարզեցված վարկավորման ընթացակարգով առաջնային շուկայից ավտոմեքենան գնող հաճախորդների համար, ինչի շնորհիվ մեր հաճախորդներն ավատված են գոյքի գնահատման հավելյալ գործընթացներից: 2019թ.-ին մենք նաև գործարկեցինք ավտովարկավորման հատուկ հարթակ՝ ավտոշուկայի էկոհամակարգ, որտեղ ներկայացված են ավտոսրահների առկա առաջարկները, առկա են ներկառուցված հաշվիներ, և որտեղ հաճախորդները կարող են դիմել վարկի համար առցանց:

Հաշվի առնելով մի քանի գործոն, մասնավորապես՝ թվայնացման միտումը ֆինանսարանկային ոլորտում, մեր մրցակցային դիրքը պահպանելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ավելի դյուրին և պարզ վարկավորման գործընթացների կապակցությամբ հաճախորդների սպասումները՝ 2019թ.-ի վերջում մենք նախաձեռնեցինք ավտովարկավորման սքորինգային համակարգի ներլուսմը, որի գործարկումը նախատեսվում է 2020թ.-ի առաջին եռամյակում: Առցանց ավտովարկավորումը լիարժեք կգործի 2020թ.-ի երրորդ եռամյակում:

Հիփոթեքային վարկավորում

ԱՆՉԱՐԺ ԳՈՎՅՔԻ ՃԵՌՋԵՐՄԱՆ/ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ Ն ԿԱՌՈՒԾԱՎԱՏՄԱՆ ՎԱՐԿԵՐ

2019թ.-ին մենք ընդլայնեցինք մեր գործունեությունը հիփոթեքային վարկավորման բնագավառում՝ միևնույն ժամանակ պահպանելով վարկային պորտֆելի բարձր որակը: Տարեվերջին բանկի հիփոթեքային վարկավորման պորտֆելն աճել էր 75%-ով՝ կազմելով 78 մլրդ ՀՀ դրամ:

Մենք ուշադիր հետևում ենք անշարժ գույքի շուկային և ընդլայնում մեզ հետ համագործակցող կառուցապատողների ցանցը: 2019թ.-ին վերջի դրությամբ մենք համագործակցում ենք 27 կառուցապատողի հետ: Տվյալ կառուցապատողներից բնակարան ճեղք բերել ցանկացողները կարող են ստանալ վարկ ընդամենը 10% կանխավճարով՝ պարզեցված ընթացակարգով, առանց գրավի գնահատման անհրաժեշտության: Դրա փոխարեն բանկը հիմք է ընդունում կառուցապատողի կողմից տրված գրավոր տեղեկանքը գնի մասին: Այս տարրերակը մեզ հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով կառավարել հաճախորդների մեծ ներհոսքը՝ միաժամանակ ավելացնելով հիփոթեքային վարկավորման պորտֆելը:

Թվային էկոհամակարգերի նախաձեռնության շրջանակներում մենք գործարկեցինք հիփոթեքային վարկավորման հարթակը (<https://estate.ameriabank.am/home>), որտեղ ներկայացված են մեզ հետ համագործակցող կառուցապատողների առաջարկները: Այստեղ հաճախորդները կարող են անշարժ գույք վնասություն մի շաբթ չափանիշներով՝ ամսական վճար, տարածք, ընդհանուր գին և այլն: Հատուկ հաշվին օգնում է հաճախորդներին հաշվարկել, թե ինչ գումարի վարկի համար նրանք կարող են դիմել, կամ հաշվարկել ամսական մարումների գումարը գույքի գնի, կամխավճարի չափի և այլ պայմանների հիման վրա: Հարթակի միջոցով հաճախորդները կարող են նաև ներկայացնել իրենց հայտերը և հարցերը: Որպես հիփոթեքային (<https://estate.ameriabank.am/home>) վարկավորման վարգացման հաջորդ քայլ մենք նախատեսում ենք վարկերի տրամադրումն առանց բանկ այցելելու անհրաժեշտության:

ԲԻԶՆԵՍ ԲԱՆԿԻՆ

Կառուցվածքի առումով, գերփոքք (միկրո) և փոքր ձեղնարկություններին սպասարկում է մեր մանրածախ բանկային գործառնությունների դեպարտամենտը՝ տրամադրելով մինչև 150 մլն ՀՀ դրամ ֆինանսավորման սահմանաչափ: Գնահատման գործընթացը ներառում է 4 տարբեր սցենար՝ կախված վարկի գումարից և տեսակից:

Թվայնացման ռազմավարության շրջանակներում 2019թ.-ին մենք ամբողջովին ավտոմատացրինք վարկային հայտի ներկայացման և հաստատման գործընթացը՝ բավարարելով հաճախորդների արագ աճող պահանջները:

2019թ.-ի դեկտեմբերին մենք նաև ներկայացրինք աննախադեպ վարկային արողություն, որտեղ վարկային մասնագետը կարող է իրականացնել վերլուծությունը պյանչետի միջոցով և տրամադրել մինչև 20 մլն ՀՀ դրամ վարկ անմիջապես հաճախորդի գործունեության վայրում:

Արդյունքում, գրեթե մեկ ամսում պյանչետների միջոցով մենք տրամադրեցինք 708 մլն ՀՀ դրամի վարկեր, ինչը կազմում է դեկտեմբերին ձևավորված ընդհանուր մանրածախ վարկային պորտֆելի 25%-ը: 2019թ.-ին մենք ներդրեցինք արևային ջրատարացուցիչ համակարգերի ձեռքբերման վարկեր տարվա ընթացքում տրամադրելով 500 մլն ՀՀ դրամի վարկ այդ նպատակի համար: Բանկը նաև սկսեց տրամադրել գյուղատնտեսական վարկեր և միացավ պետության կողմից սուրսիդավորվող ծրագրերին:

Մինչև 30 մլն ՀՀ դրամի վարկերը տրամադրվում են ավտոմատացված սքորինգային հարթակի միջոցով, որն անսախադեպ է ՀՀ բանկային համակարգում:

Մենք բարեկալվեցինք սքորինգային ՓՄՁ վարկերի պայմանները՝ ավելի շահավետ դարձնելով դրանք հաճախորդների համար: 2019թ.-ին մենք տրամադրեցինք շուրջ 1300 ՓՄՁ վարկ՝ 3.1 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով, ինչը կազմում է 2019թ. տրամադրված վարկերի ընդհանուր թվի 52%-ը և ընդհանուր ծավալի 22%-ը:

Հաճախորդակենտրոն էկոհամակարգերի մշակումը մեր թվային օրակարգի գերակա խնդիրներից է: Մենք ներդրեցինք Բիզնես վարկերի օնլայն հարթակ (<https://sme.ameriabank.am/>) ՓՄՁ-ների համար նախատեսված էկոհամակարգ, որտեղ հաճախորդները կարող են ստանալ համապարփակ տեղեկատվություն փոքք և գերփոքք ձեղնարկությունների համար բիզնես վարկերի մասին և առցանց դիմել վարկի համար:


Առցանց ներկայացված վարկային հայտերը 2019թ. կազմեցին ընդհանուր վարկային հայտերի 45%-ը:



ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌԱՆԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2019թ. հիմնական ցուցանիշները



Կորպորատիվ վարկերի
մասնաբաժինն ընդհանուր
համախառն պորտֆելում

Կորպորատիվ ավանդների
և պարտատոմսերի
մասնաբաժինն ընդհանուր
պորտֆելում

Գործառնական
շահույթ
հազար ՀՀ դրամ

2018
16,216,859

2019
18,541,699

14.3%
տարեկան աճ

Ընդհանուր ակնարկ

Արդեն մի քանի տարի է, ինչ Ամերիաբանկն առաջատարն է հայկական շուկայում՝ որպես կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայություններ մատուցող ընկերություն։ Ի սկզբանե դիրքավորվելով որպես կորպորատիվ և ներդրումային բանկ սահմանափակ մանրածախ բանկային գործառնություններով՝ Ամերիաբանկն ունի կորպորատիվ հատվածի խորը իմացություն և փորձ սպասարկելով խոշորագույն կորպորատիվ հաճախորդների և ֆինանսավորելով ռազմավարական նշանակության ամենախոշոր ծրագրերը։ Թես վերջին տարիներին մենք անցանք ունիվերսալ բանկային մոդելի՝ առավելագույն կենտրոնանալով մանրածախ բանկային գործառնությունների վրա, կորպորատիվ բանկային ուղղությունը շարունակում է մնալ մեր մրցակցային առավելությունը, և մենք ձգտում ենք պահպանել մեր առաջատար դիրքն այս բնագավառում։

2019թ.-ին մենք իրականացրինք ռազմավարական փոխենություն՝ միավորելով մեր կորպորատիվ բանկային ուղղությունը ներդրումաբանկային ուղղության հետ և ձևավորելով կորպորատիվ և ներդրումային բանկային գործառնությունների մեկ դեպարտամենտ։ Խորհրդատվական հենքի վրա կառուցված այս բիզնես մոդելը մեկ հնարավորություն կտա անհատականացված լուծումներ առաջարկել յուրաքանչյուր հաճախորդի օպտիմալացմելով նրանց ֆինանսական վիճակը և կապիտալի կառուցվածքը։ Մենք նաև տնտեսության յուրաքանչյուր խոշոր ճյուղի համար առանձնացրել ենք հատուկ մասնագիտացած թիմեր, որոնք բաղկացած են համապատասխան ոլորտների խոր գիտելիք և փորձ ունեցող բարձակարգ մասնագետներից։

Առաջնորդվելով բանկի ռազմավարությամբ և միջնաժամկետ նպատակներով՝ մենք ձգտում ենք պահպանել առաջատար դիրքը կորպորատիվ և ներդրումային բանկային գործառնությունների ոլորտում՝ հետագա ուշադրությունը դարձնելով կորպորատիվ բանկային պորտֆելի դիվերսիֆիկացմանը և կենտրոնացման մակարդակի իջեցմանը։ Մեր միջնաժամկետ առաջնային նպատակներից կլինի ՓՄՁ վարկերի և առևտրային ֆինանսավորման գործիքների ավելացումն ընդհանուր պորտֆելում, ինչպես նաև ավելի բարձր ոչ տոկոսային եկամտի ապահովումը գործառնական եկամտում։

Կորպորատիվ համախառն վարկային պորտֆելի կառուցվածքը (համախառն)

2019 Խոշոր վարկեր	2019 ՓՄՁ	2019 Ֆակտորինգ	2019 Լիզինգ	2019 Դեբիտորական պարտքեր առևտորի ֆինանսավորումից
322.1 մլրդ ՀՀ դրամ	77.7 մլրդ ՀՀ դրամ	10.7 մլրդ ՀՀ դրամ	5.9 մլրդ ՀՀ դրամ	5.1 մլրդ ՀՀ դրամ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոշոր ձեռնարկությունների վարկավորում

2019թ. հիմնական ցուցանիշները

- Խոշոր ձեռնարկությունների վարկավորման ընդհանուր համախառն պորտֆել՝ 322.1 մլրդ ՀՀ դրամ
- Խոշոր ձեռնարկությունների մասնաբաժինն ընդհանուր կորպորատիվ համախառն վարկային պորտֆելում՝ 76%
- Խոշոր ձեռնարկությունների մասնաբաժինն ընդհանուր համախառն վարկային պորտֆելում՝ 54%

2019թ.-ի ընթացքում բանկը պահպանեց կորպորատիվ վարկավորման ոլորտում առաջատարի իր դիրքը: Բանկը շարունակում էր վարել ապակենորդուացման քաղաքականությունը փոքր և միջին ձեռնարկությունների մասնաբաժինը վարկային պորտֆելում ավելացնելու նպատակով՝ միևնույն ժամանակ շարունակելով ֆինանսավորել տնտեսական նշանակության խոշոր ծրագրեր: Դրանց շարքում էր Լոնդոնի ֆունդային բորսայում ցուցակված «Զարդարան Գոլդ Հոլդինգ» ընկերության կողմից 55 մլն ԱՄՆ դոլարով կապանի լեռնահարստացման կոմբինատի 100% բաժնետոմսերի ձեռքբերումը: Գործարքների հրականացվել են Ամերիաբանկի կողմից հայաստանյան երկու գործընկեր բանկերի հետ համատեղ համախմբելով 40 մլն ԱՄՆ դոլարի վարկային ռեսուրս, որից 32 մլն ԱՄՆ դոլարն ապահովվել են Ամերիաբանկի կողմից:

Բանկը նաև շարունակել է հանդես գալ որպես հայաստանյան համավարկատու 2019թ.Հայաստանում իրականացվող բիզնեսի ֆինանսավորման խոշոր միջազգային ծրագրերի շրջանակներում: 2019թ.-ին միշտ նմանատիպ ծրագրեր իրականացվեցին Էներգետիկայի և գյուղատնտեսության ոլորտներում:

Կորպորատիվ ՓՄՁ վարկավորում

2019թ. հիմնական ցուցանիշները

- Կորպորատիվ ՓՄՁ վարկավորման ընդհանուր պորտֆել՝ 77.7 մլրդ ՀՀ դրամ
- Կորպորատիվ ՓՄՁ վարկավորման մասնաբաժինն ընդհանուր համախառն վարկային պորտֆելում՝ 13%
- Կորպորատիվ ՓՄՁ վարկավորման մասնաբաժինն ընդհանուր կորպորատիվ համախառն վարկային պորտֆելում՝ 18%

Հետևելով կենտրոնացումը նվազեցնելու և ՓՄՁ վարկավորման վրա կենտրոնանալու իր ռավմաքարական նպատակին՝ բանկը շարունակեց ընդլայնել ՓՄՁ վարկավորման աշխարհագրական ծածկույթը և սեպմենտները առաջարկելով ֆինանսավորման նոր և մրցունակ պրոդուկտներ:

2019թ.-ին ՓՄՁ պորտֆելը գրանցեց զգալի բարելավում թե՛ ծավալի, թե՛ որակի առումով:

ՓՄՁ վարկավորման ուղղված նպատակային քաղաքականության արդյունքում ՓՄՁ վարկավորման մասնաբաժինը բանկի ընդհանուր կորպորատիվ պորտֆելում կազմեց 18%: Աճին մեծ մասամբ նպատեց նորարարական և կանաչ ծրագրերի (արևային և հողմային կայաններ և այլն) վարկավորումը մրցակցային պայմաններով, ինչպես նաև որակյալ սպասարկումը:

ՓՄՁ ֆինանսավորումն ուղղված է ՀՀ տնտեսության հիմնական վարգացող ճյուղերին՝ էներգետիկային, գյուղատնտեսությանը, շինարարությանը, գրոսաշրջությանը և այլ ոլորտներին: 2019թ.-ին Բանկի առանձնակի ուշադրությանն արժանացան հատկապես էներգաարդյունավետության և էներգախնայողության ոլորտի ծրագրերը, որոնց իրականացման համար բանկը ֆինանսավորում տրամադրեց ամենաշահավետ պայմաններով: Ամրապնդելով համագործակցությունը մեր գործընկեր ՄՖԿ-ների հետ մենք մի շարք նախագծեր իրականացրինք, կանաչ տնտեսության և վարկավորուման ծրագրերի շրջանակներում:

2019թ. մենք ներդրեցինք ՓՄՁ վարկավորման և օվերդրաֆտների ֆինանսավորման օլլայն հարթակ, որը մեր հաճախորդներին հնարավորություն է ընձեռում յուրորդնակ պարզեցված ընթացակարգով դիմել վարկի համար, ինչպես նաև թույլ է տալիս թվային ուղիների միջոցով ներգրավել նոր հաճախորդների: Սա բիւնեսի վարկավորման թվայնացման միայն առաջին փուլն է. առաջիկա տարիներին մենք նախատեսում ենք ընդլայնել այս նախագիծը:

Լիվինգ

2019թ. հիմնական ցուցանիշները

- Լիվինգի ընդհանուր պորտֆելը՝ 5.9 մլրդ ՀՀ դրամ
- Լիվինգի պորտֆելի տարեկան աճ՝ 156.6%
- Հաճախորդների թվի տարեկան աճ՝ 137%

2019 թվականն առանձնահատուկ էր հատկապես Ամերիաբանկի լիվինգի բաժնի համար, որը ցուցաբերեց տպավորիչ արդյունքներ և բարձրացրեց արդյունավետությունը ներգրավելով նոր հաճախորդներ, մշակելով նոր արողություններ և ընդլայնելով մատակարարների ցանցը: Մեր լիվինգային ռազմավարության հիմնական նպատակն էր ընդլայնել լիվինգի պորտֆելի շրջանակը՝ լիվինգի մասին իրավելվածությունը բարձրացնելու և լիվինգի ենթատեսակների առավելությունները շեշտելու միջոցով, ինչի շորհիվ մենք կարողացանք ամրապնդել մեր դիրքը շուկայում՝ տարեվերջին գրանցելով լիվինգային պորտֆելի 156.6 % տարեկան աճ:

Ամերիաբանկի լիվինգի բաժնն սպասարկում է ինչպես խոշոր կորպորատիվ հաճախորդներին, այնպես էլ ՓՄՁ-ներին՝ տրամադրելով համապարփակ և հաճախորդի կարիքներին հարմարեցված լիվինգային լուծումներ, ինչպես նաև խորհրդատվական ծառայություններ: Ամերիաբանկը համագործակցում է թե տեղական, թե օտարերեկյա ընկերությունների հետ: Զգելով կառուցել և ամրապնդել կայուն և փոխշահավետ գործընկերական հարաբերություններ մենք կրկնակի ընդլայնեցինք մեր համագործակցության ցանցը՝ մատակար կավմակերպություններին առաջարկելով տարաբնույթ խթանող ֆինանսական գործարքներ և արշավեր:

2019 թվականը հատկանշական էր նաև լիվինգային նոր ենթապրոդուկտների ներդրման տեսանկյունից: Դրանք մշակվել են հաճախորդների կարիքների և շուկայի միտումների հիման վրա: Դրանք են, մասնավորապես, էքսպրես լիվինգը, Օլինքլիվինգը, արևային լիվինգը և այլ ծառայությունները: Խթանելով արևային էլեկտրոնակայանների ֆինանսավորումը 2019թ.-ին, Արևային լիվինգը ծառայության շրջանակներում Ամերիաբանկը ֆինանսավորեց ավելի քան 50 արևային ծրագիր 3.5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Նախագիծն իրականացվում էր ՎՃԲ-ի կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագրի շրջանակներում:

Ամերիաբանկն ակտիվորեն կիրառում է նաև պետական ծրագրերը: Ամերիաբանկի՝ ՀՀ Ազդուարենային ոլորտի սարքավորումների լիցինգի պետական աջակցությունը ծրագրի շրջանակներում տրամադրված լիցինգի պորտֆելը 2019թ.-ին կազմեց 455 մլն ՀՀ դրամ: Ծրագրի նպատակն էր խթանել գյուղատնտեսական արդյունաբերությունը՝ ընկերությունների տոկոսային ծախսերի սուբսիդավորման միջոցով: Մինչև մայիս ամսանակ, ձգտելով աջակցել շրջակա միջավայրի պահպանմանը մենք ֆինանսավորում ենք տրամադրում նաև Էներգաարդյունավետ սարքավորումների ձեռքբերման նպատակով:

Ֆակտորինգ

2019թ. հիմնական ցուցանիշները

- Ֆակտորինգի ընդհանուր պորտֆել՝ 10.7 մլրդ ՀՀ դրամ
- Գործարքների թիվը՝ 464

Բանկի ֆակտորինգի պորտֆելում ներկայացված են հիմնականում հետևյալ ոլորտները՝ Էներգետիկան, շինարարությունը, տրանսպորտը, առևտուրը, հանրային ծառայությունները և այլն: Ֆակտորինգի շրջանակներում հաճախորդներն իրենց դեբիտորական պարտքը վիճում են բանկին վեղչված գնով՝ փոխարենս անմիջապես ստանալով դրամական փոխհատուցում, ինչը նրանց թույլ է տալիս անխոչնդուտ իրականացնել կազմակերպության բնականոն ֆինանսական գործունեությունը և ընդլայնել արտադրության ծավալը:

Գործարքների վգալի մասը բաժին է ընկնում արտահանման ֆակտորինգին, թեև տեղական ֆակտորինգը նույնական ակտիվ պահանջարկ ունի հաճախորդների շրջանում: Արտահանման ֆակտորինգի շրջանակներում Ամերիաբանկը շարունակում է համագործակցել Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության հետ, ինչն արտահանողներին ընձեռել է արտասահմանյան գործընկերների հետ ֆինանսական տեսանկյունից ավելի արդյունավետ և վստահելի հարաբերություններ կառուցելու ավելի մեծ հնարավորություններ:

2019թ.-ին ավելացավ ֆակտորինգային գործառնություններից օգտվող հաճախորդների թիվը: Որպես ձևուն ֆինանսական գործիք ֆակտորինգն ապահովում է ֆինանսավորում շուկայի այն մասնակիցների համար, որոնց անհրաժեշտ է համարության շրջանառու և դրամական միջոցներն իրենց բնականու գործունեության ընթացքում: Ֆակտորինգի մեկ այլ առավելությունն այն է, որ այն թույլ է տալիս հաճախորդներին աշխատել իրենց գործընկերների հետ տարածամկետ վճարման պայմաններով դրանով հսկ բարձրացնելով սեփական վարկարժանությունը:

Առևտորի ֆինանսավորում

2019թ. հիմնական ցուցանիշները



- Կովկասում և Կենտրոնական Ասիայում 2019թ. լավագույն թողարկող բանկ
- Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում սարքավորումների ֆինանսավորման գծով 2019թ. լավագույն գործընկեր-բանկ



2019թ. լավագույն գործընկեր բանկ Հայաստանում



European Bank
for Reconstruction and Development

2018թ. ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում

2019թ.-ին Ամերիաբանկը պահպանեց առաջատարի իր դիրքն առևտուի ֆինանսավորման շուկայում՝ և մեկ անգամ ապացուցելով, որ վստահելի և դիմամիկ գործընկեր է առևտուի ֆինանսավորման ոլորտում:

2019թ.-ին Բանկի գերակա խնդիրներից էր դիվերսիֆիկացիան տնտեսության աճող ոլորտներում: Մասնավորապես, հիմնական ուշադրության կենտրոնում էին արտադրությունը, էներգետիկան, հանքարդյունաբերությունը, ՏՏ ոլորտը, շինարարությունը, առողջապահությունը և ապրանքները:

Ամերիաբանկս ակտիվութեն մասնակցում է բոլոր խոշոր միջազգային ֆինանսական հաստատությունների՝ ՎԶԵԲ-ի, ՄՖԿ-ի, ԱԶԲ-ի առևտուի ֆինանսավորման ծրագրերին: Հատկանշական է, որ Ամերիաբանկը ոչ միայն արժանացել է թողարկող բանկի կարգավիճակին նշված կազմակերպությունների կողմից, այլև առաջին հայկական բանկն է, որն ստացել է հաստատող բանկի կարգավիճակ ՎԶԵԲ-ի առևտուի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում (2013թ.), իսկ 2018թ.՝ նաև ԱԶԲ-ի առևտուի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում: Ընորիհիվ առևտուի ֆինանսավորման վարգացման համար նշված միջազգային ֆինանսական կազմակերպություններից և գործընկեր առևտույին բանկերից ստացված խոշոր վարկային սահմանաչափերի Ամերիաբանկն իր հաճախորդներին տրամադրել է բնականոն աշխատանքն ու բիզնեսի վարգացումն ապահովող լավագույն լուծումները:

2019թ.-ին Բանկը ֆինանսավորում էր առևտուրն տեղական ու միջազգային վճարային գործիքների թողարկման, արտահանման/ներմուծման գործառնությունների սպասարկման, միջազգային բանկերից ուսուլների ներգրավման և հայրենական արտադրողների արտահանման և ներմուծման գործառնությունների ուղղակի ֆինանսավորման միջոցով: Մասնավորապես, առևտուի ֆինանսավորման նպատակով՝ Ամերիաբանկի կողմից միջազգային ֆինանսական կազմակերպություններից և գործընկեր բանկերից ներգրավված ֆինանսավորումը 2019թ. գերազանցեց 38.2 մլրդ ՀՀ դրամը:

Հաճախորդների հետ սերտ համագործակցության արդյունքում բանկը կարողանում է հիմնավորված խորհրդատվություն և հաճախորդի ֆինանսական կարիքներից բխող նորարար ֆինանսական լուծումներ առաջարկել: 2019թ. Ամերիաբանկի կողմից թողարկված ակրետիտիվների և երաշխիքների ծավալը գերազանցեց 28.4 մլրդ ՀՀ դրամ՝ գրանցելով 27% աճ նախորդ տարվա համեմատ:

2019թ.-ին գործընկեր բանկերի լայն ցանցի և փորձառու թիմի ջանքերի շնորհիվ Ամերիաբանկը հիմնավորություն ընձեռեց հայ արտահանողներին ընդլայնել իրենց ապրանքների և ծառայությունների աշխարհագործական ծածկույթը դրանք ներկայացնելով նոր շուկաներում, մուտքը որոնք անսպասելի էր թե հեռավորության, թե նախկին տնտեսական հարաբերությունների բացակայության պատճառով:

Տարիներ շարունակ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից շնորհվող բազմաթիվ մրցանակները նոյնական վկայում են առևտուի ֆինանսավորման ոլորտում Ամերիաբանկի առաջատար դիրքի մասին: Մասնավորապես, մենք արժանացել ենք հետևյալ մրցանակներին՝ ՎԶԵԲ՝ «Հայաստանում ամենաակտիվ թողարկող բանկ», ՄՖԿ՝ «Կովկասյան տարածաշրջանում առևտուի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում ամենաակտիվ թողարկող բանկ», ՎԶԵԲ՝ «Տարվա լավագույն գործարք»՝ Հայաստանում նոր սերնդի օպտիկամակրածելային ցանցի և «Տարվա լավագույն գործարք Էներգախնայողության ոլորտում»՝ Էներգաարդյունավետ շերմոցների կառուցումը ֆինանսավորելու համար, ՄՖԿ՝ «Լավագույն թողարկող բանկ առևտուի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում Էներգիայի արդյունավետ օգտագործման նախագծերում»:

2019թ.-ին Ամերիաբանկն արժանացավ 4 նոր մրցանակի, որոնցից երկուար բանկին շնորհվեցին ՄՖԿ-ի կողմից: Դրանք են՝ «Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում սարքավորումների ֆինանսավորման գծով 2019թ. լավագույն գործընկեր-բանկ» մրցանակը, որը 2019թ.-ին շնորհվում էր առաջին անգամ, և «Կովկասում և Կենտրոնական Ասիայում 2019թ. լավագույն թողարկող բանկ» մրցանակը, որին Ամերիաբանկն արժանացավ երկրորդ տարին անընդմեջ: Ամերիաբանկը նաև ճանաչվեց «Լավագույն գործընկեր բանկը Հայաստանում» Ասիական վարգացման բանկի կողմից և «Ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում» ՎԶԵԲ-ի կողմից:

Ճկունության, սպասարկման բարձր որակի և Հայաստանում իրականացվող կարևոր ծրագրերի մեծամասնությանը մասնակցելու շնորհիվ Ամերիաբանկը կայուն համագործակցություն է հաստատել մի շարք միջազգային բանկերի հետ, ինչպիսիք են Յոնիկուրենտիտը, Սիթիբանկը, Քեյ-Բի-Սի Բանկը, Banca Popolare Di Sondrio, և այլն:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների և առևտույին բանկերի կողմից Ամերիաբանկի համար բացված հասանելի ֆինանսավորման ընդհանուր սահմանաչափը 2019թ.-ի վերջում գերազանցում էր 80 մլրդ ՀՀ դրամը:

2020թ.-ին առևտուի ֆինանսավորման ռազմավարությամբ նախատեսված է հաճախորդների բազայի հետագա դիվերսիֆիկացումը, շարունակական աջակցություն մեր հաճախորդներին իրենց գործունեության ընդլայնման հավակնութ ծրագրերի իրականացման գործում, սպասարկման որակի բարելավումը և գործընկեր բանկերի ցանցի ընդլայնումը: 2020թ.-ին Ամերիաբանկը մտադիր է

շարունակել նախորդ տարիներին ընդունված մոտեցումների կիրառումը՝ հասուկ ուշադրություն դարձնելով հետևյալ ոլորտներին.

- Կանաչ ծրագրեր
- Էներգաարդյունավետ ծրագրեր
- Ծրագրեր կանաց ակտիվ մասնակցությամբ
- Արևային էներգիայի ծրագրեր

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2019թ. հիմնական ձեռքբերումները

- Թիվ մեկ տեղաբաշխող՝ 11 տեղաբաշխում՝ 116.5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով
- Հայաստանի պարտքային կապիտալի շուկայում ամենախոշոր ծրագրի իրականացում՝ ԶՊՄԿ 50 մլն ԱՄՆ դոլարի պարտատոմսերի ծրագիր
- Պարտատոմսերի խոշորագույն թողարկող ՀՀ շուկայում՝ 22.3% շուկայի մասնաբաժին
- Անշարժ գույքի ձեռքբերման խոշորագույն գործարքներից մեկը Հայաստանում՝ «ԿԱՄԱՐ ԲԿ» ծրագիր

Ընդհանուր ակնարկ

Ամերիաբանկը ներդրումային բանկային ծառայություններ մատուցող առաջին ընկերություններից է Հայաստանում: Իր անսախաղեաւ և շրջադարձային գործարքներով Ամերիաբանկը պահպանում է առաջատար դիրքը միաժամանակ մեծ ներդրում ունենալով Հայաստանի զարգացող ֆինանսական շուկայի կայացման գործում: Ամերիաբանկը առաջարկում է ներդրումային բանկային ծառայությունների և լրիումների լայն շրջանակ, ինչպես, օրինակ, կորպորատիվ ֆինանսների, կապիտալի շուկաների, միաձուլումների և ձեռքբերումների ծառայություններ:

Ամերիաբանկի ներդրումային բանկային պրոդուկտները և ծառայությունները տրամադրվում են հետևյալ բիզնես ուղղությունների միջոցով.



Միաձուլումներ և ձեռքբերումներ

- Խորհրդատվություն գնորդին
- Խորհրդատվություն վաճառողին
- Գնահատումներ



Կապիտալի շուկաներ

- Պարտքային ֆինանսավորման ներգրավում կապիտալի հանրային շուկաներում
- Բաժնեմասային ֆինանսավորման ներգրավում կապիտալի հանրային շուկաներում
- IPO խորհրդատվություն



Կորպորատիվ ֆինանսներ

- Պարտքային ֆինանսավորման ներգրավում կապիտալի ոչ հանրային շուկաներում
- Բաժնեմասային կապիտալի ոչ հանրային շուկաներում
- Վարկանիշավորման խորհրդատվություն

Միաձուլումներ և ձեռքբերումներ

Միաձուլումների և ձեռքբերումների մեր ծառայություններն օգնում են հաճախորդներին իրազործել իրենց նպատակները միաձուլումների և ձեռքբերումների ցանկացած գործարքում՝ հայաստական թե արտասահմանական, փակ (մասնավոր) թե բաց (ցուցակված) ընկերությունների մասնակցությամբ։ Մեր ծառայություններն են։

- պոտենցիալ ներդրողի կամ թիրախային ընկերության որոնում, փաստաթղթերի պատրաստում (տեղեկատվական նախնական հուշագիր, տեղեկատվական հուշագիր)
- գործարքի ռազմավարության մշակում, բանակցությունների վարում և գործընթացի վերաբերյալ խորհրդատվություն
- աջակցություն ֆինանսական և իրավաբանական ստուգումների կազմակերպման, հաշվետվությունների կազմման և ներկայացման գործընթացներում
- գործարար ծրագրի մշակում, ֆինանսական մորելավորում և զգայունության վերլուծություն բիզնեսի արժեքի և սիներգետիկ արդյունքի գնահատման հաշվետվությունների պատրաստում աջակցություն գործարքի իրականացման գործում, ներառյալ。
 - Աջակցություն գործարքների կնքման ընթացքում, այդ թվում՝ վարկի ստացման և փոխառու միջոցների հաշվին բաժնետոմսերի գնման կազմակերպում
 - Գործարքի կառուցվածքի և վճարման կարգի սահմանում, սեփականատիրական կառուցվածքի փոփոխություն, աջակցություն ընկերությունների և իրավունքների գրանցման/վերագրանցման հետ կապված հարցերում
 - Խորհրդատվություն պետական մարմինների (Տնտեսական մրցակցության
- պաշտպանության պետական հանձնաժողով, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով) կողմից հակամենաշնորհային թույլտվությունների ստացման հետ կայված հարցերում իրավաբանական փաստաթղթերի պատրաստում (Մտադրությունների մասիննամակ, գաղտնիության համաձայնագիր, նախնական պայմանների վերաբերյալ համաձայնագիր, բաժնետոմսերի առողջապահության պայմանագիր, բաժնետերերի միջև համաձայնագիր) և աջակցություն բանակցային գործընթացում
- հետգործադրային ուսումնասիրություններ և վերլուծություն

Գնահատումներ. Մենք առաջարկում ենք հետևյալ գնահատման ծառայությունները.

- Բիզնեսի/կապիտալի գնահատման հաշվետվության պատրաստում՝ արժեքի մասին համապարփակ եկորակացությամբ
- Բիզնեսի/կապիտալի գնահատման հաշվետվության պատրաստում՝ արժեքի հաշվարկմամբ
- Բիզնեսի/կապիտալի գնահատման հաշվետվությամբ սահմանված արժեքի ճշտության վերաբերյալ եկորակացությունների տրամադրում

Վերջին տարիներին Ամերիաբանկը միաձուլումների և ձեռքբերումների ծառայությունների գծով ներգրավել է ավելի շատ հաճախորդ, քան իր մրցակիցներից որևէ մեկը։ Մենք ունենք միաձուլումների և ձեռքբերումների գործարքների ամենալայն պորտֆելը, որն ընդգրկում է այնպիսի ոլորտները, ինչպիսիք են՝ առևտորային անշարժ գույքը, հյուրանոցային, տեղեկատվական, հեռահաղորդակցման, ՏՏ ոլորտներ և հանքարդյունաբերություն։ Ամերիաբանկը ճանաչված է տեղական շուկայում տեղի ունեցած գործեթե բոլոր խոշոր միաձուլումների և ձեռքբերումների գործարքներում իր մասնակցության համար։

2019թ. հիմնական ձեռքբերումները

2019թ.-ին Բանկն ամրապնդեց առաջատարի իր դիրքը շուկայում՝ կնքելով ՀՀ պատմության մեջ անշարժ գույքի շուկայում խոշորագույն գործադրներից մեկը՝ Կամարտ բիզնես-կենտրոնի վաճառքը: «Կամար» բիզնես-կենտրոնն առաջին «կանաչ» շենքն է Երևանում և առանձնանում է իր բարձր որակով և եկակի դիզայնով: Մեր թիմի մանրավիշն աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ 42 մլն ԱՄՆ դոլար գնահատված արժեքով բիզնես-կենտրոնի համար կարճ ժամկետներում ներգրավել ներդրողների և կնքել փոխշահավետ գործարք:



2018թ.-ի վերջից մինչև 2019թ.-ի սկիզբը միաձուլումների և ձեռքբերումների գծով մեր թիմը խորհրդատվություն էր տրամադրում Լոնդոնի ֆոնդային բորսայում ցուցակված «Չարաս Գոլդ Հոլդինգ» ընկերությանը Կապանի լեռնահարստացման կոմբինատի բաժնետոմսերի 100% առքուվաճառքի կապակցությամբ և կորպորատիվ ֆինանսների թիմի աջակցությամբ կազմակերպեց 40 մլն ԱՄՆ դոլարի վարկային միջոցների ներգրավում Չարասի համար:

Կապիտալի շուկաներ

Հանդիսանալով տեղական կապիտալի շուկայի առաջատար՝ Ամերիաբանկն առաջարկում է ծառայությունների ամբողջական փաթեթ պարտքային և փայտափական կապիտալի շուկաներում պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման կազմակերպությունը՝ մինչև երկրորդային շուկայում իրացվելիության ապահովում (մարդեթ մեջինգ): Հանդիսանալով կապիտալի ներգրավման մեր ծառայությունները ներառում են:

- Համապարփակ ստորգում նախքան առաջնային տեղաբաշխումը և խորհրդատվություն առաջնային տեղաբաշխման վերաբերյալ,
- Խորհրդատվություն կորպորատիվ կառավարման ոլորտում և աջակցություն հաշվետու թողարկողի հաշվետվությունների պատրաստման հարցում,
- Աջակցություն հուշագրի պատրաստման և ներկայացման հարցում,
- Արժեթղթերի տեղաբաշխում,
- Շուկայի ստեղծման ծառայություններ

Ամերիաբանկը ներդրումաբանկային ծառայություններ մատուցող միակ ընկերությունն է շուկայում, որը ունի կապիտալի շուկաների առանձին թիմ: Դա մեծ մրցակցային առավելություն է, որը մեզ թույլ է տալիս ապահովել ծառայությունների բարձր որակ՝ արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման գործընթացը սեփական ուժերի հաշվին կազմակերպելու միջոցով:

2019թ. հիմնական ձեռքբերումները

2019 թվականն իսկապես բացարիկ տարի էր կապիտալի շուկաների մեր ստորաբաժանման համար, որը 2019թ.-ին հաջողությամբ նախաձեռնեց պարտքային կապիտալի շուկայում պարտատոմսերի տեղաբաշխման 11 ծրագիր, մասնավորապես.

- Հայաստանում խոշորագույն հանքարդյունաբերական ընկերության և հարկատուի՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ պարտատոմսերի երկու տեղաբաշխումների կազմակերպումը 55 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով,
- Հայաստանում խոշորագույն գյուղատնտեսական ընկերության՝ «Սպայկա» ՍՊԸ պարտատոմսերի երեք տեղաբաշխումների կազմակերպումը 10.5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով,
- Ամերիաբանկի պարտատոմսերի վեց թողարկումների և տեղաբաշխումների կազմակերպումը 51 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով:

Պարտատոմսերի վեց նոր թողարկումների շնորհիվ Ամերիաբանկը պահպանեց իր առաջատար դիրքը ՀՀ շուկայում՝ որպես թողարկող պահովելով 104 մլն ԱՄՆ դոլարի տեղաբաշխված պարտատոմսերի պորտֆել և 24% շուկայի մասնաբաժին:



«Զանգեպուրի պահանջմունքների կոմբինատ» ՓԲԸ-ի (ԶՊՄԿ) պարտատոմսերի տեղաբաշխումն անևախադեպ գործարք էր Հայաստանի կապիտալի շուկայում և պատմականորեն նման տեսակի խոշորագույն տեղաբաշխումը Հայաստանում: ԶՊՄԿ-ն Հայաստանի ամենամեծ հանքարդյունաբերական ընկերությունն է, որը շահագործում է Քաջարավանի հանքավայրը. Վերջինս իր պղնձի և մոլիբդենի պաշարներով խոշորագույնն է Հարավային Կովկասում: Ընկերությունը մեծ նշանակություն ունի Երկրի տնտեսության համար և մեծ ներդրում Հայաստանի ՀՀԱ-ում, ինչի շնորհիվ արագ վաստակեց ներդրողների վստահությունը: Ի լրումն դրան, Ամերիաբանկի վարկանիշավորման խորհրդատվության ծառայությունների աջակցության շնորհիվ ընկերությունը ստացավ B2 (կայուն հեռանկարով) վարկանիշ Moody's վարկանիշային գործակալության կողմից, ինչը նոյնպես վստահություն ներշնչող փաստ է:

Ծրագրի հաջողությունն ակնհայտ դարձավ հոկտեմբերի վերջին, եթե 50 մլն ԱՄՆ դոլարի և 2.5 մլրդ ՀՀ դրամի պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվեցին նախանշված ժամկետից 5 շաբաթ շուտ: Ներկայում ԶՊՄԿ պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայում ամենակտիվ շրջանառվող և ամենամեծ պահանջարկ ունեցող կորպորատիվ պարտատոմսերն են:



Ոչ պակաս նշանակության գործարք էր «Սպայկա» ՍՊԸ-ի համար պարտատոմսերի թողարկումը: Սպայկան վրայվում է գյուղատնտեսական արտադրությամբ և միջազգային առևտորով, ինչպես նաև միջազգային բեռնափոխադրումներով: Ընկերությունը տարածաշրջանի առաջատար գյուղատնտեսական հոլիճներն են, ինչպես նաև ամենախոշոր բեռնափոխադրող կազմակերպությունը: Պարտատոմսերը թողարկվեցին և տեղաբաշխվեցին երեք փուլով 600 մլն ՀՀ դրամ, 800 մլն ՀՀ դրամ և 7.6 մլն ԱՄՆ դոլար:

Կորպորատիվ ֆինանսներ

Ամերիաբանկի կորպորատիվ ֆինանսների ծառայությունն ապահովում է համապարփակ և համակարգված մոտեցում ծրագրերի և կառուցվածքային ֆինանսավորմանը, ներառյալ թե մասնավոր ֆինանսական նախաձեռնությունները և թե պետական մասնավոր գործընկերությունները: Մենք առաջարկում ենք փայատիրական և պարտքային ֆինանսավորման ներգրավման ծառայությունների ամբողջական փաթեթ, ներառյալ՝

- Հնարավոր վարկատունների/ներդրողների փնտրում (Հյայատանում ներդրումներ կատարելու ցանկացող միջազգային ներդրող/վարկատունների ընդարձակ տվյալների շտեմարանի առկայության շնորհիվ)
- Ծրագրի վերլուծություն և անհրաժեշտ շնորհանդեսային փաստաթղթերի պատրաստում
- Համապարփակ ուսումնասիրություն և իրավաբանական աջակցություն
- Նախնական համաձայնագրի պատրաստում և բանակցությունների վարում
- Վարկային պայմանագրերի/սինդիկացված վարկային պայմանագրերի/բաժնետոմսերի առջուվաճառքի պայմանագրերի պայմանների մշակում և համաձայնեցում
- Աջակցություն նախապայմանների սահմանման/ապահովման հարցում

Հիմնական ծառայություններին զուգահեռ կորպորատիվ ֆինանսների թիմը տրամադրում է նաև պարկանիշավորման խորհրդատվության ծառայություններ, ներառյալ.

- Նախնական բանակցություններ վարկանիշային գործակալությունների հետ
- Խորհրդատվություն վարկանիշային գործակալության ընտրության վերաբերյալ
- SWOT-վերլուծություն՝ համապատասխան մեթոդաբանությամբ
- Աջակցություն կառավարչական շնորհանդեսի պատրաստման և դեկավարության հանդիպման համար նախապատրաստման աշխատանքներում

Տարիների ընթացքում Ամերիաբանկի կորպորատիվ ֆինանսների բաժինը ձևավորել է բազմամյա արդյունավետ գործընկերական հարաբերություններ ամենաբարձր հեղինակություն և ճանաչում ունեցող ֆինանսական հաստատությունների հետ:

2019թ. հիմնական ձեռքբերումները

2019 թվականը մեկնարկեց Լոնդոնի ֆոնդային բորսայում ցուցակված «Չառարատ Գոլդ Հոլդինգս» ընկերության համար 55 մլն ԱՄՆ դոլարով Կապանի լեռնահարստացման կոմբինատի 100% բաժնետոմսերի ձեռքբերման վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների տրամադրմամբ: Սուաշին անգամ արտասահմանյան ռազմավարական ներդրողը ձեռք էր բերում հայկական հանքարդյունաբերական ընկերությունն երեք հայկական բանկերի կողմից միավորված ֆինանսավորման հաջվին: Առողջապահության ֆինանսավորումը կազմակերպվեց մեր կորպորատիվ ֆինանսների բաժնի կողմից և երկու հայկական բանկի կողմից միջոցների բարեհաջող ներգրավման շնորհիվ: Երեք բանկի կողմից տրամադրված ֆինանսավորման ընդհանուր ծավալը կազմեց 40 մլն ԱՄՆ դոլար, որից 32 մլն ԱՄՆ դոլարը տրամադրեց Ամերիաբանկը:



Եվս մեկ նշանակալի գործարք իրականացվեց կրկին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հետ, որի շրջանակներում ընկերությանը տրամադրվեցին վարկանիշավորման խորհրդատվության ծառայություններ: Դրա շնորհիվ ԶՊՄԿ-ին շնորհվեց B2 (կայուն հեռանկարով) վարկանիշ Moody's վարկանիշային գործակալության կողմից, ինչը հիմք դրեց ընկերության անգրավ պարտաստումների թողարկման համար: Ի դեպք, այս գործարքը նույնականացվեց է Ամերիաբանկի Շերդրումաբանկային դեպարտամենտի օգնությամբ և նպաստեց նրան, որ ԶՊՄԿ-ն դարձավ վարկանիշ ունեցող բանկ չհանդիսացող առաջին կորպորատիվ թողարկողը Հայաստանում:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌՆԵՐԻԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԵՎԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌԱՋՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական ձեռքբերումները

- ՀՀ պետական արժեթղթերի ամենախոշոր առաջնային դիլեր
- Արտարժույթի առաջատար փոխարկողը շուկայում
- Բրոքերային ծառայություններից օգտվող հաճախորդների աճ 28%-ով
- Բրոքերային ծառայությունների հասանելիություն 23 երկրում 100-ից ավելի մասնագիտացված հարթակում

2019թ.-ի արդյունքների համաձայն՝ Ամերիաբանկը շարունակում է մենալ շուկայի առաջատարը առևտրային գործառնությունների ոլորտում: 2019թ.-ին առևտրային գործառնություններից (արտարժույթ, ուկի և արժեթղթեր) և վերագնահատումից ստացված զուտ եկամուտն աճել է 32%-ով կազմելով բանկային համակարգի առևտրային գործառնություններից ստացված եկամտի ամբողջ 14%-ը:

2019թ.-ին ՀՀ արտարժութային շուկան համեմատաբար կայուն էր, փոխարժեների կտրուկ տատանումներ չեն արձանագրվել: Ամերիաբանկը պահպանեց առաջատար դիլը արձանագրելով հաճախորդների արտարժութային գործարքների աճ շուրջ 43%-ով: Բանկը շարունակում էր իր ռեվիվենտ և ոչ ռեվիվենտ հաճախորդներին առաջարկել արտարժութային պրոդուկտների և ծառայությունների լայն տեսականի, այդ թվում սփոյլ գործարքների և ածանցյալ գործիքների մեծ ընտրություն (ֆորվարդ, սվիֆ և այլն): 2019թ. բանկը նախաձեռնեց իր կորպորատիվ հաճախորդների համար չինական յուանի փոխարկման ծառայության ներդրումը, որը կգործի 2020թ. սկզբից:

Բանկը շարունակում էր ակտիվորեն մասնակցել ՀՀ և այլ երկրների եվրապարտասումների շուկայի գործունեությամբ և խոշորագույն մասնակիցներից մեկն էր նաև ՀՀ կորպորատիվ պարտասումներում իրականացված ներդրումների ծավալով: Բանկը երկրորդն էր ՀՀ պետական պարտասումներում կատարված ներդրումների ծավալով և պարտասումներից ստացված զուտ եկամտով, և առաջինը ՀՀ ֆինանսների նախարարության առաջնային դիլերների (գործակալների) մեջ:

Ոչ ռեվիվենտ ներդրողների համար բրոքերային հաշվի բացման պարզեցված ընթացակարգի, ծառայությունների ավելի լայն շրջանակի և խորհրդատավական ծառայությունների ներդրման շնորհիվ Ամերիաբանկի բրոքերային ծառայություններից օգտվող հաճախորդների թիվը հաշվետու տարում զգալի աճ է արձանագրել՝ 28%:

Ամերիաբանկի բրոքերային ծառայությունները հասանելի են 23 երկրի 100-ից ավելի մասնագիտացված առևտրային հարթակներում՝ հնարավորություն տալով իրականացնել տարատեսակ արժեթղթերի առքուվածառը և մշտակե տեղեկացված լինել ֆինանսական շուկայի զարգացումների մասին: Բացելով բրոքերային հաշվի Ամերիաբանկում՝ հաճախորդը ստանում է հասանելիություն աշխարհի ամենամեծ ֆոնդային բորսաներին, ինչպիսիք են՝ NYSE-ն, NASDAQ-ը, AMEX-ը, ARCA-ն, CBOT-ը և այլն (ԱՄՆ), Տորոնտոյի և Մոնրեալի ֆոնդային բորսաները (Կանադա), LSE-ն, LSE International Order Book-ը (Միացյալ Թագավորություն), Ֆրանկֆուրտի բորսան FWB (Գերմանիա), Վիեննայի բորսան VSE (Ավստրիա), Բրյուսելի Euronext բորսան, Nasdaq OMX Europe-ը (NUROEN) (Բելգիա), Euronext France-ը SBF (Ֆրանսիա), Շվեյցարիայի ֆոնդային բորսան SWX (Շվեյցարիա), Borsa Italiana-ն (Իտալիա), Մադրիդի բորսան (Իսպանիա), Տոկիոյի բորսան TSE JPN (Ճապոնիա), Հոնկոնգի բորսան SEHK (Չինաստան), Ավստրալիայի բորսան ASX և այլն: Հաճախորդը հնարավորություն է ստանում իրականացնել տարբեր արժույթներով գնաշվող արժեթղթերի առքուվածառը և հետևել միջազգային շուկաներում արժեթղթերի գնանշումներին իրական ժամանակում ցանկացած պահի:

Տեղական և արտասահմանյան շուկաներում ակտիվ ներգրավվածության շնորհիվ 2019թ.-ին Ամերիաբանկի առևտրային գործառնությունների թիմն արժանացավ մի շարք մրցանակների, մասնավորապես՝ „Պետական պարտասումների շուկայում բորսայի անդամների ֆոնդային բորսայի կողմից և Արտարժույթ փոխանակող լավագույն բանկը Global Finance ամսագրի կողմից:

Բանկի ռազմավարությանը և միջնաժամկետ նպատակներին համահունչ մենք մտադիր ենք.

- Մնալ արտարժույթի լավագույն փոխանակող տեղական շուկայում և փոխարկման բարձրորակ ծառայություններ մատուցող բանկ մեր մասրածախ և կորպորատիվ հաճախորդների համար
- Պահպանել և բարելավել Բանկի դիրքը շուկայում՝ որպես ՀՀ ֆինանսների նախարարության առաջատար դիլերներից (գործակալներից) մեկը պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներին ակտիվ մասնակցության և երկրորդային շուկայում պարտատոմսերի ակտիվ առքուվաճառքի միջոցով
- Շարունակել առաջարկել շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքերի) բարձրորակ ծառայություններ կորպորատիվ թողարկողներին, ավելացնել մարքեթ-մեյքինգի պայմանագրերի շրջանակներում գնանշվող արժեթղթերի թիվը և մտնել մարքեթ-մեյքինգի ծառայություններ առաջարկող ընկերությունների լավագույն եռյակի մեջ տեղական շուկայում
- Ընդլայնել Ameria Global Trading հարթակի ծածկույթը
- Մատուցել բարձրակարգ բրոքերային ծառայություններ մեր հաճախորդներին՝ բանկի ռազմավարական թվայնացման շրջանակներում բրոքերային գործառնությունների ամբողջական ավտոմատացման միջոցով
- Պահպանել առաջատար դիրքը՝ որպես Հայաստանի լավագույն բրոքեր՝ մշտապես կատարելագործելով մեր սպասարկումը և ներդնելով նոր գործառույթներ
- Ներգրավել նոր հաճախորդներ թե՛ բրոքերային, թե՛ խորիրդատվական ծառայությունների շրջանակներում

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

Ամերիաբանկը հետևողականորեն իրականացնում է իր թվային ռազմավարությունը և շարունակաբար բարելավում թվային ծառայությունները նորարար տեխնոլոգիական լուծումների միջոցով: Մեր սկզբունքները մշակելիս մենք հասուն ուշադրություն ենք դարձրել նորարարությանը և արդյունավետությանը, որոնք դիմացիկ փոփոխվող աշխարհում տեխնոլոգիական առաջնորդացի և բիզնեսի աճի հիմնարար տարրերն են: Բանկը ձգտում է արժեք ստեղծել իր հաճախորդների համար՝ թե անհատներին, թե կորպորատիվ հաճախորդներին մատուցվող թվային ծառայությունների շարունակական բարելավման միջոցով ոչ միայն հայկական, այլև տարածաշրջանի շուկաներում:

Առաջարկելով անհատականացված թվային լուծումներ բոլոր շահառուներին մենք անդադար աշխատանքներ ենք տանում հետազոտությունների և մշակումների, առանձնահատուկ պրոդուկտների մշակման և տեխնոլոգիական առաջնորդաց ապահովելու ուղղությամբ: Ժամանակակից տեխնոլոգիական լուծումների ներդրման շնորհիվ մենք ապահովում ենք բարձր արդյունավետություն՝ մեր հաճախորդների համար ստեղծելով սպասարկման հարմարավետության և դյուրինության նոր մակարդակ: Հաճախորդների բարձրակարգ սպասարկումն ապահովելու նպատակով բանկը մշտապես աշխատում է հաճախորդների ամենախիստ պահանջների բավարարման ուղղությամբ՝ առաջարկելով նրանց բավմաքնույթ ֆինանսական լուծումներ, օրինակ՝ հատուկ առաջարկ տնտեսության մի շարք ոլորտների աշխատակիցների համար, ուղղորդման պարզևագարներ, էներգախնայող լուծումների ձեռքբերման համար նախատեսված վարկերի հատուկ սակագներ և այլն:

Ամերիաբանկի նորարարական քաղաքականությունը հիմնված է հետևյալ խնդիրների վրա.

- Թվային օրակարգի ձևավորում, որտեղ հստակ կներկայացվեն մինչև 2025թ. ավտոմատացում և թվայնացում ապահովելու ռազմավարական նպատակները
- Իրական ժամանակում գործող միասնական առցանց պահոցի ստեղծում՝ բանկի բոլոր ներքին թվային ծրագրերի վերահսկման նպատակով
- Թվային խորհրդատվական կոմիտեի ստեղծում՝ նոր ծրագրերի առաջնահերթության սահմանման և ազդեցության վերլուծության նպատակով
- Աշխատանք թվային հասունության ինդեքսի բարելավման ուղղությամբ՝ ներքին գործընթացների ավտոմատացման համար

Հետևողականորեն աշխատելով նորարարության, տեխնոլոգիական կարգացման և հաճախորդների սպասարկման բարելավման Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից մեկը: Ներկայումս Ամերիաբանկը Հայաստանի առաջատար ֆինանսական հաստատությունն է, որն ապացուցեց, որ վստահելի գործընկեր է պատրաստ հաղթահարելու նոր մարտահրավերները և շարժվելու համաշխարհային միտումներին և պահանջներին համընթաց:



ՀԱՅԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

2019թ.-ին արագ տեմպերով աճում էր թվային տիրույթից օգտվող հաճախորդների քանակը. թվային ուղիներն ավելի հաճախ էին օգտագործվում թե ֆիզիկական անձ հաճախորդների կողմից՝ հաշիվ բացելու նպատակով, թե ՓՄՁ-ների կողմից վարկավորման նպատակով: Ինտերնետ-բանկինքի օգտագործման ցուցանիշը՝ տարեկան կտրվածքով աճել է 10 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով՝ 34%: Պրոդուկտների մշակման ընթացքում առաջնորդվելով հաճախորդակենտրոն մոտեցմամբ մենք սերտորեն աշխատում ենք մեր հաճախորդների հետ նրանց կարիքներն ավելի լավ հասկանու և բանկի ծառայություններից օգտվելու համար նախատեսված բոլոր ուղիների միջոցով սպասարկումն ավելի հաճելի և արդյունավետ դարձնելու նպատակով: Լավ սպասարկումն ու հաճախորդի դրական տպավորությունների ապահովելը մնում էն բանկի գերակա խնդիրների շարքում: 2019թ. բանկը ձեռնամուխն է եղել բնական լեզվի մշակման (NLP) հնարավորությունների վրա հիմնված, ինչպահի շատրու (Վիրտուալ վրուցակից) տեխնոլոգիայի մշակմանը, որն առաջին անգամ կլիի հայերեն: Մենք վստահ ենք, որ ավարտին հասցնելով այս տեխնոլոգիայի մշակումը կապահովենք բանկի առցանց և մոբայլ ծրագրերի օգտագործման հարմարավետության և դյուրինության բոլորովին նոր մակարդակ:

Բանկի գործառնությունները և հիմնական ոչ բանկային ծառայություններն ավելի հասանելի, ապահով և հարմար դարձնելու նպատակով 2019թ. Ամերիաբանկն իրականացրեց մի շարք ներքին և արտաքին բարեկավումներ: 2019թ. բանկը գործարկեց թվային ուղիներով հասանելի հետևյալ ծառայությունները ՓՄՁ օնլայն վարկավորման II փուլ (ապահոված վարկերի համար), ավտովարկավորման օնլայն հարթակ (automarket.ameriacbank.am), հիփոթեքային վարկավորման օնլայն հարթակ (Estate.ameriacbank.am), էլեկտրոնային ստորագրության հնարավորություն ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների համար, ինչը բարելավեց հաճախորդների սպասարկման արդյունավետությունը 25%-ով և կրճատեց հաշվի բացման գործառնությունների հետ կապված ծախսերը 40%-ով: Ի լրումն դրան, Ամերիաբանկն սկսեց համագրութակցել «Զանգի» ընկերության հետ՝ ներխնելով նոր ծառայություն, որը թույլ է տալիս հաճախորդներին Zangi մետեսչերի միջոցով անվճար զանգահարել Ամերիաբանկ՝ աշխարհի ցանկացած կետից, անկախ բջջային օպերատորներից և ռուսիական առկայությունից:

Որոշումների արագ կայացումը և գործառնական արդյունավետության բարձրացումը ՓՄՁ-ների համար Ամերիաբանկի առաջնային խնդիրների շարքում են: Որպես ՓՄՁ առցանց վարկավորման առաջին փուլի շարունակություն, որը մեծ հաջողություն ունեցավ՝ թույլ տալով վարկառուներին ստանալ մինչև 10 մլն ՀՀ դրամ սահմանաչափով վարկեր 2019թ.-ի վերջին Ամերիաբանկը հաջողությամբ ներդրեց ծրագրի երկրորդ փուլը գործարկելով մեթենայական ուսուցմամբ ավելի առաջադեմ մոդուլ առցանց և ֆիզիկական տարածքներում սպորինգի հնարավորությամբ, որը փոքր և միջին ձեռնարկություններին հնարավորություն տվեց հաշված րոպեների ընթացքում ստանալ 10 մլն ՀՀ դրամ և ավել սահմանաչափով ապահովված վարկեր:

Ամբողջությամբ վերափոխելով սպասարկման հնարավորությունները ՓՄՁ հատվածի ընկերությունների համար և ապահովելով ավելի հարմարավետ լուծումներ՝ Ամերիաբանկը փոխեց նաև ֆիզիկական անձ հաճախորդների ներգրավման գործընթացը՝ այն ամբողջությամբ թվայնացնելով և դարձնելով ինտերակտիվ: Այսօր բանկի հաճախորդ դաշնային համար կարելի է դիմել թվային ուղիներով՝ ընդամենը ներկայացնելով անձնական տվյալները, սկանավորելով լրացնելու պարունակող անձը հաստատող փաստաթուղթ և ավարտելով գործընթացը՝ սելֆիով ինքնությունը հաստատելու նպատակով: Այս պարզեցված գործընթացը թույլ է տալիս հաճախորդներին սկսել օգտվել սահմանափակ ծառայություններից՝ հետագայում ամբողջությամբ ակտիվացնելով բանկային գործառնությունները նախապես պլանավորված տեսականգի կամ բանկի որևէ մասնաճյուղ այցելելու միջոցով:

ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ

Ամերիաբանկը շարունակաբար ներդրումներ է կատարում ներքին տեխնոլոգիաների մշակման մեջ՝ ձգտելով բարձրացնել համակարգերի և գործընթացների արդյունավետությունն ու ճկունությունը և բարելավել սպասարկումը՝ առաջնային, միջանկյալ և հետզրասենյակային բոլոր գործընթացների անխափան ինտեգրման և ավտոմատացման միջոցով:

Այս նպատակով բանկը սահմանել է հասուն ցուցանիշ՝ թվային հասունության ինդեքս, որն ընդգրկում է բանկի բոլոր գործընթացները՝ համակարգված ըստ բարդության և ազդեցության, և իր առջև դրել է բոլոր գործընթացների ավտոմատացման խնդիրը նպատակ ունենալով մինչև 2025 թվականը այդ ցուցանիշը հասցնել 75%-ի:

Մենք շարունակաբար ներդրումներ ենք կատարում տեղեկատվական տեխնոլոգիաների մեջ՝ ձգտելով բարձրացնել համակարգերի արդյունավետությունն ու ճկունությունը և բարելավել սպասարկման գործընթացը առաջնային սպասարկման և հետզրասենյակային փուլերի ավտոմատացման և սահուն ինտեգրման միջոցով:

Հաշիվների կառավարման և սպասարկման որակի տեսանկյունից հաճախորդների մենեջերների համար առանցքային նշանակություն ունի հաճախորդների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների անխափան հասանելիությունը: Վարկավորման և հաշիվների կառավարման գործընթացները բարելավելու նպատակով 2019թ.-ի կեսին Ամերիաբանկը նախաձեռնեց CRM համակարգի արդիականացման ծրագիրը: Նոր համակարգը՝ Microsoft Dynamics-ի ներդրմամբ, ապահովում է հաճախորդների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հասանելիություն, բիզնես-գործընթացների ավելի արդյունավետ կառավարում և սպասարկման առաջնային, միջանկյալ և հետզրասենյակային բոլոր գործընթացների անխափան ինտեգրումը: Համակարգը հնարավորություն է տալիս նաև կցել փաստաթղթեր, պայմանագրեր, հաշիվ-ապրանքագրեր, մուտքային նամակագրություն և հաճախորդների լոյալիտյան հարցման արդյունքները, ինչը մեկ թույլ է տալիս ավելի լավ սպասարկել մեր հաճախորդներին: Մոտ ապագայում ծրագրի շրջանակներում կապահովվի երկկողմանի ինտեգրում հիմնական բանկային գործառնությունների և Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման (CRM) համակարգերի միջև, ինչը թույլ կտա հաճախորդների հետ աշխատող մասնագետներին արդյունավետ ձևով բացել նոր հաճախորդներ համակարգում, կառավարել հաշիվները և ընթացք տալ գրավով ապահովված վարկային հայտերին՝ համապատասխան աշխատանքային գործընթացի կիրառմամբ: Ակնկալում ենք, որ նոր ավտոմատացված գործընթացները թույլ կտան էապես նվազեցնել գրավով ապահովված վարկային հայտերի ուսումնասիրման ժամանակը, իսկ հաճախորդների վերաբերյալ ամբողջական տվյալների հասանելիությունը մեկ վայրում կօգնի հաճախորդների մենեջերներին ավելի լավ պատկերացում կազմել հաճախորդների կարիքների մասին և առաջարկել անհատականացված լուծումներ:

Սպասարկման գերազանց որակ ապահովելու համար մեկ անհրաժեշտ են լավագույն մասնագետների կառավարման և վերլուծության մեխանիզմներ: Տվյալ նպատակի իրագործման շրջանակներում Ամերիաբանկն ավտոմատացրեց անձնակազմի ներգրավման գործընթացները (աշխատանքի ընդունում, հայտարարում, փնտրում և ընտրություն), ինչպես նաև ձեռնամուկնեղակ անձնակազմի կառավարման հարթակի արդիականացմանը՝ այն դարձնելով ավելի հասանելի և հարմար մոբայլ սարքերով օգտագործելու համար:

ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ


Թվայնացումը և նորարարությունը հանդիսանում են և կշարունակեն լինել մեր կայուն աճի հիմնական շարժիչ ուժը: Մեր զարգացման ուղղությունները հիմնվում են հետևյալ չորս առանցքային հիմնաքարերի վրա:

- Ներքին արդյունավետություն և ավտոմատացում
- Թվային պրոդուկտներ և ծառայություններ

- Թվային ուղիներ
- Հիմնական ցանցի վերակառուցում

Մեր թվային պրոդուկտների և ծառայությունների, ինչպես նաև թվային ուղիների ապահովման հիմնական նախադրյալն է հիմնական ցանցի վերակառուցումը: Արդյունքում բանկը ձեռնամուխ եղավ հսկայական ճարտարապետական և տեխնոլոգիական վերակառուցման ծրագրի՝ նպատակ ունենալով ապահովել միկրոծառայությունների հետքով ճարտարապետության հիման վրա կառուցված մասշտաբավորվող, արդյունավետ և ապահով տեխնոլոգիական ենթակառուցվածք: Այս նախաձեռնության շնորհիվ հնարավոր կլինի բանկի գործառնությունների 75%-ը տեղափոխել երրորդ անձանց կողմից սպասարկվող հիմնական հարթակներից, հավասարապես բաշխել ծանրաբեռնվածությունը և գործառության պահանջները նորաստեղծ միկրո-ծառայությունների միջն, ինչպես նաև ստեղծել հիմք մեր թվային պրոդուկտների և ծառայությունների բաղադրիչի զարգացման համար:

Թվային պրոդուկտների և ծառայությունների տարրը կառուցվում է բաց, ինտեգրված, էկոհամակարգի վրա հիմնված ճարտարապետության հիման վրա: Բանկը սահմանել է էկոհամակարգերի մշակման երեք հիմնական ուղղություն՝ բնակարանային վարկավորման էկոհամակարգ, ավտովարկավորման էկոհամակարգ և ՓՄՁ վարկավորման էկոհամակարգ: Այս բոլոր էկոհամակարգերը գործելու են միասնական տեխնոլոգիական հիմքի վրա, ինչը հնարավոր կլինի ապահովել ընդհանուր, արդյունավետ կերպով ինտեգրված միկրոծառայությունների և տվյալների պահողի շնորհիվ: Բանկն իր առջև հավակնութ նպատակ է դրել մինչև 2025 թվականն ապահովել շուկայի առևտունությունը 50% մասնաբաժինն այս երեք ուղղություններում: Ի լրումն նշված ուղղություններին, ունենալով հզոր և մասշտաբավորվող տեխնոլոգիական հիմք՝ բանկը մտադիր է կենտրոնանալ նաև այլ ուղղությունների վրա էլեկտրոնային առևտուր, ուսանողական հատված և մի շաբաթ այլ ֆինանսական և բանկի գործընկերների կողմից մատուցվող ոչ ֆինանսական ծառայություններ բանկի կողմից գործարկվող միասնական տեխնոլոգիական հարթակում:



Միասնական ճարտարապետության հիմնական ուղղություններն են.

- Հարակից ծառայությունների միջև ընդհարման վավեցում գերժամանակակից տեխնոլոգիական առանցքի (բաց API, միկրոծառայություններ) միջոցով միասնական փորձի ապահովման շնորհիվ
- Տվյալները որպես հիմնական ակտիվ, որը հնարավոր է դարձնում իրական ժամանակում որոշումների կայացումը՝ մեքենայական ուսուցման միջոցով կանխատեսող վերլուծության հիման վրա
- Ցանցային ազդեցության օգտագործում համագործակցության և անխափան ինտեգրման գործընթացների և տեխնոլոգիայի միջոցով

Հաջողված հաճախորդակենտրոն թվային պրոդուկտներ և ծառայություններ ստեղծելու ընթացքում բանկը ձեռնամուկն է եղել բոլոր գործընթացների վերակառուցման աննախադեպ՝ ծրագրի իրականացմանը հաճախորդների հետ փոխադարձակցության բոլոր հիմնական ուղղություններով շեշտը դնելով միջազգային որակի դիզայնի և հարմարավետության չափանիշների և մեթոդների վրա: Տվյալ նախաձեռնության շրջանակներում շուտով նախատեսում ենք գործարկել ամբողջովին նոր դիզայնով կայք, ինչպես նաև մշակել լիովին նոր դիզայնով մոբայլ և առցանց բանկային ծառայություններ:

Ամերիաբանկի թվայնացման և նորարարության ուղղությունն ունի հետևյալ կարևոր հատկանիշներն ու բաղադրիչները.

Ճկուն (agile) մտածելակերպ:

Մենք հետևողականորեն ներդնում ենք ճկուն (agile) աշխատելառն ամբողջ ընկերության մակարդակով՝ բարձր արդյունավետություն, նոր պրոդուկտների ներդրման արագություն և թափանցիկ հաղորդակցում ապահովելու նպատակով: Գաղափարներ գնեներացնելիս, դրանք հայեցակարգերի վերափոխելիս, պրոդուկտներ մշակելիս, թիմեր ձևավորելիս, հաճախորդի հետ փոխադարձակցությունը նախագծելիս, բոլոր ուղղություններով համագործակցելիս, լինի դա ներքին ավտոմատացում թե արտաքին պրոդուկտի մշակումը, մենք ապահովում ենք ճկունության և արդյունավետության ավելի բարձր մակարդակ:

Միասնական կառուցվածք և տեխնոլոգիական չափանիշներ:

Մենք մշակում ենք պրոդուկտներ, միավորում գործընկերներին, հավաքագրում տվյալներ և կառավարում ծառայությունները տեխնոլոգիական միջավայրում, որը կառուցված է մոդուլային ճարտարապետական կառուցվածքի, ինչպես նաև հստակ տեխնոլոգիական չափանիշների հիման վրա: Մենք այն անվանեցինք, Տեխնոլոգիական առանցք և այն մեր թվային օրակարգի իրականացման շարժիչ ուժն է:

Տվյալների վրա հիմնված աշխատելառն:

Մենք հետևողականորեն աշխատում ենք մինչև 2021 թվականն ամբողջությամբ տվյալագիտության վրա հիմնված ընկերություն դառնալու ուրբաթյամբ: Բանկը կառուցում է տվյալների միասնական մեծածավալ շտեմարան, որը թույլ կտա ապահովել տվյալների վերլուծության, կանխատեսումների, հաշվետվությունների կազմման և տվյալների հավաքագրման գործընթացների բոլորովին նոր մակարդակ: Մենք վստահում ենք իրական ժամանակի ռեժիմում կայացրած և ամբողջությամբ տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը:


ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ

Մենք ձգտում ենք ստեղծել գերժամանակակից բանկ՝ սպասարկման առաջադեմ բազմաֆունկցիոնալ հաղթակով՝ թվային ուղիների լայն կիրառմամբ: Մեր հաճախորդների նախընտրությունների փոփոխության արդյունքում 2019թ.-ին ինտերնետ և մոբայլ բանկինցից օգտվող հաճախորդների թիվն ավելացավ 89%-ով, իսկ գործարքների թիվը՝ 76%-ով: Թվային և ինքնասպասարկման հարթակների բանկումատների, էքսպրես բանկինցից, տերմինալների միջոցով իրականացվող գործարքների ընդհանուր քանակը ավելացավ 78%-ով: Այս գործարքները կազմեցին Ամերիաբանկի գործառնությունների ընդհանուր պորտֆելի 82.4%-ը և ունեն աճի միտում, մինչդեռ այլ եղանակներով (այցելություններ մասնաճյուղեր, բանկում ձևակերպվող գործառնություններ և հեռախոսային բանկինց) իրականացվող գործարքների թիվն ավելացել է 3%-ով: Սա վկայում է նրա մասին, որ Ամերիաբանկի հաճախորդները պատրաստ են անցնել թվային տիրույթ բանկի հետ միասին:

2019թ.-ին Ամերիաբանկը բացեց երկու նոր մասնաճյուղ՝ «Աբովյան» մասնաճյուղը Կոտայքի մարզում and «Էջմիածին» մասնաճյուղն Արմավիրի մարզում: Ամերիաբանկը մասնաճյուղեր ունի Հայաստանի խոշոր քաղաքներում և մարզկենտրոններում՝ Վանաձորում (Լոռի), Դիլիջանում (Տավուշ), Քաջարանում (Սյունիք), Կապանում (Սյունիք), Գյումրիում (Շիրակ), Զերմուկում (Վայոց ձոր), Աբովյանում (Կոտայք), Էջմիածնում (Արմավիր), ինչպես նաև գլխամասային գրասենյակ և 11 մասնաճյուղ մայրաքաղաքի ամենաբանուկ վայրերում:

Բանկը նաև ընդլայնում և բարելավում էր հեռահար բանկային սպասարկման՝ բանկումատների և վճարային/POS տերմինալների ցանցը՝ ավելի հարմար շուրջօրյա բանկային սպասարկման հնարավորություններ ապահովելու համար: 2019թ.-ին մեր սեփական վճարային տերմինալների քանակը 32-ից ավելացավ մինչև 43: Մենք սկսեցինք համագործակցել բոլոր ազգային վճարահաշվարկային համակարգերի հետ: ցանցն ընդգրկում է ավելի քան 5500* վճարային տերմինալ: 2019թ-ի վերջի դրությամբ Բանկն ուներ 147 բանկումատ, 2639 POS տերմինալ, 395 վիրտուալ POS տերմինալ և 61 POS Cash տերմինալ:

* Ներառում է Ամերիաբանկի և երրորդ անձանց տերմինալները



Գլխամասային գրասենյակ և մասնաճյուղեր
Երևան - 11 Մարզեր - 8



**POS
տերմինալներ
2,639**



**Բանկումատ
147**



**Վիրտուալ POS
տերմինալներ
395**



**POS cash
տերմինալ
61**



ՃՐՋԱԿԱՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԻԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՇՐՋԱԿԱՄԻԶԱՎՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Առաջնորդվելով շրջակա միջավայրի և սոցիալական խնդիրների կառավարման ոլորտում առաջատար փորձով՝ Ամերիաբանկը ձգտում է իր գործունեությունը ծավալել պատասխանատու և կայուն ձևով՝ իր ուղղակի և անուղղակի գործունեության ավելցությունը շրջակա միջավայրի վրա նվազեցնելու նպատակով։ Բոլոր ֆինանսավորվող ծրագրերը և ընկերությունները գնահատվում են Ամերիաբանկի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականության հիման վրա։ Քաղաքականությունը հիմնված է միջազգային առաջատար փորձի սկզբունքների վրա և ապահովում է պատասխանատու մոտեցում վարկավորման՝ նախատեսելով բոլոր վարկառուների մանրակրկիտ մոնիթորինգ շրջակա միջավայրի և սոցիալական կյանքի վրա բացասական ավելցությունը կանխելու նպատակով։

Առաջնորդվելով կյանքի որակը բարելավելու առաքելությամբ՝ Ամերիաբանկը մշտապես իր ներդրումն է կատարում հասարակության բարօրության և զարգացման մեջ։

2019թ. բանկը շարունակել է իրագործել այս մոտեցումը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կրթության, առողջապահության և մշակույթի ոլորտներին և ակտիվորեն մասնակցելով մի շարք ԿՄՊ ծրագրերի իրականացմանը։

- կրթական ծրագրեր՝ «Դիլիջանի միջազգային դպրոց»-ի, Հայաստանի Ամերիկյան համալսարանի անապահով ընտանիքների սաների կրթաթոշակների ֆինանսավորում
- մշակութային ծրագրեր՝ «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի «Հայաստանի դասական երաժշտության բարեկամներ», Ժամանակակից արվեստի ցուցահանդես «Արմենիա Արթ Փեյր» և այլն
- երեխաների առողջության պահպանման ու վերականգնման ուղղված ծրագրեր մեր գործընկեր բարեգործական հիմնադրամների հետ սերտ համագործակցությամբ «Սիրի Օֆ Սմայլ», «Օգնենք Հայ Մանուկներին», «ՍՕՍ-Մանկական գյուղեր», «Սուրբ Աստվածամայր» ԲԿ և այլն


Հաշվետու տարում Բանկի կողմից կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի համար հատկացվել է 124 մլն ՀՀ դրամ, որի գերակշիռ մասն ուղղվել է կրթական և մշակութային ծրագրերի աջակցությանը, համապատասխանբար՝ 43.6 մլն և 40.6 մլն ՀՀ դրամ։

Կարևորելով բարձր տեխնոլոգիաների դերը Հայաստանի տնտեսության վարգացման գործում՝ 2019թ. ընթացքում բանկը հովանավորել է մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ Sevan Startup Summit 2019-ը, ReactConf2019-ը, Barcamp2019-ը, JSConf2019-ը և այլն, ինչպես նաև նախաձեռնել և իրականացրել ScaleUp ինովացիոն ֆորումն Ամերիաբանկի և Amazon Web Services-ի համագործակցության ներքո։ Նշանակալի միջոցառումներն արտացոլել են տեխնոլոգիական ոլորտի խթանման ուղղված մեր ծրագրերի շարունակականությունը և նպատակ են ունեցել ուսումնասիրել տեխնոլոգիական վարգացման մեջ և թրենինգ, թվայնացման միտումները և նորարարությունը։

Բանկն ակտիվ մասնակցությունն է ունեցել Հայաստանի 4 մարզում փոքր ու միջին բիզնեսի վարգացմանն ուղղված՝ ՀՀ կառավարության կողմից կազմակերպված բիզնես համաժողովներին («Իմ քայլը հանուն Շիրակի», «Իմ քայլը հանուն Սյունիքի», «Իմ քայլը հանուն Տավուշի» և «Իմ քայլը հանուն Լոռու մարզի»), որոնք հնարավորություն են տվել բոլոր տնտեսվարող սուբյեկտներին երկխոսություն ունենալ մեկ տարածքում վեր հանել մարդերում առկա տնտեսության վարգացման խնդիրները։

2019թ.-ին Բանկն աջակցել է մայրաքաղաքի ենթակառուցվածքային խնդիրներից կարևորելու մեջ՝ բարեկմանը՝ մասնակցելով Հայաստանում առաջին Yerevan Ride Bike Sharing ծրագրի ներդրմանը՝ որպես հիմնական հովանավոր։ Այս ծրագրը հնարավորություն է ընձեռել Երևանի բնակչության օգտվելու այլ ընտրանքային տրանսպորտային միջոցից՝ հեծանիվից՝ նպաստելով մայրաքաղաքում էկոլոգիական մաքուր տրանսպորտի և առողջ ապրելակերպի տարածմանը։

Ուշադրություն գրավելով շրջակա միջավայրի խնդիրներին և խթանելով անձնակազմի ներգրավումը ԿՄԴ գործունեության բանկը խրախուսում է նաև ամերիհացիների ակտիվ մասնակցությունը ԿՄԴ տարաբնույթ ներքին և արտաքին ծրագրերին: Բանկի ԿՄԴ քաղաքականությամբ սահմանված ուղղություններից «մտածիր կանաչ» (think green, go green) քաղաքականությանը հետևում է յուրաքանչյուր ամերիհացի՝ կրծատելով ջրի, թղթի սպառումը, խնայելով էներգիան, աշխատանքային առօրյայում օգտագործելով վերամշակվող նյութեր: Բանկի գլխամասից վերամշակման հանձնված թղթի և պլաստիկի շնորհիվ ծրագրի իրականացման առաջին իսկ ամիսներում խնայել ենք 238 լիտր նավթ և 3.5 ծառ, իսկ տեղական շոկայում ըսդունված ամանորյա օրացույցների ֆորմատի փոփոխության արդյունքում՝ 13.5 ծառ: Մեր աշխատակիցների մասնակցությամբ իրականացրել ենք շրջակա միջավայրի պահպանության ուղղված մի շաբթ ծրագրեր՝ շաբաթօրյակներ, ծառատունկեր՝ մայրաքաղաքի կանաչ տարածքները բարեկարգելու և պահպանելու նպատակով:





ՈՒՍԿԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ամերիաբանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- Ռիսկերի կառավարման նպատակները և սկզբունքները
- Ամերիաբանկի ռիսկի ախորժակի կառուցվածքը և սահմանելու կանոնները
- Բանկի որոշումներ ընդունող մարմինների և պաշտոնատար անձանց իրավասությունների բաշխումը ռիսկ պարունակող գործառնությունների իրականացման մասով
- Գործառնությունների իրականացման հիմնական ուղենիշներն ու չափանիշները
- Վերջիններիս հսկողության պայմանները
- Ռիսկի ախորժակի կառուցվածքը
- Այլ դրույթներ

Ռիսկերի կառավարումը բանկի Տնօրենների խորհրդի, Տնօրինության, ղեկավարների և այլ աշխատակիցների կողմից իրականացվող գործընթաց է սկսած Բանկի ռավմավարության մշակումից, Ներառյալ բանկի գործունեության բոլոր ոլորտները։ Ամերիաբանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը Բանկի վարգացման ծրագրերի անբաժանելի մաս է և հիմք է հանդիսանում ռիսկ պարունակող գործընթացները կարգավորելու համար։ Այս Տնօրենների խորհրդի կողմից ընդունված սկզբունքների ամբողջությունը, որու ուղղված է բանկի գործունեությունն առավել արդյունավետ կերպով կազմակերպելուն՝ սահմանափակելով անբարենպաստ երևոյթների ի հայտ գալու դեպքում հավանական բացասական ազդեցությունը։ Ռիսկերի կառավարման քաղաքականությունը պարբերաբար վերանայվում է՝ կախված բանկի ռավմավարությունից, բիզնեսի բարդության աստիճանից և ձևավորվող մակրոտնտեսական միջավայրից։

Ընդունված կառավարման տեղեկատվական համակարգի համաձայն բանկի Ռիսկերի կառավարման դեպարտամենտն ամիսը, եռամսյակը և տարին մեկ իրականացնում է ռիսկերի գնահատում և արդյունքները ներկայացնում Բանկի Տնօրինությանը կամ մասնագիտացված կոմիտեներին (վարկային, ակտիվների և պասիվների կառավարման և այլն), ինչպես նաև բանկի խորհրդին ու ՀՀ Կենտրոնական բանկին։

Բանկում ռիսկերի կառավարման հիմնական նպատակներն են՝

- Ֆինանսական գործիքների համակարգերի օպտիմալ որակի ապահովում՝ բանկի համար առավելագույն արժեքի տեսանկյունից պայմանավորված ընդունելի ռիսկերով
- Կանխատեսելի, չափելի և կառավարելի դարձնել բոլոր հնարավոր կորուստները և ռիսկերը
- Ռիսկի բոլոր գործակիցները պահպանել ընդունելի սահմաններում, ապահովել կայունության բարձր պաշար (բոլիք)
- ճշգրտել ռիսկի ախորժակի բաշխումը՝ բանկի ռավմավարական նպատակների իրագործմանը նպաստելու նպատակով

Բանկում ռիսկերի կառավարման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- Ժամանակին բացահայտել Բանկի գործունեության ընթացքում առաջացող հնարավոր ռիսկերը
- Բացահայտել ռիսկերի առանձին տեսակների վրա ազդող գործուները
- Իրականացնել առանձին ռիսկերի որակական և քանակական գնահատում
- Հաստատել ռիսկերի ընդունելի սահմանաշահերը
- Հավաքել և ղեկավարությանը ներկայացնել հնարավոր ռիսկերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն

- Հաստատել ռիսկերի կառավարման ներքին հսկողության (մոնիթորինգի) ձևերը և մեթոդները
- Սահմանել ռիսկերի առանձին տեսակների կառավարման համար բանկի Խորհրդի և գործադիր մարմնի անդամների պատասխանատվությունը
- Մշակել ռիսկի կանխատեսման, գնահատման և նվազեցման համապատասխան մեթոդներ և միջոցառումներ և վերահսկել այդ միջոցառումների իրականացումը

Ոիսկերը ժամանակին բացահայտելու կարևոր պայմաններն են՝ բանկի ներքին հիմնական տնտեսական նորմատիվների և ռիսկերի ընդունելի սահմանաչափերի պահպանման պարբերական մոնիթորինգը, բանկի հաշվեկշռի փոփոխությունների պարբերական վերլուծությունը, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների պահպանումը, պատմական տվյալների վրա հիմնված, կանխատեսված և կրիտիկական սրբես թեստավորման հաշվարկների լայն ընտրություն բոլոր պորտֆելների և ռիսկերի տեսակների գծով, ներքին և համաշխարհային մակրոտնտեսական միջավայրի մոնիթորինգ, մոդելների վրա հիմնված կանխատեսումներ, բանկում առանձին ռիսկերի կառավարումը կանոնակարգող՝ ռիսկերի բացահայտման ու կառավարման մեթոդաբանությունն ու մեխանիզմները սահմանող ներքին իրավական ակտերի առկայությունը:


Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- Բանկում ներդրվել է ռիսկերի կառավարման միասնական համակարգ, որը Բանկի ռազմավարական կառավարման հիմնական տարրերից մեկն է:
- Ոիսկերի կառավարումն ունի պրոակտիվ դեր, մշտական և շարունակական բնույթ: Ոիսկերը բացահայտվում ու գնահատվում են բանկի բոլոր գործընթացներում, իսկ դրանց պատշաճ կառավարման համար ձեռնարկվում են միջոցառումներ:
- Բանկի ռիսկերի կառավարման համակարգը հիմնվում է հարավորապես ճշգրիտ ռիսկ/Եկամուտ հարաբերակցության վրա: Բանկը ռիսկ ձևավորող գործարքներից ընտրում է Նրանք, որոնց ռիսկերը կարող են գնահատել և արդյունավետ կերպով կառավարել:
- Բանկը ձգուում է ճանաչել հաճախորդին և պարզել նրա ֆինանսական կարիքները: Բանկը խուսափում է հաճախորդի հետ համագրործակցելուց, եթե չունի պատշաճ տեղեկություններ նրա ֆինանսական վիճակի մասին: Բանկը հաճախորդների հետ աշխատելիս հետևում է KYC (Know Your Customer՝ ճանաչիր քո հաճախորդին) սկզբունքներին՝ լավագույն միջավայրին փորձին համապատասխան:
- Բանկի համար ռիսկ առաջացնող գործարքները հաստատվում են „չորս աչքին սկզբունքով՝ որով դեպքերում նաև ռիսկերի կառավարման անկախ մասնագետների ներգրավմամբ (օրինակ՝ Վարկային հայտերը հաստատվում են մեկ Վարկային մասնագետի և ռիսկերի կառավարման մեկ մասնագետի կողմից): Հաստատումների գործընթացը յուրաքանչյուր գործիքի համար սահմանվում է համապատասխան քաղաքականությամբ և/կամ ընթացակարգով:
- Բանկի բոլոր գործիքների և գործընթացների համար սահմանվում և համապատասխան կարգերով ամրագրվում են իրավասությունների և պատասխանատվության հստակ շրջանակները (ներառյալ հաստատումների սահմանաչափերը): Յուրաքանչյուր գործընթացի համար սահմանվում և փաստաթղթերով ամրագրվում են ներքին հսկողության մեխանիզմները:
- Ցանկացած շեղում բանկի քաղաքականություններից և ներքին իրավական ակտերից պետք է հաստատվի տվյալ քաղաքականությունը կամ իրավական ակտը հաստատող կամ համապատասխան լիազորություն ունեցող այլ մարմնի կողմից (Տնօրինություն, Տնօրենների խորհուրդ):
- Բանկի գործունեության յուրաքանչյուր ուղղություն պատասխանատվություն է կրում ռիսկերի բացահայտման և պարբերական մոնիթորինգի համար:
- Բանկում մշակվել և ներդրվել են կառավարչական տեղեկատվական համակարգեր, որոնք թույլ են տալիս առավել արդյունավետ կերպով կառավարել պորտֆելները:
- Յուրաքանչյուր բանկային գործիքի մասով ռիսկերի կառավարման մոտեցումները (հաստատումների սահմանաչափեր, ընդունելի պարամետրեր, պորտֆելների ծավալ, շեղումներ ընդունված կարգից և այլն) սահմանվում են համապատասխան գործընթացը կանոնակարգող ներքին իրավական ակտերով և/կամ քաղաքականություններով, որոնք հաստատում է ռիսկերի կառավարման ստորաբաժանումը:

- Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը պարբերաբար գնահատվում է բանկի ներքին առդիտի ստորաբաժանման կողմից:
- Բանկի գործունեությունը պարբերաբար ուսումնասիրվում և գնահատվում է բանկի կառավարման մարմինների կողմից:

Բանկի ռիսկերի կառավարման համակարգը բաղկացած է հետևյալ տարրերից:

- **Ռիսկի ախորժակ:** Բանկի խորհուրդը սահմանում է ընդունելի կորուստների/ռիսկի չափը յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար՝ ելելով բանկի նպատակներից և ավնկալվող մակրոտնտեսական զարգացումներից: Ռիսկի ախորժակը բաշխվում է ըստ ռիսկերի բոլոր տեսակների՝ վարկային, չուկայական և գործառնական: Ըստ յուրաքանչյուր ռիսկին հատկացված ախորժակի՝ սահմանվում են ռիսկերի բոլոր պարամետրերը և սահմանափակումները:
- **Չափանիշներ և հաշվետվողականություն:** Կառուցվածքի այս տարրը ներառում է գործիքների հաստատման չափանիշների, ռիսկերի դասակարգման, յուրաքանչյուր բանկային գործիքին բնորոշ չափանիշների և կառավարչական հաշվետվությունների չափանիշների սահմանում:
- **Սահմանաչափեր և կանոններ:** Բանկի բոլոր ֆինանսական գործիքների համար սահմանվում են հաստատումների, պորտֆելի սահմանաչափեր և համապատասխան կանոններ:
- **Ներդրումների ուղեցույց և ռազմավարություն:** Սահմանվում են բանկի ներդրումային գործունեության ռազմավարությունները, չափանիշները, շեղումների թույլատրելի չափերը: Նշված ուղեցույցները հիմք են հանդիսանում բանկի հեջափորման, ակտիվների ու պատվաստերի կառավարման և այլ քաղաքականությունների համար:
- **Ռիսկ/Եկամուտ հարաբերակցություն:** Բանկի ցանկացած ֆինանսական գործիքի վերաբերող ներդրումային բոլոր որոշումները հիմնվում են ռիսկ/Եկամուտ մոտեցման վրա: Սահմանվել են աշխատակիցների խրախուսման համապատասխան մեխանիզմներ:



ՌԻՍԿԻ ԱԽՈՐՃԱԿ

Ռիսկի ախորժակը ռիսկի ընդունելի մակարդակն է, որը բանկը պատրաստ է ստանձնել իր կարճաժամկետ և միջնաժամկետ նպատակներին հասնելու համար: Վնասների առումով ռիսկի ախորժակը հնարավոր վնասների/ռիսկի չափն է, որը բանկը պատրաստ է կրել կանխատեսվող միկրոտնտեսական միջավայրում իր կարճաժամկետ և միջնաժամկետ նպատակներին և ծրագրերին հասնելու համար: Գոյություն ունեն ռազմավարական ռիսկի ախորժակ (ռիսկի աստիճան միջնաժամկետ/Երկարաժամկետ տնտեսական ցիկլի համար) և ընթացիկ (գործառնական) ռիսկի ախորժակ:

Ռազմավարական ռիսկի ախորժակը ռիսկի առավելագույն չափն է, որը բանկը կարող է ստանձնել 3 տարվա կտրվածքով իր նպատակներին հասնելու համար սուր լարվածության մակրո սցենարի ներքո, միևնույն գործառնական ռիսկի ախորժակը ռիսկի առավելագույն չափն է, որը բանկը կարող է ստանձնել կանխատեսված մակրո սցենարի ներքո 1 տարվա կտրվածքով նպատակների իրականացման համար: Թե ռազմավարական, թե գործառնական ռիսկի ախորժակը որոշվում է մեկ տարվա ընթացքում առաջացող ռիսկերի համար:

Ռազմավարական և գործառնական ռիսկի ախորժակները սահմանվում են բանկի հիմնական բիզնես ուղղությունների՝ կորպորատիվ վարկավորման, մասրածախ վարկավորման և առևտրային գործառնությունների համար: Ռիսկի տեսակներն են:


- Վարկային ռիսկն ընդհանուր հաստատված ռիսկի ախորժակն է՝ կորպորատիվ և մասրածախ վարկավորման գծով:
- Շուկայական ռիսկն առևտրային գործառնությունների համար հաստատված ռիսկի ախորժակի (արտարժութային ռիսկ, արժեղղութերի/կոնտրագենտի ռիսկ) և բանկի հաշվեկշռում Նշված տոկոսադրույթի մասով նախատեսված ռիսկի ախորժակի համրագումարն է:
- Գործառնական ռիսկի ախորժակը հաստատվում է ներքին գործընթացներից, մարդկային գործոնից, տեխնոլոգիաներից, համակարգերից և արտաքին գործոններից բխող ռիսկերի համար:

Բանկի ռազմավարական ռիսկի ախորժակը չի կարող գերազանցել բանկի համար ընդունելի ռիսկի աստիճանը կամ նախատեսել ՀՀ ԿԲ նորմատիվների որևէ խախտում: Բանկի ռազմավարական ռիսկի ախորժակը հաստատվում/վերանայվում է Տնօրենների խորհրդի կողմից առնվազն տարին մեկ անգամ:

Ընթացիկ տարվա համար բանկի Տնօրենների խորհուրդը հաստատել է ռազմավարական ռիսկի ախորժակը չգերազանցող ընթացիկ ռիսկի ախորժակ: Ընթացիկ ռիսկի ախորժակի սահմանաշահերը պայմանավորված են մակրոտնտեսական և շուկայի սպասումներով, որոնք ձևավորվել են բանկի ռազմավարության վերաբերյալ թվարկումների արդյունքում հաշվի առնելով բանկի համապատասխան պարամետրերի պլանավորված ցուցանիշները ու սթրես-սցենարների արժեքները:

Ռիսկի ախորժակը կառավարում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն (ԱՊԿ)/Մեծ վարկային կոմիտեն, ինչպես նաև Տնօրենների խորհուրդը սահմանաշահի գերազանցման դեպքում:

Բանկի ռիսկի ախորժակը



ՀԻՄԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Ռիսկ/Եկամուտ» մոտեցման և ռիսկի ախորժակի բաշխման շրջանակներում բանկը կիրառում է ռիսկի գնահատման և նվազեցման տարբեր գործիքներ: Բանկի ռիսկերը դասակարգվում են որպես վարկային, շուկայական, գործառնական և այլ ռիսկեր:

Վարկային ռիսկ

Բանկը ենթարկվում է ֆինանսական կրորուատ կրելու ռիսկի, եթե բանկի հաճախորդները կամ պայմանագրի կողմերը խախտում են սահմանված ժամկետներում վճարում կատարելու իրենց պարտավորությունները: Վարկային ռիսկը Բանկի ամենաէական ռիսկն է, քանի դեռ բանկի հիմնական գործունեությունը ավանդական վարկավորումն է, որն էլ կազմում է հաշվեկշռային ցուցանիշների հիմնական մասը: Հաշվի առնելով դոլարացման բարձր մակարդակը՝ ընդհանուր վարկային ռիսկի էական տարրերից մեկն է փոխարժեքների տատանումով պայմանավորված վարկային ռիսկը, որն առաջանում է չեղավորված վարկառուներին արտարժույթով վարկերի տրամադրման հետևանքով: Վարկային ռիսկը պարունակում է նաև կենտրոնացման ռիսկը վարկային պորտֆելի որակի վատթարացման հավասականությունը, որը կարող է առաջանալ մեկ վարկառուի կամ փոխկապակցված վարկառուներին խոշոր վարկերի տրամադրման հետևանքով:

Կայուն վարկային պորտֆել և եկամուտ ապահովելու համար շատ կարևոր է վարկային ռիսկերի կառավարման կուր համակարգի առկայությունը: Այդ նպատակով բանկում մեծապես կարևորվում է վարկային ռիսկերի բացահայտման, չափման և մոնիթորինգի արդյունավետ գործընթացների հրականացումը: Վարկային ռիսկերը գնահատվում և կառավարվում են թե առանձին գործարքների, թե պորտֆելի մակարդակով՝ մանրածախ և կորպորատիվ գործառնությունների համար առանձին: Վարկային ռիսկերի կառավարման բաժինները մասնակցում են յուրաքանչյուր գործարքի վարկային ռիսկի վերլուծությանը, գնահատմանը և հաստատմանը կիրառելով ռիսկերի գնահատման և ոեյթինգավորման հասուն ներքին մեթոդաբանություններ: Վարկային ռիսկի կառավարման նպատակն է պորտֆելի վերահսկումը, որակի մոնիթորինգը, ինչպես նաև վարկային ռիսկի կառավարման մեխանիզմների մշակումը և կիրառումը սթրես-թեստերի, վաղ ահազանգման և ռիսկի հիմնական ցուցանիշների ու պարամետրերի, ոլորտային վերլուծության և մոնիթորինգի հիման վրա:

Բանկի մոնիթորինգի համակարգը հիմնվում է ռիսկերի վրա. այս մոտեցումը թույլ է տալիս ժամանակին արձագանքել շուկայական պայմանների փոփոխություններին, բացահայտել վարկային պորտֆելի թույլ կողմերը և նախանշել լուծումներ՝ հիմնավորված որոշումներ կայացնելու համար: Մոնիթորինգի են ենթարկվում առանձին վարկերը, ընդհանուր պորտֆելի կատարողականը, ինչպես նաև արտաքին միտումները, որոնք կարող են ապել պորտֆելի ռիսկայնության վրա: Վաղ ահազանգման պարակները կարևոր են նաև ապել պորտֆելի ռիսկայնության վրա: Վաղ փոլում հայտնաբերելու և ռիսկի ապելեցությունը կապող քայլեր ձեռնարկելու համար: Վարկային պորտֆելի մոնիթորինգի ընթացքում կիրավում է վիճակագրական վերլուծություն: Վարկային պորտֆելի մոնիթորինգը և ընտրանքային ստուգումներն իրականացվում են վարկային ռիսկի կառավարման բաժնի կողմից շարունակաբար: Իրավաբանական անձանց վարկային ռիսկի կառավարման բաժնը պատասխանատու է այցելությունների միջոցով առևտորային վարկերի մոնիթորինգի համար: Այս գործընթացը թույլ է տալիս վաղ փոլում արագ բացահայտել ռիսկային վարկերը և համապատասխան քայլեր ձեռնարկել:

Վարկային ռիսկերի կառավարման բաժնը պարբերաբար վերլուծում է պորտֆելի միտումները, ներառյալ ընդհանուր վարկային պորտֆելի հնարավոր կորուատները, պորտֆելի որակը, իրականացնում է վարկերի դասակարգման դիմասիմիկայի, պորտֆելի կենտրոնացման և որակի վերլուծությունը և ամսական հաշվետվություն ներկայացնում վարկային կոմիտեին իր եկամացությունների վերաբերյալ: Ըստ որում, վարկային պորտֆելի որակի մասին հաշվետվություններն ամսական կտրվածքով ներկայացվում են Տնօրինությանը և Տնօրենների խորհրդին: Վարկային ռիսկերի կառավարման համակարգի շնորհիվ Բանկը կարողանում է բացահայտել և նվազեցնել ռիսկերը ժամանակին փոփոխություններ կատարելով իր քաղաքականություններում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկի գնահատումն ու կառավարումը հիմնվում են նոյն ,ռիսկ/եկամուտ հարաբերակցության և ռիսկի ախտրժակի վրա, որը սահմանվում և բաշխվում է ըստ ռիսկի հետևյալ ենթատեսակների տոկոսադրույթի, գնային, արժութային և բաժնեմասի գնի ռիսկեր: Շուկայական ռիսկն առաջանում է շուկայի տատանումների պատճառով ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության, արժույթի և տոկոսադրույթների անհամապատասխանության, ինչպես նաև արժեթղթերի, անշարժ գույքի, բանկին պատկանող կամ որպես գրավ ընդունված ակտիվների գնի փոփոխության հետևանքով:

Շուկայական ռիսկերի կառավարման համար պատասխանատու է ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն: Բանկի նպատակն է կառավարել շուկայական ռիսկերը, սահմանել ընդունելի շեմեր և կիրառել որոշումների կայացման համապատասխան համակարգ՝ հնարավոր կորուստներու ռիսկի ախտրժակի նախանշված սահմաններում պահելու համար: Կիրառվող վաղ ահազանգման և ռիսկի հիմնական ցուցանիշների համակարգը, տարատեսակ սթրես-թեստերը նպատակ ունեն հաշվարկելու շուկայական տարբեր պարզացումների ազդեցությունը բանկի վրա, ինչպես նաև հասկանալ շուկայական ռիսկի բաց դիրքի սահմանաշահերն ըստ շուկայական ռիսկի բոլոր արբյուրների: Իրականացվող սթրես-թեստերի սցենարները պարբերաբար վերանայվում են շուկայի պայմաններն արտացոլելու նպատակով: Ռիսկերի պարամետրերի համակարգը սահմանվում են պարտադիր գործողություններ, պատասխանատու անձննք, ռիսկի գոտիներ, ինչպես նաև հաշվետվողականության և որոշումների կայացման կանոնները: Շուկայական ռիսկերի կառավարման համակարգը պարբերաբար վերանայվում է և փոփոխվում բանկի կողմից առաջարկվող ծառայությունների և շուկայական պայմանների պարզացմանը զուգահեռ:

Արտարժույթով (հիմնականում ԱՄՆ դոլարով) արտահայտված ակտիվների և պարտավորությունների մեծ ծավալը տեղական շուկայի ցածր իրացելիության հետ մեկտեղ Բանկի համար առաջացնում է արտարժութային ռիսկը և դառնում բաց արտարժութային դիրքի հիմնական պատճառը: Նման պայմաններում փոխարժեքի ցանկացած տատանում կարող է հանգեցնել ռիսկով կշռված ակտիվների արժեքի փոփոխության, ավելին, ձնշման տակ դնել բանկի կապիտալի և կապիտալի համարժեքության ցուցանիշները: Արտարժութային ռիսկը նվազեցնելու նպատակով բանկը կիրառում է ռիսկի ենթարկված արժեքի (VaR) մեթոդաբանությունը՝ հիմնվելով նախորդ ժամանակշրջանների տվյալների և թեստերում օգտագործվող փոխարժեքների սիմուլացիաների վրա, հաշվի առնելով տարբեր փոխարժեքների, որուց տատանումների և հավանականության՝ նախկինում գրանցված հարաբերակցությունը: Ռիսկերի պարամետրերի համակարգը ներառում է նաև ընդհանուր արտարժութային բաց դիրքի պարամետրերը, որուն սահմանափակվում են ըստ ռիսկի գոտիների, որոշում կայացնողների և սահմանաշահերի խախտման դէմքում ձեռնարկվող միջոցառումների: Բանկի կապիտալի, կապիտալի համարժեքության ցուցանիշի և իրացվելիության վրա ազդող արտարժութային ռիսկը, բաց դիրքով պայմանավորված կորուստը, ռիսկով կշռված ակտիվների աճը վաղ փուլում կանխատեսելու համար կիրառվում են մի շարք սթրես-թեստեր յուրաքանչյուրը Յ հիմնական սցենարով: Բացի դրանից, Բանկը կիրառում է լրացուցիչ առավելագույն արժեքի մոտեցում, որը հիմնվում է սիմուլացիոն սինեմայի վրա և ապահովում արժութային ռիսկի վստահելի գնահատումներ: Այս մոտեցումը կիրառվում է ռիսկի և ակնկալվող կորուստի օպերատիվ գնահատման և կառավարման համար:

Տոկոսադրույթի ռիսկ

Տոկոսադրույթի ռիսկը սահմանված ժամանակշրջանում կուտ տոկոսային եկամտի նվազման ռիսկը է՝ պայմանավորված շուկայական տոկոսադրույթների փոփոխությամբ: Տոկոսադրույթի ռիսկի հիմնական աղբյուրը ներդրումային պորտֆելն է, որը մեծամասմբ բաղկացած է պարտային գործիքներից: Տոկոսադրույթի ռիսկի մեկ այլ աղբյուր է հանդիսանում լողացող տոկոսադրույթը (հիմնականում ԼիԲՈՐ) ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջև ոչ վրոյական տարբերությունը: Բանի որ լողացող տոկոսադրույթը վարկատեսակները տեղական շուկայում լավ չեն կարգացած, լողացող տոկոսադրույթը տատանումները կարող են անդրադառնալ Բանկի վրա: Տոկոսադրույթի ռիսկի վերահսկման և նվազեցման համար սահմանված են բավարիկ պարամետրեր, որոնք կարգավորում են հաստատում տոկոսադրույթների փոփոխությամբ պայմանավորված ձեռքսածքը, լողացող տոկոսադրույթի դիրքի չեղավորված մասը և արժեթղթերի պորտֆելը: Տոկոսադրույթի ռիսկի պարամետրերը բաղկացած են ավելի քան 30 տարբեր տարրերից: Արժեթղթերի պորտֆելի ռիսկը կառավարվում է առանձին քաղաքականությամբ, որն ընդգրկում է պորտֆելի պարամետրերը, սթրես-թեստերը, ակտիվների տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացման սահմանաշահերը և վաղ ահազանգման աղդակելները, որուն պարբերաբար վերանայվում են բանկի գործունեության ընդլայնմանը զուգահեռ: Տոկոսադրույթի ռիսկը սահմանվող և ԱՊԿ-ի ու Տօրինության կողմից իրականացվող քաղաքականությունը նախատեսում է տոկոսադրույթի ռիսկի սահմանափակում՝ ռիսկի ախտրժակի նախանշված չափով. հնարավոր կորուստները գնահատվում են սթրես-թեստերի սցենարների, վիճակագրական սիմուլացիայի, ռիսկի ենթարկված արժեքի և ակնկալվող պակասորդի հիման վրա:

ԳՆԱՅԻՆ ՌԻՍԿ

Բանկը Ենթարկվում է վարկերի ապահովման ծածկույթի և սպասարկման ռիսկին՝ ապահովման միջոցների և բաժնային գործիքների շուկայական գների տատանման հետևանքով։ Գնային ռիսկի հիմնական աղբյուրն է գրավադրված անշարժ գույքի արժեքությամբ։ Գնային ռիսկը կարող է առաջանալ նաև բաժնային գործիքների, ապրանքների, հիմնական միջոցների, գրավադրված շարժական գույքի և այլ ֆինանսական գործիքների շուկայական գների փոփոխության հետևանքով։ Գնային ռիսկը կարող է եական ազդեցություն ունենալ վարկային ռիսկի վրա, քանի որ անշարժ գույքի գնի տատանումները կարող են հանգեցնել չափահովված վարկերի մեծ ծավալի առաջացմանը՝ պայմանավորված վարկ/գրավե հարաբերակցության աճով։ Վարկային ռիսկի մեկ այլ տարրը, որը փոխկապակցված է գնային ռիսկի հետ, միջազգային առևտորով վրադրվող վարկառուների վճարունակության անկման ռիսկն է, քանի որ նրանը կարող են տուժել տարբեր ապրանքների շուկայական գնի տատանումից։ Մակրոմիջավայրի ռիսկի մոնիթորինգի ներքո պարբերաբար վերլուծվում է տեղական ընկերությունների վճարունակությունը։ Ի պատճառակ այդ ռիսկերին խստացվում են վարկավորման պայմանները, շեղումների սահմանաշերթը, սահմանվում է որոշումների կայացման հստակ կարգ։ Բանկը մշակել է գործողությունների ծրագրեր բիզնես-գործընթացների անընդհատությունն ապահովելու և հնարավոր գնային ցնցումներով պայմանավորված ռիսկերին (ըստ սթրես-թեստերի) վաղ փուլում արձագանքելու նպատակով։

ԻՐԱԳՎԵԼԻՒՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ բանկը չի կարողանա կատարել իր պարտավորությունները՝ առանց մեծ վնաս կրելու։ Իրացվելիության ռիսկը կարող է եաբես բարձրանալ հետևյալ դեպքերում։

- ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վգալի անհամապատասխանություն,
- հաշվեկշոի թույլ դիվերսիֆիկացում,
- խոշոր ավանդատունների և վարկառուների բարձր կենտրոնացում,
- արժութային ցնցումներ ֆինանսական շուկաներում, որոնք հանգեցնում են ավանդների դուրսերմանը կամ փոխարկմանը,
- ֆինանսական շուկայում իրացվելիության պակաս,
- արժեթղթերի պորտֆելի որակի վատթարացում,
- ֆինանսական գործիքների (ռեպո, սվոփ, օվերնայթ և այլն) անսպասելի անհասանելիություն։

Բանկը ձգտում է մշտապես ապահովել բարձր իրացվելի ակտիվների բավարար մակարդակ՝ ելելով ցանքանց ու կարճաժամկետ պարտավորությունների և ընդհանուր ակտիվների մեծությունից։ Բարձր իրացվելի ակտիվների կառուցվածքն ըստ արժույթների, կանխիկ/անկանխիկ միջոցների որոշվում է՝ ելելով բանկի պարտավորությունների կառուցվածքից։ Բանկը միջոցներ տեղաբաշխելիս ձգտում է ապահովել գործիքների բազմազանություն և շարունակաբար նվազեցնել կենտրոնացումները։ Դա ենթադրում է տեղաբաշխված միջոցների դիվերսիֆիկացում ըստ հաճախորդների կամ հաճախորդների խմբերի, գործիքների, տնտեսության ճյուղերի և այլ չափանիշների, ինչպես նաև բանկի ընդհանուր ակտիվներում տեղաբաշխված միջոցների տեսակաբար կշռի սահմանում ու հսկողություն։ Իրացվելիության ռիսկի պարամետրերը (կենտրոնացումը, ակտիվների և պարտավորությունների միջև ճեղքածքը, տոկոսադրույթի ճեղքածքը, բարձր իրացվելի ակտիվների ցուցանիշները և այլն) ներառված են ռիսկերի ընդհանուր պարամետրերում, որոնց կառավարումը, այդ թվում՝ ռիսկի մակարդակի սահմանափակումը, հաշվետվողականության սկզբունքները, գործողությունների ծրագրերը, որոշումների կայացման քաղաքականությունները, պատճառանատու անձանց նշանակումը և սթրես-թեստերի սկզբունքների կիրառումը, իրականացվում է ռիսկերի կառավարման ընդհանուր համակարգի շրջանակներում։

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Գործառնական ռիսկը ներքին գործընթացների, համակարգերի խափանման, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների հետևանքով կորստի առաջացման հավանականությունն է։ Բանկում անընդհատ իրականացվում է գործառնական ռիսկերի բացահայտմանը և գնահատման ուղղված հետևողական աշխատանքը։ Օիսկերի կառավարումն իրականացվում է միասնական համակարգի միջոցով։ Նոր գործընթաց կամ ծառայություն ներդնելուց առաջ բանկը գնահատում է դրա կարևորությունը և

համապատասխան գործառնական ռիսկերի նկատմամբ իր զգայունությունը: Գործընթացների և համակարգերի ռիսկերի գնահատման մեջ առանցքային դեր է խաղում տարբեր դեպքերի հավանականության և դրանց ազդեցության հաշվարկը, որն ապահովելու նպատակով Բանկը վարում է գործառնական պատահարների և կորուստների տվյալների շումարան: Այն թույլ է տալիս վերլուծել ռիսկի աղբյուրները, բնույթը, պատճառները և միտումները, հաշվարկել հետագա գործառնական կորուստների վերականգնման համար անհրաժեշտ կապիտալի ծավալը: Մենք նաև ներդրել ենք կապիտալի՝ ըստ պրոդուկտների բաշխման մոդելը՝ սեփական մեթոդաբանությամբ, որը թույլ է տալիս սահմանել տվյալ պրոդուկտի հետ առնչվող գործընթացների և համակարգերի գնահատման խնդիրներն ըստ առաջնահերթության: Խոշոր պատահարներից պաշտպանվելու նպատակով բանկը լավագույն փորձին համապատասխան ապահովագրել է իր ակտիվները, գործառնությունները, պարտավորությունները և աշխատակիցների պատասխանատվությունը: Բանկն իր ակտիվներն ապահովագրել է մի շարք ռիսկերից, այդ թվում իրդեհից, պայմանավոր տարերային աղետներից, երրորդ անձանց ոչ օրինաչափ գործողություններից, գործադրվելուցույն բաղադրային հուպեսներից, ահաբեկչությունից, ինչպես նաև իր հաճախորդների համար ձեռք բերել երրորդ կողմից պատասխանատվության ապահովագրություն: Բանկը նաև ունի ֆինանսական հաստատությունների համապարփակ ապահովագրություն (Bankers' Blanket Bond) և իր տնօրենների ու դեկավարների պատասխանատվության ապահովագրություն:

Ռազմավարական ռիսկ

Շուկայական իրավիճակի, հաճախորդի վարքագծի և տեխնոլոգիաների փոփոխությունները նույնագույն կարող են բացասաբար անդրադառնալ կատարողականի վրա, եթե բանկը ձկուն չլինի արտաքին փոփոխությունների հանդեպ: Հետևաբար, ցանկացած կազմակերպության նման բանկը ևս ենթարկվում է ռազմավարական ռիսկերի: Ռազմավարական ռիսկերի կառավարման համակարգի հիմքում են պարբերական ռազմավարական քննարկումները, պլանավորումը, հաշվետվությունների ներկայացումը Տնօրենների խորհրդին և Տնօրինությանը, ինչպես նաև կարգացման բոլոր առանձին ուղղությունների շարունակական վերահսկողությունը: Բանկում ռազմավարական պլանավորման գործընթացը կանոնակարգվում է Ռազմավարական վերլուծությունների իրականացման և գործարար ծրագրերի մշակման և մոնիթորինգի ընթացակարգով:

Տարեկան երկու անգամ Բանկում կազմակերպվում է ռազմավարական քննարկում, որտեղ ուսումնասիրվում և Տնօրենների խորհրդին են ներկայացվում բանկի ռազմավարությունը, ռիսկի ախորժակը, նպատակները և խնդիրները հաջորդող տարիների համար: Ցննարկումներից հետո սկսվում է եռամյա գործարար ծրագրի մշակումը, իսկ ծրագրի հաստատումից հետո այն կարող է վերանայվել միայն հիմնարար դրույթների և ենթադրությունների հետևանքում փոփոխությունների անհրաժեշտության դեպքում:

Շրջակա միջավայրի ռիսկ

Շրջակա միջավայրի ռիսկ ընկերության գործունեության հետևանքով առաջացող կեղտաջրերի, արտանետուումների, թափուների, գործունեության ընթացքում ռեսուրսների սպառման պատճառով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կամ դրա հավանականությունը, ինչպես նաև որոշակի գործունեության հետևանքով շրջակա թնական միջավայրի քայլայման վտանգը: Շրջակա միջավայրի ռիսկերի կառավարումը ենթադրում է շրջակա միջավայրի առկա ռիսկերի բացահայտումը և դրանց կառավարման եղանակների ընտրությունը՝ մարդկանց առողջությունը և շրջակա միջավայրը լավագույն ձևով պաշտպանելու համար: Հաճախորդի/ֆինանսավորվող ընկերության գործունեության վայրում կարող են առաջանալ սոցիալական խնդիրներ, որոնք հետպետե կարող են ավելի մոտակայքում բնակվող համայնքների վրա: Դեկավարվելով շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման լավագույն միջավայրին չափանիշներով՝ Ամերիաբանկը հետամուտ է նաև իր հաճախորդների կողմից շրջակա միջավայրի և հանրության հանդեպ իրենց պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելուն: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման հիմնական տարրերն են:

- Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականությունը
- Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման հրահանգը
- Լավագույն փորձին համաձայն տվյալ ռիսկերի կառավարման գործընթացը ներդնելու և իրականացնելու համար անհրաժեշտ գործիքները

Բանկն ունի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման մասնագետ, որը հանդես է գալիս որպես շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի ներդրման, վարման և ընթացիկ կիրառման համար պատասխանատու մասնագետ և համակարգող:

Բանկը ենթարկվում է նաև այլ ռիսկերի, որոնց թվում են հեղինակության ռիսկը, օրենսդրական և իրավական պահանջների խախտման ռիսկը, իրավական ռիսկը և ՓԼ/Աֆ ռիսկը:

Հեղինակության ռիսկ

Հեղինակության ռիսկը հեղինակության անկման հավանականությունն է, որի արդյունքում նվազում է ընկերության ընդհանուր արժեքը, և/կամ ավելանում են իրավական պահանջների պահպանման և այլ ծախսերը: Այն ընդգրկում է բանկի էթիկայի, ապահովության, անվտանգության, կայունության, որակի և նորամուծությունների հետ կապված բացասական վարգացումները: Հեղինակության ռիսկը կառավարվում է Տնօրինության մակարդակում, սակայն առավել հիմնավորված որոշումներ կայացնելու համար ներգրավվում են նաև հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման, հասարակության հետ կապերի, ներդրողների հետ հարաբերությունների, անվտանգության բաժինները և այլ շահագրգիռ կողմեր: Հեղինակության ռիսկի վասումն իրականացվում է առանձնացված կառուցի տեղեկությունների բացահայտման կոմիտեի միջոցով: Կոմիտեն որակում է տեղեկատվությունը՝ որպես ներքին հանդիսացող կամ չհանդիսացող, հաստատում խոսնակների ցանկը, ինսայդերների ցուցակները, համրային հայտարարությունները և դիրքորոշում է հայտնում ատեկոսեների պատասխանների վերաբերյալ: Քանի որ բանկի գործունեությունը կարգավորվում է ապահան օրենսդրությամբ և վարկատունների հետ կապված պայմանագրերի պահանջներով, բանկը ենթարկվում է օրենսդրական և իրավական պահանջների խախտման ռիսկի: Օրենսդրական և իրավական պահանջների խախտման ռիսկը կառավարվում է համապատասխան ստորաբաժանման, իրավաբանական ծառայության և Ֆինանսական դիտարկումների ծառայության կողմից: Բանկը իր գործունեության մեջ դեկավարվում է կարգավորող մարմնի պահանջներով՝ միաժամանակ կիրառելով միջազգային չափանիշները՝ ներքին իրավական ակտերում հնարավոր թերությունները բացառելու համար: Նշված ռիսկերը սահմանափակվում են ներքին իրավական ակտերի, որոշումների կայացման և վերահսկողության եռաստիճան համակարգի միջոցով, այն է ռիսկերի կառավարումն իրականացվում է համապատասխան ստորաբաժանման, մասնագիտացած կոմիտեների և Տնօրինության կողմից:

ՄԱԿՐՈՏՆԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

2019 թվականը ևս հաջող տարի էր Հայաստանի համար մակրոտնեսական միջավայրի առումով, թեև համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական իրավիճակը համեմատաբար անբարենպաստ էր աշխարհաքաղաքական լարվածության և առևտրային քաղաքականության անորոշությունների պատճառով: ՀԱՅ-ի աճը կազմեց տպակորհ 7.6%, իսկ 12-ամսյա սպառողական գների ինդեքսի աճը՝ 1.4%:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տնտեսության աճը կսպող հիմնական գործուներն էին օտարերկրյա ուղղակի ներդրումների համեմատական սակավություն, նավթի և մետաղների գների անկումը և սպառողական գների ինդեքսի համեմատաբար ցածր արժեքը: Ակնկալվում է, որ մոտակա 2-3 տարվա ընթացքում բարձր տնտեսական աճը երկրում կապահպանվի:

ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշները տարեվերջի դրությամբ՝ չափսատող վարկերի միջին ցուցանիշը՝ 5,5%*, կապիտալի համարժեքություն՝ 17.6%, կապիտալի եկամտաբերություն՝ 9.8%: Իրացելիության գործակիցները գրեթե կրկնակի գերազանցում էին նորմատիվային ցուցանիշները, ընդհանուր կապիտալ ավելացել է 13.4%-ով:

2019թ. Ամերիաբանկը գործում էր չափավոր ռիսկի պայմաններում՝ պահպանելով բոլոր ռիսկերը, այդ թվում վարկային ռիսկը, ընդունելի սահմաններում: Մինչև տարեվերջ վարկային ռիսկի (խնդրահարույց վարկերի) ցուցանիշն զգալիորեն բարելավվեց և շատ ավելի ցածր էր, քան ՀՀ բանկային համակարգի

*աղբյուր՝ ՀՀ Կենտրոնական Բանկ

Միջին ցուցանիշը: 2019թ. բանկերի վարկային պորտֆելի որակի վրա ազդող հիմնական գործոններն էին ցածր ներքին պահանջարկը, մասնավոր տրանսֆերների և ուղարկի օտարերկրյա ներդրումների դաշտայի վերականգնումը, ՀՀ ԿԲ-ի կանխատեսումներից ցածր գնաճի ցուցանիշը, աշխատավարձերը և վարկերի սպասարկման գործակիցը: 2019թ.-ին էական ռիսկերը կապված էին ապրանքների գների տատանումների, ԱՄՆ և Չինաստանի «առևտրային պատերազմների», ԱՄՆ Դաշնային պահուստի տոկոսադրույթների քաղաքականության հետ: Գործոնների թվում էին նաև աշխարհաքաղաքական լրավածությունը Ռուսաստանի շուրջ, ԱՄՆ քաղաքական որոշումները: Հյայաստանում տևական ակտիվության ինդեքսը 2019/2018թթ. կազմեց 7.8%, ՀՆԱ-ի աճը 2019թ. 7.6%: ՀՀ ԿԲ-ի երկու անգամ իջեցրել է Վերաֆինանսավորման տոկոսադրույթը, որն արդյունքում կազմեց 5.5%: 2018թ.-ի երկրորդ կիսամյակում ավելացր շուկայական տոկոսադրույթների աճի միտումը 2019թ. փոխվեց ԱՄՆ-Չինաստան առևտրային պատերազմների և Դաշնային պահուստի դրույթաչափի իջեցման արդյունքում: 2019թ.-ին նկատելի էր ԱՄՆ գանձապետական գործիքների եկամտաբերության անկումը: 2019թ.-ին փոխվեցին պարտադիր պահուստավորման պահանջները՝ ՀՀ դրամի պահանջարկը նվազեցնելու նպատակով: ԼԻԲՈՌ տոկոսադրույթն իջել է՝ Դաշնային պահուստի դրույթաչափի անկմամբ պայմանավորված: Չնայած այդ մարտահրավերների 2019թ.-ին Բանկը պահպանեց նախանշված ռիսկի ախտժակը: Փաստացի վեսան ամբողջությամբ փոխհատուցվել է բանկի կապիտալի հաշվին, կապիտալի համարժեքության ցուցանիշը ողջ տարի ընդունելի մակարդակում էր: 2019թ.-ին ռիսկի հիմնական աղբյուրը վարկային ռիսկն էր: Ռիսկի բոլոր աղբյուրներով պայմանավորված վնասը ռիսկի ախտժակի սահմաններում էր:

Զեռնարկված քայլերը

Հաշվի առնելով 2019թ. միտումները և սպասումները՝ Բանկը.

- Ներդրեց ռիսկի ախտժակի նոր հայեցակարգ՝ բանկի ռազմավարությանը և մակրոտևական սպասումներին համահունչ
- Պարզեցրեց վարկավորման գործընթացը պարտաճանաչ վարկառուների համար՝ հաշվի առնելով մակրոտևական միջավայրի լավատեսական սպասումները
- Ապահովեց խնդրահարույց վարկերի զգալի մասի վերադարձը և կատարելագործեց ռիսկային վարկերի մոնիթորինգի գործընթացը
- Ընդլայնեց վարկային պրոդուկտների տեսականին, ավելի բազմավան դարձրեց ակտիվները, ներգրավեց նոր մանրածախ հաճախորդների և նոր վարկեր
- Մշակեց վարքագծային սթրես-թեստավորման նոր մոդելներ՝ վարքագծային գործոնների տեսանկյունից բանկի կապիտալի տնտեսական արժեքի զգայունությունը գնահատելու համար
- Մշակեց մեթոնայական ուսուցման և էկոնոմետրիկ մոդելների վավերացման մեթոդականությունը
- Մշակեց նոր մոդելներ և սթրես-թեստավորման մեթոդներ հաշվեկշռում տոկոսադրույթի ռիսկի կառավարման նպատակով
- Մշակեց տվյալների պահոցի համակարգ՝ վերլուծության նպատակով բանկի տարբեր աղբյուրներից տվյալների հավաքագրման համար

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Ռիսկեր և անորոշություններ

2019թ.-ին Բանկը գործում էր լավատեսական միջավայրում՝ միջին վարկային ռիսկի պայմաններում:

ՈՒՍԿԻ ԻՀՄՆԱԿԱՆ ՇՊԱՆՏԱԿԱՆ ՀՈՒՅԱՆԻՉՆԵՐԸ

Ամերիաբանկի չաշխատող վարկերի ցուցանիշը բարելավվեց՝ տարեվերջն կազմելով 2.9%՝ շատ ավելի ցածր, քան բանկային համակարգի միջին ցուցանիշը՝ 5,5%*: Կորպորատիվ խնդրահարույց վարկերի ցուցանիշը 3.3% էր, մանրածախ վարկերինը շուրջ 1.9%: Վարկային ռիսկի առժեքը կազմեց վարկային պորտֆելի 1.2%-ը: Վարկերի հետարարությունը կորուստների պահուածները ծածկել են խնդրահարույց վարկերի 80%-ը: Ոլորտային կենտրոնացման մակարդակը ցածր էր, ամենախոշոր ոլորտում (մեծածախ առևտրում) կենտրոնացման առավելագույն ցուցանիշը չի գերազանցել վարկային պորտֆելի 15.7%-ը: Վարկային պորտֆելների որակը տարվա ընթացքում բարելավվեց բոլոր ոլորտներում, բացառությամբ գյուղատնտեսության ոլորտի (մի քանի խոշոր վարկառուի պատճառով):

ՈՒՍԿԵՐԻ ՆՎԱՎԵՑՄԱՆ ՈՒՂՂՈԼԹԵՋԱՄԲ ՃԵՌՆԱՐԿՎԱԾ ՔԱՅԼԵՐԸ 2019թ.

- Կայուն ֆինանսական ցուցանիշներ ունեցող հաճախորդների վարկավորման խրախուսում, ցածր ռիսկային հաճախորդներ ներգրավելու նպատակով որոշ պարամետրերի պարզեցում
- Վարկավորման գործընթացում ռիսկերի վրա հիմնված գնագոյացման սկզբունքի կիրառում
- Սրորինգային մանրածախ վարկավորման նոր համակարգի ներդրում վարկավորում թվային կապուղիներով, և համապատասխան ռիսկի ախորժակի սահմանում:
- Արիեստական բանականության նոր գործիքների մշակում՝ վարկային ռիսկերի մոդելավորման նպատակով
- Մանրածախ վարկավորման սահմանաշափերի համակարգի վերանայում
- Ռիսկերի վրա հիմնված մոնիթորինգի պլանավորման մեխանիզմի մշակում

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

ՈՒՍԿԵՐ և ԱՆՈՐՈՂՈԼԹԵՋՈՒՆՆԵՐ

Բանկի շուկայական ռիսկերը պայմանավորված են փոխարժեքների հնարավոր աճով և տոկոսադրույթների տատանումներով՝ ինչպես հայկական շուկայում, այնպես էլ այլուր: 2019թ. ՀՀ դրամի փոխարժեքը նոյնագույն էր: Առևտրային պատերազմներին ազդեցության ներքո համաշխարհային տնտեսական աճը նվազեց, ԱՄՆ Դաշնային պահուածի դրույքափոփոք երեք անգամ իշեցվել է: Ավելին, երկրորդ կիսամյակում նկատվում էր ԱՄՆ գանձապետական գործիքների բացասական եկամտաբերությունը: Լիբուր-ը նոյնագույն տարվա ընթացքում բացասական միտում էր ցուցաբերում: Դա ուղղակի դրական ազդեցություն ունեցավ բանկի ներքին եկամտաբերության նորմայի վրա, քանի որ առաջացել էր հայկական բանկերին բնորոշ բացասական ճեղքածքը: Հեջափորման հնարավորությունները սահմանափակ են հեջափորման արժեքի և տեղական շուկայում գործիքների սակագույթյան պատճառով: Չնայած դրան՝ բաց դիրքերը ռիսկի ախորժակի սահմաններում էին և կառավարվում էին համապատասխան ձևով: Դրամի համեմատաբար կայուն փոխարժեքի և ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող՝ հիմնական տոկոսադրույթների իշեցման քաղաքականության պայմաններում հայկական արժեթղթերը բարձր արդյունավետություն էին դրսուրում:

ՈՒՍԿԻ ԻՀՄՆԱԿԱՆ ՇՊԱՆՏԱԿԱՆ ՀՈՒՅԱՆԻՉՆԵՐԸ

Շուկայական ռիսկերից առաջացող կորուստը 2019թ.-ին Բանկի կապիտալի 1%-ից էլ պակաս էր: Տարվա ընթացքում բաց արտարժութային դիրքը երկար էր՝ պայմանավորված դոլարի ամրավնուման ակնկալիքներով, խնդրահարույց վարկերի աճի ռիսկերով և վարկային պորտֆելի դոլարացման որպես կանոն բարձր մակարդակով: Արտարժութային դիրքի վերագնահատուածը բացասական էր՝ կապիտալի 0.11% սահմաններում: Համաշխարհային տոկոսադրույթների նվազման միտման պայմաններում բանկը գրանցեց վերագնահատման դրական արդյունքներ տոկոսադրույթի ճեղքածքի վերանայումից, քանի որ տոկոսադրույթի ռիսկի դիրքը կարծ էր: Արժեթղթերի պորտֆելի շուկայական ռիսկն ընդունելի էր և ռիսկի ախորժակի սահմաններում՝ շնորհիկ կարճ դյուրացիայի (<4 տարի) և ծավալի: Բանկի արժեթղթերի պորտֆելը հիմնականում բաղկացած է ՀՀ պետական պարտաստումներից (89%):

*աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ

ՈՒՍԿԵՐԻ ՆՎԱՎԵՑՄԱՆ ՈՒՂՂՈԼԹՅԱՄԲ ՃԵՌՆԱՐԿՎԱԾ ՔԱՅԼԵՐԸ 2019թ.

- Ուսկի ախորժակի/հնարավոր կորուստների կառավարումն իրականացվում էր ներքին պարամետրերի և սահմանաչփերի, կանոնավոր սթրես-թեստերի, մոնիթորինգի և կանխատեսումների միջոցով:
- Օրական կտրվածքով հասուն հակողության տակ էին պահպում բաց արտարժութային դիրքերը:
- Տոկոսադրույթի ոխսկը կառավարվում էր ըստ բաց դիրքերի սահմանաչփերի և սթրես-թեստերի հիման վրա գնահատված կորուստների: Դարբերաբար (առնվազն ամիսը մեկ) հաշվարկվում էին և մոնիթորինգի ենթարկվում տոկոսադրույթների ընթացիկ և ակնկալվող փոփոխությունները: Հեջանքում բարձր արժեքի հետևանքով ոխսկի նվազեցման հնարավորությունները սահմանափակ էին, բայց և այդպես, ոխսկը նվազեցվում էր սվոփերի, լորացող տոկոսադրույթով ակտիվ վարկավորման միջոցով:

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

ՈՒՍԿԵՐ և աՆՈՐՈՂՈԼԹՅՈՒՆՆԵՐ

Բանկային համակարգում ամբողջ աշխարհով մեկ զգալիորեն աճել է կիբեռհանցագործությունների և քարտային խարդախությունների թիվը, ինչը կարող է խոչըն ֆինանսական վնասի պատճառ դառնալ, ինչպես նաև խաթարել գործառնությունների իրականացումը և վտանգել գործունեության անընդհատությունը: Համացանցի և բջջային հավելվածների միջոցով իրականացվող առևտորի ծավալի աճին զուգահեռ ողջ աշխարհով մեկ աճում է նաև քարտային խարդախությունների թիվը: Անվտանգությունը դառնում է հիմնախմբի աշխարհի բոլոր ֆինանսական հաստատությունների համար:

ՈՒՍԿԻ ԻՋՄՆԱԿԱՆ ԳՈՒԳԱՆԻշՆԵՐԸ

Կանոնակարգված և հսկվող գործընթացների շնորհիվ բանկը գործառնական ոխսկը պահում է ցածր մակարդակի վրա: 2019թ.-ին կրած ընդհանուր գործառնական վնասը չի գերազանցել կապիտալի 0.01%-ը: Վնասի 61%-ը գրանցվել է մանրածախ գործառնությունների ոլորտում և վերաբերում է գործառնությունների իրականացմանը և գործընթացների կառավարմանը: Տարեցտարի զգալիորեն ավելանում է Ամերիկանկի հեռահար բանկային ծառայություններից օգտվող հաճախորդների և քարտապանների թիվը: Չնայած դրան, գործառնական վնասն ընդունելի մակարդակում էր, ցուցանիշի վատթարացում չի ակնկալվում: Ակնկալվում է, որ բանկի բոլոր համակարգերը կգործեն ցածր ոխսկի պայմաններում:

ՈՒՍԿԵՐԻ ՆՎԱՎԵՑՄԱՆ ՈՒՂՂՈԼԹՅԱՄԲ ՃԵՌՆԱՐԿՎԱԾ ՔԱՅԼԵՐԸ 2019թ.

- Հաշվի առնելով ամբողջ աշխարհով մեկ կիբեռ-հանցագործությունների և քարտային խարդախությունների աճի միտումը բանկը հաստատեց նշված խարդախությունների դեմ համապարփակ ապահովագրության ճեղքբերումը:
- Բանկի ապահովագրական պայմանագրերի մեծ մասում ներառվեցին վերաապահովագրող ընկերությունների կողմից 100% վերաապահովագրման դրույթներ, որոնցով նախատեսվում են խիստ պահանջներ և անմիջապես ապահովադրին փոխհատուցումը վճարելու պայմանը:
- Ներքին փոխանակման համակարգում մշակվեցին տեղեկատվական անվտանգության պատահարների և ապահովագրական պահանջների բաժիններ, որոնք ինտեգրվեցին գործառնական ոխսկերի տվյալների շումարանի հետ:
- Իրականացվեց 55 ոխսկերի գնահատում ISO/IEC 27001 ստանդարտի ներդրման կապակցությամբ:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

ՈՒԽԿԵՐ և աՆՈՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկային հատվածի իրացվելիությունը փոքր-ինչ նվազել է, սակայն շարունակում էր մնալ ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն շեմից շատ ավելի բարձր: Ավելացվում է, որ 2020թ. սկսած կայսեր գործել իրացվելիության ծածկույթի և պոտ կայուն ֆինանսավորման գործակիցները, ինչի արդյունքում որոշ բանկեր ստիպված կլինեն վերանայել հաշվեկշռների կառուցվածքը և բարելավել իրացվելիության կառավարումն ըստ արժույթների:

ՈՒԽԿԻ ԻԻՄՆԱԿԱՆ ՇՈՒՐԱՆԻՇՆԵՐԸ

Իրացվելիության բոլոր գործակիցներն անգամ ամենաբացասական սյուն-սցենարների դեպքում համապատասխանում էին ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջներին: 2019թ. իրացվելիության ոխսը չնշին էր և զայտում էր ընդհանուր ոխսի պարամետրերի համակարգի շրջանակներում: Ավելին, սյուն-թեստերի ժամանակ իրացվելիության ճեղքածքն անգամ ամենաշակային սցենարների դեպքում շատ դրական արդյունքներ է ցոյց տվել:

ՈՒԽԿԵՐԻ ՆՎԱՎԵՇՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ՃԵՌՆԱՐԿՎԱԾ ՔԱՅԼԵՐԸ 2019թ.

Բարձր իրացվելի ակտիվների տեղաբաշխման ուղիներն ավելի բավարար դարձնելու նպատակով ձևավորվում է բարձր վարկանիշ ունեցող գործընկերների լայն ցանց, ինչպես նաև սահմանվում ներդրումային պորտֆելի մակրամասն կառուցվածք: Ամերիաբանկն ընդլայնեց իր գործընկերների ցանցը կապեր հաստատելով մի շարք նոր արտասահմանյան ֆինանսական հաստատությունների հետ, ինչի շնորհիվ բանկի համար հասանելի են դաշտում մեծ թվով ֆինանսական գործիքներ և իրացվելիություն ապահովող մեխանիզմներ:

Ավանդային բավայի կայունությունը և հետագա աճն ապահովելու համար բանկը սահմանում էր ավանդների տոկոսադրույթները ելեւով շուկայում գործող տոկոսադրույթներից: Բանկն աշխատում էր նաև այլ աղբյուրներից (միջազգային ֆինանսական հաստատություններ) ռեսուրսների ներգրավման ուղղությամբ:

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

ՈՒԽԿԵՐ և աՆՈՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջակա միջավայրի և սոցիալական ոխսերի կառավարումը գնալով ավելի կարևոր դեր է խաղում բիզնեսում հաջողություն ունենալու համար: Ամերիաբանկը ձգուում է համագործակցել այն հաճախորդների հետ, որոնք պատշաճ կերպով կառավարում են շրջակա միջավայրի և սոցիալական ոխսերը: Ավելին, բանկն աջակցում է իր հաճախորդներին շրջակա միջավայրի և սոցիալական ոխսերի կառավարման համակարգ ներդնելու գործում: Բանկի շրջակա միջավայրի և սոցիալական ոխսերի կառավարման ընթացակարգերը խրախուսում են հաճախորդներին, որ նրանք էլ իրենց բիզնեսը վարեն կայուն և պատասխանատու կերպով: Ամերիաբանկի համակարգը հիմնվում է ՄՖԿ-ի, ՎԶԲ-ի և ԱԶԲ-ի գործունեության պահանջների և չափանիշների վրա, որոնք վարկավորման ընթացքում շրջակա միջավայրի և սոցիալական ոխսերի գնահատման գլխավոր չափանիշն են: Ոխսերը բացահայտելու համար բանկը կիրառում է տեխնիկական փաստաթղթեր, որոնցով սահմանվում են ընդհանուր և տնտեսության առանձին ճյուղերին բնորոշ օրինակելի գործունեության չափանիշները:

ՈՒԽԿԻ ԻԻՄՆԱԿԱՆ ՇՈՒՐԱՆԻՇՆԵՐԸ

Բանկի վարկային պորտֆելի շրջակա միջավայրի և սոցիալական ոխսերը գնահատվել են որպես ընդունելի: Շրջակա միջավայրի և սոցիալական ոխսերի 80%-ից ավելին գտնվում է ցածր և միջին ոխսի գրուում: Բարձր ԱԵ դասի ոխսային վարկառուները բանկի վարկային պորտֆելում ներկայացված չեն: Շրջակա միջավայրի և սոցիալական ոխսերի կառավարման և վարկային քաղաքականությունները նպատակ ունեն նվազեցնել ֆինանսավորվող ծրագրերի բացասական ակտեցությունը ֆինանսավորման պայմաններ,

հրահանգներ և նախապայմաններ սահմանելու, խորհրդատվություն տրամադրելու և շրջակա միջավայրի ու սոցիալական ռիսկերի կառավարման բարձրակարգ մասնագետների ներգրավելու միջոցով:


Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը 2019թ.

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը կառավարվում էին բանկի վարկային ընթացակարգերին և շրջակա միջավայրի ու սոցիալական ռիսկերի կառավարման գործող համակարգին համաձայն, որը մշակվել է լավագույն միջավայրին փորձի հիման վրա (Վ.ԶԵԲ-ի, ՄՖԿ-ի և ԱԶԲ-ի գործունեության չափանիշներ/պահանջներ): Ցանկացած ծրագիր ֆինանսավորելիս Ամերիաբանկը գնահատում էր տվյալ ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը, ուսումնասիրում իրավական փաստաթղթերը, բացահայտում, հսկում և նվազեցնում ռիսկերը և կազմում համապատասխան հաշվետվությունները: Գնահատման արդյունքները և բացահայտված անհամապատասխանությունները ներկայացվում են եվրակացության ձևով, որի հիման վրա վարկային պայմանագրերում ներառվում են պարտադիր պահանջներ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման լավագույն փորձին վարկառուների համապատասխանությունն ապահովելու նպատակով 2019թ. բանկը շարունակաբար կատարելագործում էր բարձր ռիսկային ծրագրերի (այդ թվում՝ բոլոր ՓՀԷԿ-երի) կառավարման համակարգը, որտեղ ներկայացված են այն նորմերը և պահանջները, որոնցով վարկառուները պետք է առաջնորդվեն իրենց գործունեության ընթացքում: Իրականացվում էր բարձր ռիսկային հաճախորդների, այդ թվում՝ ոլորտների մոնիթորինգ: 2019թ. վերջում շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման գծով թիմը նշված ռիսկերի գնահատման գործընթացում ներդրեց շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի սրորինգի համակարգը: 2019 թվականին Բանկի կողպորատիվ վարկավորման անձնակազմի համար անցկացվեցին մի շարք վերապատրաստումներ:

ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

Կապիտալի համարժեքության գնահատման նպատակն է ապահովել Բանկի ստանձնած ռիսկերին համարժեք կապիտալի մեծություն և նպատակային ուղենիշ: Հնարավոր ռիսկերից կորուստի չափը հաշվարկելու համար կիրառվում են միաժամանակյա սրբես-թեստեր, երբ դիտարկվում է բոլոր ռիսկերի միաժամանակ ի հայտ գալու հավանականությունը 4 տարբեր սցենարով: Բանկը գնահատում է կապիտալն և որու համարժեքությունը որոշակի ժամանակահատվածի համար, հաշվարկում նվազագույն անհրաժեշտ կապիտալը, որը Բանկը պետք համարի հաշվի առնելով ռիսկերից առաջացող կորուստները, ինչպես նաև կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների նպատակային մեծությունները: Արանձնացվում են հետևյալ ռիսկի տեսակները, որոնց ի հայտ գալու դեպքում Բանկը կարող է կրե վսաս վարկային ռիսկ (պորտֆելի ռիսկ, կենտրոնացում), շուկայական ռիսկ (լողացող տոկոսադրույթ, եկամտաբերության կոր, ֆիքսված տոկոսադրույթի ճեղքածք, արտաքության և բաժնային գործիքների գնային ռիսկ), գործառնական վսաս, ռիսկով կշռված ակտիվների աճ և այլ հնարավոր ռիսկերը: Կապիտալը և հնարավոր կորուստները գնահատելու համար կիրառվում է չորս տարբեր սցենար սկսած բազային սցենարից (առանց ռիսկերի) մինչև ամենաբացասական վարգացումներով սցենարը: Այս դեպքերում, երբ գնահատման արդյունքում կապիտալի համարժեքության կանխատեսվող մեծությունն ամենահավանական սցենարում (որը համապատասխանում է մակրոտնտեսական սպասումներին) չի բավարարում ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն պայմանները, բանկը ձեռնարկում է գործողություններ՝ համարժեքության գործակիցը բավարար մակարդակի վրա պահելու համար: Այս ցուցանիշը խստորեն վերահսկվում է Բանկի դեկավարության կողմից, քանի որ առաջիկա երեք տարվա համար բանկը որդեգրել է աճի ռազմավարություն:

ՍԹՐԵՍ-ԹԵՍՏԵՐ. ԿԱՊԻՏԱԼԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԿՈՒՄՈՒԼՅԱՏԻՎ ՍՑԵՆԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ



ՄԼՆ << դրամ

Դեկ - 19

Հունիս - 19

Դեկ - 18

Կապիտալ (առանց ռիսկի ճշգրտման)	115,150	102,935	97,771
1-ին մակարդակ (<< ԿԲ)	93,091	84,083	76,998
2-րդ մակարդակ (<< ԿԲ)	22,059	18,852	20,773
Ոլսկով կշռված ակտիվներ	781,287	763,883	713,735
Ընդհանուր կապիտալի համարժեքություն (բազ. սցենար)	14.74%	13.5%	13.7%
Ընդհանուր կապիտալի համարժեքություն (ցածր ռիսկային սցենար, ամենասպասելին)	13.94%	13.0%	12.3%

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ռիսկերի ավելի արդյունավետ կառավարման համար 2019թ. բանկը վերանայեց ռիսկերի գնահատման և նվազեցման գործեք բոլոր սկզբունքները, ընթացակարգերը և մեթոդաբանությունները: Ներդրվեցին մի շարք նոր գործիքներ և մեթոդներ:

Մասնավորապես, վարկային ռիսկերի կառավարման բնագավառում 2019թ. բանկը ներդրեց.

- Նոր մոտեցումներ սթրես-թեստավորմանը՝ ըստ ՄՖՀՀՍ9 մակրոմոդելի
- Սպառողական ֆինանսավորման գնագոյացման և վարկավորման նոր ընթացակարգեր՝ ռիսկերի վրա հիմնված (մեքենայական ուսուցման մոդել)
- Վարկավորման նոր մոդելներ ՓՄՁ վարկերի համար
- Նոր սքորինգային վարկային պրոդուկտ, ռիսկերի վրա հիմնված գնագոյացման և վարկավորման ընթացակարգեր (մեքենայական ուսուցման մոդել)

Ցուրաքանչյուր ամիս ներկայացվող վարկային ռիսկերի հաշվետվությունների միջոցով Բանկի դեկավարությունը մշտապես տեղեկացվում է վարկային պորտֆելի որակի, տնտեսության ճյուղերի, վարկային պրոդուկտների, ռիսկերի հիմնական ցուցանիշների, այլ գործոնների և դրանց դիմամիկայի վերաբերյալ, որի արդյունքում ձևավորվում են կրնկրետ համանարարականներ ռիսկերի գնահատման և նվազեցման ուղղությամբ: Արտահերթ մոնիթորինգի միջոցով մշտական ուշադրության կենտրոնում են պահպում բարձր ռիսկային համարվող վարկերը. արդյունքում տարեվերջին դրանց ծավալն զգալիորեն նվազել էր: Ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման գործող մեխանիզմների շնորհիվ հնարավոր եղավ 2019թ. ընթացքում էապես նվազեցել վարկային ռիսկը և այն դարձնել հնարավորապես վերահսկելի:

Ֆինանսական ռիսկերի կառավարման բնագավառում 2019թ.-ին Բանկը.


- Բարելավեց ռիսկի ախտրժակի բաշխման կառուցվածքը՝ Բանկի ռազմավարական նպատակների հրագործմանը նպաստելու նպատակով
- Մշակեց տոկոսադրույթի ռիսկի գնահատման նոր մոդել
- Մշակեց վարքագծային սթրես-թեստավորման նոր մոդելներ՝ վարքագծային գործոնների տեսանկյունից Բանկի կապիտալի տնտեսական արժեքի զգայունությունը գնահատելու նպատակով
- Վերանայեց սթրես-թեստերի և սցենարների առկա համակարգը՝ այն համապատասխանեցնելով տնտեսական իրողությանը
- Մշակեց հակադարձ սթրես-թեստավորման մոդել՝ հասկանալու համար, թե որ պահին է Բանկի բիզնես մոդելը դառնում անկեննունակ, ինչպես նաև բացահայտեց դրան հանգեցնող սցենարները և հանգամանքները
- Վերանայեց ներդրումային սահմանաշափերի համակարգը՝ իրացվելիությունն ավելի ձկուն կերպով կառավարելու համար

Գործառնական ռիսկերի կառավարման բնագավառում 2019թ.-ին Բանկը.


- Գնահատեց և վերագնահատեց մի շարք ներքին գործընթացներ և համակարգեր (ներառյալ նոր սերնդի թվային պրոդուկտները) գործառնական ռիսկերի պատշաճ կառավարումն ապահովելու նպատակով
- Առանձին բարձր ռիսկերի համար մշակեց և ներդրեց ռիսկերը կանխարգելող և/կամ նվազեցնող համապատասխան լուծումներ
- Բարելավեց և կենտրոնացրեց գործառնական պատահարների և կորուստների ավտոմատացված շտեմարանի նոր գործառույթները

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ


Ստորև ներկայացված է Բանկի ռիսկերի կառավարման համակարգի ընդհանուր տրամաբանությունը: Համակարգն ունի յավ մշակված կառուցվածքը, որը նախատեսում է արտաքին և ներքին աղբյուրներից առաջացող ռիսկերից պաշտպանվելու մի քանի մակարդակ:




Վարկային ռիսկի կառավարման հոսքագիր



Առևտրային ռիսկի կառավարման հոսքագիր



Գործառնական ռիսկի կառավարման հոսքագիր




ՌԻՍԿԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի կառավարումը Բանկում իրականացվում է բոլոր մակարդակներում: Մասնավորապես, ռիսկերի կառավարման և ռիսկ ստանձնելու իրավասությունները սահմանվում են որպես հիմք ընդունելով Բանկի ռիսկի ախտօժակը:

Տնօրենների խորհուրդը հաստատում է Բանկի ռազմավարությունը, վերջինիս իրականացման համար անհրաժեշտ ռիսկերի կառավարման, վարկային և այլ քաղաքականությունները, ներքին իրավական ակտերը, սահմանում է Բանկի ռիսկի ախտօժակը (ռիսկերի ընդունելի չափանիշները և շեմը), այդ թվում՝ հաստատում ռիսկերի կառավարման պարամետրերի և ներքին նորմատիվների հրահանգը, վերահսկում է ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը, Բանկի ստանձնած ռիսկերի մակարդակը, որանց համապատասխանությունը ռիսկի ախտօժակին, հաստատում է այն բանկային գործարքները, որոնք Տնօրինության իրավասություններից դուրս են:

Տնօրինությունը, Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենը և Տնօրինության անդամները խորհրդի կողմից հաստատված քաղաքականություններին, պարամետրերին և ներքին նորմատիվներին համաձայն ստանձնում և կառավարում են ռիսկերը, համակարգում ստորաբաժանումների աշխատանքը: Տնօրինությունը և Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենը հաշվետու են Տնօրենների խորհրդին: Տնօրինությունը կարող է վերոնշյալ լիազորությունները փոխանցել մասնագիտացված կոլեգիալ մարմիններին՝ կոմիտեներին (ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե, վարկային կոմիտե և այլն): Մասնագիտացված կոմիտեներին է փոխանցվել Տնօրինության իրավասությունների մի մասը Բանկի հիմնական գործունեությունից բխող ռիսկերն ավելի արդյունավետ կերպով կառավարելու համար:




ՄԵԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

Կոմիտեի հիմնական նպատակն է Բանկի վարկային քաղաքականության իրականացումը և եկամտաբեր վարկային ակտիվների ձևավորումը՝ միևնույն ժամանակ ապահովելով վարկային ռիսկի ընդունելի մակարդակը։ Մեծ վարկային կոմիտեն որոշումներ է կայացնում Բանկի հաշվեկշռային ընդհանուր կապիտալի միջն 10% չափով վարկերի տրամադրման վերաբերյալ՝ որպես հիմք ընդունելով համապատասխան ստորաբաժանումների, ոիսկերի կառավարման կենտրոնի և անվտանգության ծառայության եղակացությունները։ Հաստատված պայմաններից շեղումով վարկերը նոյնպես ենթակա են քննարկման մեծ վարկային կոմիտեի կողմից։

ՓՈՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

Փոք վարկային կոմիտեն ունի նոյն նպատակները, ինչ մեծ վարկային կոմիտեն, սակայն որոշումների կայացման իրավասությունները և սահմանաչափերն ավելի ցածր են։ Կոմիտեն որոշումներ է կայացնում մանրածախ և ՓՄՁ վարկերի վերաբերյալ։ Փոք վարկային կոմիտեն իրավասու չէ քննարկել կամ հաստատել վարկը, եթե պատասխանատու ստորաբաժանումներից թեկուկ մեկի եղակացությունը բացասական է։



Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե (ԱՊԿ)

Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն Բանկում մշտապես գործող կոլեգիալ մարմին է, որը որոշումներ է կայացնում ակտիվների և պարտավորությունների կառավարման քաղաքականության շրջանակներում: Կոմիտեի նպատակն է Բանկի ակտիվների և պարտավորությունների փոխհամաձայնեցված կառավարման համար նախադրյալների ստեղծումը, որը հնարավորություն կտա ապահովել առավելագույն շահութաբերություն՝ իրացվելիության, արտարժության և տոկոսադրույթի ռիսկերի ընդունելի սահմաններում: Կոմիտեի իրավասությունների շրջանակը ներառում է նաև Ներդրումային քաղաքականության, տոկոսադրույթների, արտարժույթի, իրացվելիության, կապիտալի համարժեքության և ռիսկի պարամետրերի կառավարումը:

Վարկավորման վերաբերյալ որոշումների կայացման իրավասությունները բաշխվում են տարբեր մարմինների միջև, որոնց թվում են հնչան կառավարման կոլեգիալ մարմինները, այնպես էլ անհատները: Սահմանաչափերը որոշվում են ըստ ռիսկի ախտճակի բաշխման ընդհանուր հայեցակարգի և պարբերաբար վերանայվում:

Վարկավորման հաստատված պայմաններից շեղումները ևս հաստատվում են ըստ սահմանաչափերի (կախված վարկի տեսակից և գումարից), իսկ որոշումները կայացվում են քվեարկության հիման վրա (պարզ մեծամասնություն, ձնշղող մեծամասնություն): Կախված մակրոտնտեսական միջավայրից՝ Տնօրինությունն ընդունում է շեղումներով վարկերի հաստատման 4 հնարավոր ռեժիմներից մեկը: Մակրոտնտեսական ռիսկային վարգացումների դեպքում որոշումների ընդունման սահմանաչափերը խստացվում են:

Ոիսկերի կառավարման կենտրոնի պատասխանատվության շրջանակը բավականին լայն է: Այն ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- Ոիսկերի կառավարման քաղաքականության և կառուցվածքի մշակում
- Բիզնես-գործընթացների մակարդակով ռիսկերի կառավարման (ներքին հսկողության) համակարգի ներդրում
- Նոր ներդրվող գործիքների համար ռիսկերի կառավարման առաջարկությունների ներկայացում
- Հաստատված սահմանաչափերի ներքո բանկային գործարքների վերաբերյալ եվրակացությունների տրամադրում
- Ոիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվությունների կազմում և ներկայացում Բանկի դեկավարությանը
- Բանկում ռիսկերի կառավարման վերաբերյալ իրացվելիության բարձրացում, կրթում


Ներքին առողջության ստորաբաժանումը գնահատում է Բանկում ներդրված ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը, դրա պահանջների և չափանիշների պահպանումը Բանկի ստորաբաժանումների կողմից, ներկայացնում առաջարկներ արդյունավետության բարձրացման համար, բացահայտված ռիսկերի վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնում Բանկի դեկավարներին և Տնօրենների խորհրդին:

Ոիսկերի կառավարման համակարգի արդյունավետության համար Բանկում ներդրվել է համապատասխան կառավարչական տեղեկատվական համակարգ, որի միջոցով որոշումների կայացման համար ապահովում են անհրաժեշտ ուղղահայց և հորիզոնական տեղեկատվական հոսքերը:

Կառավարչական տեղեկատվական համակարգը Բանկի դեկավարությանը ներկայացնում է առաջանցիկ, համընկնող և հետևող ինդիկատորներ բանկի վարկային և այլ պորտֆելների վերաբերյալ: Համակարգի ներքո Բանկի Տնօրենների խորհրդող և Տնօրինությունն ստանում են բոլոր հաշվետվությունները ռիսկերի և դրանց հնարավոր հետևանքների, ինչպես նաև հսկողական մեխանիզմների ցանկացած խափանման մասին: Մասնավորապես, առանձին գործիքների մասով տարբեր եղանակներով Բանկի դեկավարներին ներկայացվում են հետևյալ տեղեկությունները

- Բանկի պորտֆելների /ներդրումների կառուցվածքը
- Պորտֆելների եկամտաբերությունը և ժամկետային կառուցվածքը
- Ժամկետային ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը
- Գրավադրված ակտիվների և ընդունված գրավների կառուցվածքը
- Խնդրահարույց վարկերի և կենտրոնացումների վերաբերյալ տեղեկատվություն
- Դժվար ենթարկված վարկերի վերադարձելիությունը
- Այլ տեղեկատվություն արդյունավետության վերաբերյալ

Ռիսկերի կառավարման դեպարտամենտ







ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՈԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՐՁ

Հարգելի ներդրողներ,

Որպես Հայաստանի ամենամեծ և ամենահեղինակավոր ֆինանսական հաստատության՝ Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի նախագահ, պատիվ ունեմ ձեզ ներկայացնելու Բանկի Կորպորատիվ Կառավարման հաշվետվությունը 2019թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար:

Մենք հավատում ենք, որ կորպորատիվ կառավարման ճիշտ գործելակերպն առանցքային դեր է խաղում Բանկի պարզացման և աճի գործում, քանի որ այն թույլ է տալիս պահպանել կորպորատիվ միանականությունը, ապահովել անհրաժեշտ հաշվետվողականությունը, հաշվետու և արդյունավետ որոշումների կայացումը, անհրաժեշտ ռազմավարական ուղղորդումը դեկավարության համար, ինչպես նաև վաստակել ներդրողների վստահությունը և խթանել նոր ներդրումները:

Մենք հաջողությամբ շարունակում ենք բարելավել Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը՝ այն համապատասխանեցնելով բանկերի և ցուցակված ընկերությունների համար ընդունված լավագույն փորձին:

Դեռևս 2018թ.-ին իրականացնելով կիմևական կառուցվածքային և ներքին կարգավորող փոփոխություններ Խորհրդի մակարդակով՝ 2019թ.-ին մենք կենտրոնացանք ավելի ցածր մակարդակներում կառուցվածքային և գործառության փոփոխությունների վրա: Մասնավորապես, մենք կառուցվածքային փոփոխություններ կատարեցինք Տնօրինությունում և համապատասխան դեպարտամենտներում և ստորաբաժանումներում՝ վերաբաշխելով և վերանայելով համապատասխան գործառույթները և մասնագիտական դրակավորումները:

Մենք շարունակում ենք աշխատանքներ տանել Խորհրդին առնչվելիս փորձի կատարելագործման ուղղությամբ, որպեսզի ստեղծենք այսպիսի միջավայր, որն ուղղված է Տնօրենների Խորհրդի ու Գործադիր Մարմնի միջև արդյունավետ և թափանցիկ հարաբերությունների և հաշվետվողականության խրախուսմանը ապահովելով համագործակցելու, բանավիճելու և որոշումների կայացման գործընթացում միյանց աջակցելու անհրաժեշտ մակարդակ:

Մեկ այլ առաջնահերթ խնդիրներից էր ապահովել Խորհրդին կից կոմիտեների ավելի ակտիվ ներգրավվածությունը կարևոր հարցերի քննարկման և որոշումների կայացման գործընթացներին: Դրա նպատակն է Խորհրդին ներկայացնել համապարփակ տվյալներ/առաջարկություններ որոշումների կայացման համար, որպեսզի Խորհրդը հնարավորություն ունենա ավելի շատ ժամանակ տրամադրել ռազմավարական խնդիրների քննարկմանը:

Բանկն զգալի առաջնահերթ է կատարել Խորհրդի անդամների հմտությունների, գիտելիքի և բազմակողմանության ճիշտ հավասարակշռությունը, ինչպես նաև Խորհրդի աշխատանքի արդյունավետությունն ապահովելու ուղղությամբ: Այդուհանդերձ, 2019-2020թթ. մեր նախատակը եղել և շարունակում է մնալ նոյնը մշակել Խորհրդի նոր հայեցակարգ և ձևավորել Խորհրդի կազմ գրեթե ամբողջությամբ բաղկացած անկախ ոչ գործադիր անդամներից, որոնց հմտությունները, փորձը և որակավորումները թույլ կտան Խորհրդին որպես կոլեգիալ մարմի, հավոլու պատշաճի իրականացնել իր դերը և էլ ավելի բարձրացնել իր արդյունավետությունը:

Նշված վերափոխումների ավարտից հետո մենք կներգրավենք Խորհրդի նոր, անկախ ոչգործադիր անդամներ՝ ամրապնդելով Բանկի Խորհրդի կարգավիճակը՝ որպես շուկայում ամենափորձառու և պրոֆեսիոնալ խորհրդի, որի կազմը համալրված է ոչ միայն ֆինանսարաններին, այլև այլ ոլորտներում խորը գիտելիքներ ունեցող ոչ գործադիր տնօրեններով:

Անդրեյ Մկրտչյան
Տնօրենների խորհրդի նախագահ


ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կորպորատիվ կառավարումն Ամերիաբանկում ըստ էության միտված է հավասարակշռելու Բանկի բաժնետերերի, Տնօրենների խորհրդի, գործադիր ղեկավարության և այլ շահագոգիր անձանց շահերը, սահմանելու կորպորատիվ հարցերով որոշումներ կայացնելու կանոններն ու ընթացակարգերը, ինչպես նաև Ներդնելու կորպորատիվ կառավարման այնպիսի համակարգ, որը թույլ կտա ստեղծել վատահովայան, թափանցիկովայան և հաշվետվողականության միջավայր ու կսպասի անհրաժեշտ երկարաժամկետ Ներդրումների, ֆինանսական կայունության և աճի խթանմանը:

Ամերիաբանկը շարունակաբար կատարելագործում է իր կորպորատիվ կառավարման համակարգը՝ համապատասխանեցնելով այն միջազգային լավագույն փորձին և կիրառելի օրենսդրական և կանոնակարգային պահանջներին:

Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը ներառում է հետևյալ մարմինները. Բաժնետերերի ընդհանուր ժողով (Բանկի կառավարման բարձրագույն մարմինը), Տնօրենների խորհրդ, Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ, Տնօրինություն և Գլխավոր տնօրեն:

Կորպորատիվ կառավարման կառուցվածքը



ՏՆՈՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Տնօրենների խորհրդի նպատակն է ապահովել Բանկի երկարաժամկետ զարգացումը ու բաժնետիրական ներդրումների առավելագույն արժեքը, ինչպես նաև կապող օղակ համույթանալ Բանկի բաժնետրերի և Գործադիր մարմնի միջև:

Տնօրենների խորհրդի հիմնական խնդիրներից է Բանկի գործունեության հիմնական ուղղությունների ու ռազմավարական զարգացման ծրագրի մշակումը, Բանկի ներքին հակողության արդյունավետ համակարգի ձևավորումը, ինչպես նաև Բանկի գործունեության առևշտող ռիսկերի պատշաճ վերահսկումն ու ռիսկերի «ախտժակի» սահմանումը:

Հաշվի առնելով այս համագամանը, որ Խորհրդի արդյունավետության տեսանկյունից առանցքային դեր է խաղում տեղեկատվության ու դեկավարման գործընթացի լիարժեք հասանելիությունը դրա անդամների համար, Բանկը կիրառում է հասուն ներքին էլեկտրոնային համակարգ՝ /Պորտալ/, որի միջոցով կազմակերպում են Տնօրենների խորհրդի աշխատանքները. Խորհրդի նիստի օրակարգի և նյութերի շրջանառությունը, քվեարկությունը, Խորհրդի անդամների հետ հաղորդակցումը, ներառյալ տեղեկատվական տարաբնույթ նյութերի և փաստաթղթերի շրջանառությունը, արձանագրությունների ամփոփումը: Համակարգը հնարավորություն է տալիս ամենատարբեր սարքերի միջոցով ապահովել Տնօրենների Խորհրդի անդամների լիարժեք հասանելիությունը և մասնակցությունը Խորհրդի աշխատանքներին աշխարհի ցանկացած անկյունից:

Ի լրումն վերոնշյալի, անց են կացվում Տնօրենների խորհրդի առկա նիստեր՝ Խորհրդի անդամների մասնակցությամբ, ինչպես նաև հեռախոսային կոնֆերանսներ, կազմակերպում են Խորհրդի բոլոր և առանձին անդամների մասնակցությամբ հանդիպումներ/ընսարկումներ Բանկի դեկավարների և այլ անձանց հետ: Այդ առումով կարևոր դեր է խաղում Տնօրենների խորհրդի նախագահ-Լիազոր անդամը, ով հավասար հնարավորություն է տալիս Խորհրդի բոլոր անդամներին արտահայտել իրենց դիրքորոշումը բոլոր հաղեցի վերաբերյալ, ինչպես նաև նպաստում է բաժնետերերի և Խորհրդի, ինչպես նաև Խորհրդի և դեկավարության միջև արդյունավետ համագործակցության ապահովմանը:

2019թ.-ին Տնօրենների խորհրդու անցկացրեց 18 հեռակա և 4 առկա նիստ: Ի թիվս այլոց, առկա նիստերու Խորհրդի կողմից քննարկվող հաղցերից էին Բանկի ռազմավարությունը և գործարար ծրագիրը, Գլխավոր Տնօրենի և Ֆինանսական Տնօրենի ներկայացրած հաշվետվությունները Բանկի գործունեության մասին, ինչպես նաև ռազմավարական նախաձեռնությունները, քաղաքական և մակրոտնտեսական վիճակը և դրա հնարավոր ակդեցությունը Բանկի գործունեության վրա: Խորհրդու նաև ուսումնասիրում է Ռիսկերի կառավարման դեպարտամենտի, Ներքին առողջության և Ներքին հակողության ստորաբաժանումների, Ռազմավարության և բիզնես վերլուծության կենտրոնի, Մարդկային ռեսուրսների կառավարման և Ներդրողների հետ փոխհարաբերությունների ծառայությունների՝ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները:

Խորհրդու պարտավոր է մշտապես ապահովել իր աշխատանքի պատշաճ կատարման համար անհրաժեշտ գիտելիքի և հմտությունների համապատասխան պաշար:

Ամերիաբանի Տնօրենների խորհրդի գործունեությունը կառավարվում է Տնօրենների Խորհրդի կանոնագրով, որով սահմանվում են Խորհրդի գործունեության հիմնական նպատակներն ու խնդիրները, իրավասությունների շրջանակը, նիստերի նախապատրաստման, իրավիրման և վարման կարգը:

Տնօրենների խորհրդի անդամները նշանակվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: ՀՀ օրենսդրության և Բանկի կանոնադրության համաձայն Բանկի տեղաբաշխված բաժնետոմսների 10 և ավել տոկոսին տիրապետող բաժնետերերն իրավունք ունեն ընդգրկվել/Նշանակվել Տնօրենների խորհրդի կազմին առանց ընտրության Հայաստանի Հանրապետության օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված ընթացակարգերի և պայմանների հիման վրա:

Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, սակայն չի կարող 5 տարուց պակաս ու 10 տարուց ավել լինել: Տնօրենների խորհրդի նախագահն ու անդամներն ունեն վերըստրվելու իրավունք:

Խորհրդի կազմը, անդամների թիվը, մասնագիտական որակավորումը, ինչպես նաև նրանց փորձառությունն ու հմտություններն անմիջականորեն ապդում են Խորհրդի արդյունավետության վրա: Խորհրդի պարբերաբար անդրադառնում է այս հարցերին և այսօրվա անելիքների տեսակյունից, և ինչ է անհրաժեշտ անել ապագայում հաջողության հասնելու համար:

2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Տնօրենների խորհրդի կազմում ընդգրկված էին Տնօրենների խորհրդի նախագահ-Լիազոր անդամն ու 6 ոչ գործադիր տնօրեններ:

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Անուն, ազգանուն	Պաշտոն	Խորհրդի կազմում առաջին անգամ ընդգրկվելու տարին
Անդրեյ Մկրտչյան	Տնօրենների խորհրդի նախագահ	2007
Ռուբեն Վարդանյան	Տնօրենների խորհրդի անդամ	2007
Նուբար Աֆեյան	Տնօրենների խորհրդի անդամ	2010
Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	2012
Պիեռ Գյուլքյան	Տնօրենների խորհրդի անդամ	2016
Լիսդսի Մ. Ֆորբս	Տնօրենների խորհրդի անդամ	2018
Ֆիլիպ Լինչ	Տնօրենների խորհրդի անդամ	2018

ՏՆօՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ

Տնօրենների խորհրդին կից կոմիտեների գործունեության հիմնական նպատակն է օժանդակել խորհրդի աշխատանքներին, նախապես մակրամասն ուսումնասիրելով խորհրդի իրավասությանը վերաբերող բոլոր հարցերը և օգնել խորհրդին ընդունել հիմնավորված որոշումներ:

Կոմիտեների գործունեությունը որևէ կերպ չի սահմանափակում Տնօրենների խորհրդի իրավասությունները ու պարտականությունները: Համաձայն Բանկի ներքին կանոնակարգերի՝ խորհրդի հաստատման ու մակրակրկիտ ուսումնասիրությանը ենթակա գործեր ցանկացած հարց նախքան Տնօրենների խորհրդին ներկայացնելը պետք է քննարկվի կոմիտեների մակարդակով:

Ներկայում Բանկում գործում է խորհրդին կից երեք կոմիտե՝ Առողջական կոմիտե, Վարձատրության կոմիտե և Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե:

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Տնօրենների խորհրդին
կից կոմիտեներ

Առողջական
կոմիտե

Վարձատրության
կոմիտե

Կորպորատիվ կառավարման
և ղեկավար անձնակազմի
նշանակման կոմիտե

Անդրեյ Մկրտչյան

Ղեկավար

Ռուբեն Վարդանյան

Ղեկավար

Նուբար Աֆեյան

Անդամ

Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի

Անդամ

Անդամ

Պիեռ Գյուրջյան

Ղեկավար

Անդամ

Լինդսի Մ. Ֆորբս

Անդամ

Ֆիլիպ Լինչ

Անդամ

Առողջական կոմիտե

Կոմիտեի հիմնական նպատակն է ապահովել բաժնետերերի շահերի պաշտպանությունը, բարձրացնել Բանկում ֆինանսական հաշվետվողականության, արտաքին առողջին, օհսկերի կառավարման և ներքին հակողության արդյունավետությունը:

2019թ. Առողջին կոմիտեն անցկացրեց 6 նիստ, որոնց ընթացքում քննարկվեցին ՖՀՄՍ համաձայն Ներկայացվող Եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները, Ներքին առողջին ստորաբաժանման Եռամսյակային հաշվետվությունները և Ներքին հակողության համակարգի ընդհանուր արդյունավետությունը:

Վարձատրության կոմիտե

Կոմիտեի նպատակն է նպաստել Բանկում վարձատրության արդյունավետ համակարգի ձևավորմանը, ապահովել դրա որակի գնահատումը, իրականացնել վարձատրության կիրավող մեխանիզմների մոնիթորինգ՝ լավագույն մասնագետներին ներգրավելու և պահելու, ինչպես նաև չարաշահման ցանկացած հնարավորություն բացառելու համար:

2019թ. Վարձատրության կոմիտեն անցկացրեց 3 նիստ: Ըստ սահմանված կարգի՝ նիստեր կայացան կիսամյակային և տարեկան գնահատումից հետո՝ քննարկելու համար անձնակավմի տարեկան պարզեցուման հարցը, դեկավարների վարձատրությունը և անձնակավմի գնահատման ընդհանուր համակարգը:

Կորպորատիվ կառավարման և դեկավար անձնակավմի նշանակման կոմիտե

Կոմիտեի նպատակը Բանկի Տնօրենների խորհրդի, Վերջինիս կից կոմիտեների և դեկավարության համար արհեստավարժ, հմուտ, փորձառու, առաքինի մասնագետներից բաղկացած կադրային բազայի ստեղծումն է, ըստ անհրաժեշտության նրանց համապատասխան պաշտոններում ներգրավումը, այդ թվում՝ փոխարինելիության ապահովումն ու կադրային բարելավումը, ինչպես նաև կիրառելի օրենսդրական կարգավորմանը համապատասխան՝ կորպորատիվ կառավարման ոլորտում միջազգային լավագույն փորձի ներդնումը:

2019թ. կոմիտեն անցկացրեց 3 նիստ, որի ընթացքում քննարկվեց խորհրդի և դրան կից կոմիտեների կազմը, և ներկայացվեցին առաջարկություններ:

ՏՆՈՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ



ԱՆԴՐԵՅ ՄԿՐՏՉՅԱՆ

Տնօրենների խորհրդի նախագահ

Անդրեյ Մկրտչյանը «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների խորհրդի նախագահն է 2013թ.-ի նոյեմբերից, իսկ մինչ այդ 2007թ.-ից մինչև 2013թ., հանդիսացել է «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների խորհրդի անդամ:

Ա. Մկրտչյանն ավելի քան 20 տարի ղեկավարում է «Ամերիա» խումբը՝ հանդիսանալով խմբի հիմնադիրն ու նախագահը: Հայաստանում ներդրումաբանկային և խորհրդատվական ծառայությունների ոլորտում ունեցած նրա հարուստ փորձը դարձել է «Ամերիա» խմբի աճի ու զարգացման գրավականը: Անդրեյ Մկրտչյանն դարձել է Համաշխարհային տնտեսական համաժողովի նոր առաջնորդների ենթախմբերից մեկի հիմնադիր անդամը՝ Հայաստանյան գործարաններից առաջինն արժանանալով այդ պատվին: Նա նաև մի շարք մասնավոր և պետական կազմակերպությունների խորհուրդների անդամ է:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: Ստացել է Ամերիկյան տնտեսական ասոցիացիայի (AEA) կրթաթոշակը՝ Կոլորադոյի պետական համալսարանի տնտեսագիտական բաժնում իր գիտական աշխատանքի համար, մասնակցել է մի շարք համալսարանների ծրագրերին, այդ թվում՝ Ֆինկանշնուրի բիզնես-դպրոց, Հարվարդի բիզնես-դպրոց, INSEAD և այլն:

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տնօրենների խորհրդի անդամ



Ռուբեն Վարդանյանն Ամերիաբանկի Տնօրենների Խորհրդի անդամ է նշանակվել 2013թ.-ի նոյեմբերից: Դրանից առաջ՝ Բանկի վերակազմավորման պահից (2007թ.) մինչև 2013թ.-ի նոյեմբերը, վրաղեցրել է «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնը:

Ռուբեն Վարդանյանը ավելի քան 20 տարվա փորձով հայտնի ներդրող, ձեռներեց ու ներդրումային բանկիր է, ով մեծ ավանդ ունի Ռուսաստանի կապիտալի շուկաների կայացման գործում: «Վարդանյան, Բրոյթման և Գործընկերներ» ընկերության հիմնադիրներից մեկն է և նախագահը, Խորհրդի անդամ բազմաթիվ ընկերություններում Ռուսաստանում և այլուր:

Պարոն Վարդանյանը նաև Միջազգային ֆինանսական կորպորացիայի Տնտեսական խորհրդատվական խորհրդի անդամ է: Նախքան 2012թ. հովազարին Սրբրբանկի հետ միավորումը Ռուսաստանի և ԱՊՀ առաջին և խոշորագույն ներդրումային բանկերից մեկի՝ «Տրոյկա Դիալոգ»-ի գլխավոր տնօրենն ու տնօրենների խորհրդի նախագահն էր: «ՍՈԼԵՌՈ» (ռուսական առաջատար ավտոմոբիլային ընկերություն) և «ԿԱՍԱԶ» ընկերությունների խորհրդի նախագահն է, «Ավիքա Փրովերթի Ինվեստորս Ինժերնեշն» ընկերության ներդրումային կոմիտեի անդամ: Նա նաև ՌԴ Պետական դումայի նախագահին աշընթեր ներդրումային խորհրդի և Արդյունաբերության և առևտի նախարարության աշընթեր նոր ոլորտներում ներդրումների ռազմավարական խորհրդի անդամ է:

Հանդիսանում է Մոսկվայի «ՍԿՈԼԿՈՎՈ» կառավարման դպրոցի հիմնադիր-գործընկեր, դպրոցի միջազգային խորհրդատվական խորհրդի փոխնախագահ, ՍԿՈԼԿՈՎ-ի Զարգացող շուկաների հետապուտության ինստիտուտի նախագահ, Scholae Mundi հիմնադրամի և Դիլիջանի միջազգային դպրոցի համահիմնադիր, Fundação Dom Cabral բիզնես-դպրոցի (Բրազիլիա) և Գուանդիայի կառավարման դպրոցի (Չինաստան) միջազգային խորհրդատվական խորհուրդների անդամ: Ռուսաստանի նախագահին առընթեր ժողովրդական տնտեսության և քաղաքացիական ծառայության ազգային ակադեմիայի և Լոմոնտոսվի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի հոգաբարձուների խորհրդի անդամ է:

Ռուբեն Վարդանյանը «Հայաստանի վարդագուման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի համահիմնադիրն է և խորհրդի նախագահը, «100 լյանք» նախաձեռնության և «Ավորու» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիր, Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական խորհրդի անդամ, Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի համահիմնադիր և Խորհրդի անդամ:

Ռուբեն Վարդանյանն ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, որից հետո ուսանել է մի շաբթ միջազգային ինստիտուտներում և դպրոցներում, այդ թվում՝ INSEAD-ում, Հարվարդի բիզնես դպրոցում, Յելլի և Սթենֆորդի համալսարաններում:

ՆՈՐԱՐ ԱՖԵՅԱՆ

Տնօրենսերի խորհրդի անդամ



Նորար Աֆեյանն Ամերիաբանկի Տնօրենսերի Խորհրդի անդամ է նշանակվել 2010թ.-ի հունիսին:

Դոկտոր Աֆեյանը Flagship Pioneering ընկերության հիմնադիր է, ավագ ղեկավար գործընկեր և գլխավոր տնօրենը:

Ընկերությունը ներդրումներ է կատարում նորաստեղծ ընկերություններում և վենչուրային նախաձեռնություններում առողջապահության և կենսաբանական տեխնոլոգիաների ոլորտներում: Ն. Աֆեյանը նաև ղեկավարում է ընկերության VentureLabs ստորաբաժանումը, որն զբաղվում է նորարար ստարտափների ստեղծմամբ և գործարկմամբ:

2000թ.-ից ի վեր դոկտոր Աֆեյանը տեխնոլոգիական ձեռներեցություն, նորարարության և առաջնորդություն է դասավանդում Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի Սլոոնի մենեջմենթի դպրոցում: Բավմաթիվ գիտական հոդվածների և արտոնագրերի հեղինակ է:

Վերջին երեք տասնամյակում Ն. Աֆեյանը մասնակցել է կենսաբանական և տեխնոլոգիական ոլորդական ուղղություն ունեցող 40-ից ավել հաջողակ ձեռնարկությունների հիմնադրմանը և կայացմանը: Նա կենսաբանական սարքավորումների և գործիքների արտադրության ոլորտի առաջատար PerSeptive Biosystems-ի հիմնադիրն էր և գործադիր տնօրենը: Applera Corporation-ի կողմից PerSeptive-ի ձեռքբերումից հետո Ն. Աֆեյանը դարձավ Applera-ի գլխավոր գործադիր և տնօրենը, նախաձեռնեց և վերահսկեց Celera Genomics ընկերության ստեղծումը: Ներկայումս դոկտոր Աֆեյանը մի շարք պետական և մասնավոր ընկերությունների խորհրդի անդամ է: Դրանց շարքում են Codiak Biosciences, Evelo BioSciences, Kaleido BioSciences, Moderna Therapeutics, Acella Health և Seres Therapeutics ընկերությունները: Արժանացել է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Technology Pioneer 2012» մրցանակին:

Ն. Աֆեյանը Հայկական բարեգործական ընդհանուր միության, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի և Դիլիջանի միջազգային դպրոցի խորհրդի անդամ է: Ներգրավված է մի շարք բարեգործական նախաձեռնություններում, «100 կյանք» նախագծի և «Ավորո» մարդասիրական նախաձեռնության համահիմնարդիներից է:

Ավարտել է McGill համալսարանը՝ քիմիական ճարտարագիտության բակալավրի կոչումով, 1983թ.: 1987թ. ստացել է կենսաբիմիական գիտությունների դոկտորի կոչումը Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում:

ՌՈԲԵՐՏ ՖՈՆ ՌԵԿՈՎՍԿԻ

Տնօրենների խորհրդի
անկախ անդամ



Ռոբերտ ֆոն Ռեկովսկին կբաղեցնում է Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի անկախ անդամի պաշտոնը 2012թ. հոկտեմբերից:

Ռոբերտ ֆոն Ռեկովսկին հանդիսացել է համաշխարհային ակտիվների կառավարման ոլորտում շուրջ 30 տարվա փորձ ունեցող Fidelity Investments ընկերության վարգացող շուկաների ռազմավարության բաժնի փոխնախագահը և պորտֆելի կառավարիչը: Կառավարել է ամերիկյան և կանադական ներդրողների մի շարք ինստիտուցիոնալ և մասրածախ ներդրումային հիմնադրամներ վարգացող շուկաներում:

1989թ.-ին տեղափոխվել է Fidelity Investments ընկերության՝ ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումների բաժն: 1995թ.-ին վարգացող շուկաների պարտքային գործիքների կառավարման խմբի հետ տեղափոխվել է բարձր եկամտաբերությամբ ներդրումների բաժն՝ որպես սուվերեն պարտքային գործառնությունների վերլուծաբան: 1996թ.-ից մինչև 1998թ. կեսերը ընկերության լուսդույսան գրասենյակում վրադիմ է եվրոպական շուկայում կապիտալ ներդրումների ուսումնասիրությամբ՝ համատեղելով աշխատանքը վերլուծաբանի պաշտոնի հետ: 2002-2004թթ. եղել է վարգացող շուկաների հիմնադրամների՝ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանների մասով պատասխանառու առաջատար կառավարիչ: 2004թ.-ին տեղափոխվել է Բոստոն, որ ստանձնել է ընկերության՝ վարգացող շուկաներում կապիտալի ներդրումային հիմնադրամների կառավարումը:

Ավարտել է Նյու-Յորքի համալսարանի համալսարանն Օլբանիում (SUNY)` ստանալով քաղաքագիտության և կառավարման բակալավրի կոչում, ինչպես նաև Հյուսիսարևելյան համալսարանը՝ ստանալով քաղաքագիտության մագիստրոսի կոչում: Ունի նաև ֆինանսների մագիստրոսի կոչում, որն ստացել է Բրենդայի համալսարանում:

ՊԻԵՌ ԳՅՈՒՐՁՅԱՆ

Տնօրենների խորհրդի անդամ



Պիեր Գյուրջյանն Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2016թ.-ի դեկտեմբերին:

Պ. Գյուրջյանը Բելգիայի խոշորագոյն համալսարաններից մեկի՝ Բյուտելի ազատ համալսարանի տնօրենների խորհրդի նախագահն է: RVVZ հիմնադրամի գործընկեր է, զբաղվում է հիմնադրամի միջազգային բարեգործական ծրագրերով:

Պ. Գյուրջյանը 27 տարի աշխատել է McKinsey & Company ընկերությունում որպես ավագ գործընկեր: 2005-2012թթ. եղել է ընկերության լյուքսեմբուրգյան գրասենյակի ղեկավար գործընկերը, այսուհետև ստանձնել մարդկային կապիտալի կառավարման ծառայությունների ղեկավարումը Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանում: Այդ պաշտոնում նրա պարտականությունների մեջ էր մտնում ընկերության հաճախորդներին աջակցելն անհատական և ինստիտուցիոնալ առաջնորդության կարողությունների կարգացման գործում: Պ. Գյուրջյանի մասնագիտական հարուստ փորձը ներառում է խորհրդատվության տրամադրում բազում ոլորտներում՝ կառավարում, ռազմավարություն, առողջունավետության ապահովում, կազմակերպական հարցեր, գործառնություններ և ընկերությունների վերակազմավորում տարածաշրջանային մակարդակով, այդ թվում՝ միաձուվումից հետո ինտեգրում:

Մի շաբթ ֆորումների (Բաուերի ֆորում, Ղեկավարների առաջխաղացում, Փոփոխության առաջնորդներ) ակտիվ մասնակից, անդամակցում է Նախագահների համաշխարհային կազմակերպությանը, YouthStart Belgium-ի (Նախկինում NFTB Belgium) տնօրենների խորհրդի նախագահն է և Բելգիայի Հարվարդի ակումբի նախկին նախագահը: Հետաքրքրություն է փիլիսոփայությամբ, որի հիման վրա մշակել է «Առաջնորդություն և իմաստություն» նորարարական ուսումնական ծրագիրը: Կարում է, Գործադիր տնօրենի հեռանկարե դասընթացը Բյուտելի ազատ համալսարանի Սոլվե բիզնես-դպրոցում: Նա նաև թելգիական առաջատար UCB դեղագործական ընկերության տնօրենների խորհրդի անդամ է, «Հայաստանի կարգացման նպատակադրություններ» (IDeA) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, ինչպես նաև Դիլիջանի միջազգային դպրոցի կառավարիչների և հոգաբարձուների խորհրդի անդամ:

Ավարտել է Բրյուսելի ազատ համալսարանը (կոմերցիոն ճարտարագիտություն որակավորմամբ) և Հարվարդի բիզնես-դպրոցը (գործարար կառավարման մագիստրոսի կոչմամբ):

ԼԻՆԴՍԻ Ո. ՖՈՐԲՍ

Տնօրենների խորհրդի անդամ



Լինդսի Ֆորբսն Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2018թ.-ի օգոստոսին:

Լինդսի Ֆորբսն ունի ավելի քան 35 տարվա փորձ առևտրային և ներդրումային բանկային ոլորտում, որից ավելի քան 20 տարին՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկում (ՎԶԵԲ):

ՎԶԵԲ-ում աշխատանքի է անցել 1994թ.-ին՝ որպես ավագ բանկիր/երկրների գծով տնօրեն (Կենտրոնական և Արևելյան Եվրոպա, պարտքային և բաժնային գործարքներ): 2000թ.-ին ստանձնում է կորպորատիվ կապիտալի գծով տնօրենի պաշտոնը և սկսում մասնագիտանալ բացառապես բաժնային գործարքներում տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: 2012-2016թթ. պրաղեցնում էր Ռուսաստանում արդյունաբերության, առևտրի և գյուղատնտեսության ոլորտներում գործարքների գծով տնօրենի պաշտոնը, պատասխանատու էր նոր բիզնեսի ձևավորման, պորտֆելների կառավարման, հաճախորդների հետ փոխարաբերությունների և թիմի ղեկավարման համար: Որպես ՎԶԵԲ-ի ներկայացուցչ հանդես է եկել բազում ցուցակված և չցուցակված կազմակերպությունների և բանկերի խորհրդների ու առողջության կոմիտեների կազմում տարբեր երկրներում, այդ թվում՝ Խորվաթիայում, Լիհաստանում, Ռուսաստանում, Եգիպտոսում:

Նախքան ՎԶԵԲ տեղափոխվելը L. Ֆորբսը 13 տարի աշխատել է British Linen Bank-ում՝ Bank of Scotland-ի՝ ներդրումային բանկային գործունեության մեջ մասնագիտացող դուստր ընկերությունում՝ վրայի կոմերցիոն վարկավորմամբ և մասնավոր ներդրումներով տարբեր երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ-ում:

Չեզը է բերել Norton Rose ընկերության՝ իրավական գործերով հավատարմատարի վկայական (1978) և աշխատել ընկերության առաքումների ֆինանսավորման բաժնում մինչև 1980թ.:

Ավարտել է Օքֆորդի համալսարանը (1975)` «իրավագիտություն» մասնագիտությամբ, և INSEAD բիզնես-դպրոցը (1981)` ստանալով գործարար կառավարման մագիստրոսի (MBA) կոչում:

ՖԻԼԻՊ ԼԻՆԶ

Տնօրենների խորհրդի անդամ



Ֆիլիպ Լինչը Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի անդամ է 2018թ.-ի հոկտեմբերից:

Ֆ. Լինչը ֆինանսների աշխարհում է ավելի քան 30 տարի, որից շուրջ 20 աշխատել է Lehman Brothers-ում՝ նախ որպես վերլուծաբան, հետո՝ Ասիա-Խաղաղ օվկիանոս տարածաշրջանի գծով Ներդրումային գործառնությունների բաժնի համարեկավար (1999-2002), Եվրոպայի գծով ֆինանսական գործառնությունների բաժնի ղեկավար (2003-2006), Եվրոպայի գծով կապիտալի բաժնի ղեկավար (2007-2008):

Lehman Brothers-ի՝ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Ասիայի հիմնարկներու Նomura-ին վաճառելուց հետո Ֆ. Լինչը ստանձնեց Nomura-ի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնը Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի գծով (2008-2009), այսուհետև Ասիա-Խաղաղ օվկիանոս տարածաշրջանի և Մերձավոր Արևելքի գծով (2010-2012):

2013-ից ի վեր Ֆ. Լինչը Stem Capital Partners-ի հիմնադիր գործընկեր է: Stem Capital Partners-ն ուղակի ներդրումներով վրադարձ անկախ ընկերություն է, որը ֆինանսական գործառնություններ է իրականացնում Հարավ-Արևելյան Ասիայում:

Ավարտել է ԱՄՆ Յելլի համալսարանը պատմագիտություն մասնագիտությամբ (1987):

ՏՆՈՐԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՈՐԵՆ



ԱՐՏԱԿ ՀԱՆԵՍՅԱՆ

Տնօրինության նախագահ-
գլխավոր տնօրեն

Արտակ Հանեսյանն ստանձնեց՝ Հայներարտբանկե ՓԲԸ-ի, ներկայում՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնը՝ 2007թ.-ի հոկտեմբերին, իսկ 2008թ.-ի ապրիլից առ այսօր վրադեցնում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենի պաշտոնը:

Ա. Հանեսյանն ունի ՀՀ բանկային համակաղում բարձրագույն դեկավար պաշտոններում աշխատելու հարուստ փորձ: Այս ոլորտում նա աշխատում է արդեն ավելի քան 25 տարի, որոնց ընթացքում վրադեցրել է մի շարք կարևոր պաշտոններ

«Կուսվերս Բանկ» ՓԲԸ-ում, Ներառյալ գլխավոր տնօրենի պաշտոնը (2006-2007), ֆինանսական գլխավոր վարչության պետի, վարչության նախագահի տեղակալի պաշտոնները (1998-2006): ՀՀ Կենտրոնական բանկում աշխատել է հետևյալ պաշտոններում՝ վերահսկողության, կարգավորման և արտոնագրման վարչության մասնագետ, ավագ մասնագետ, վերահսկողության վարչության առաջին բաժնի պետ (1995-1998): Աշխատել է նաև «Արմինվեստբանկ» ՓԲԸ-ում: (1993-1994):

Ավարտել է Երևանի Պետական Համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը՝ ստանալով մագիստրոսի կոչում:



ԳԵՎՈՐԳ ԹԱՌՈՒՄՅԱՆ

Տնօրինության անդամ,
Գլխավոր տնօրենի տեղակալ,
Ֆինանսական տնօրեն

Գևորգ Թառումյանը Տնօրինության անդամ է նշանակվել 2012թ.-ի օգոստոսին:

Գ. Թառումյանն ունի հայկական բանկերում և միջազգային բանկերի հայաստանյան դրաստր բանկերում՝ որպես գլխավոր տնօրենի տեղակալի և ֆինանսական տնօրենի պաշտոնում աշխատելու շուրջ 20 տարվա արժեքավոր փորձ: Բանկային համակարգում իր գործունեությունն սկսել է 1994թ.-ին ՀՀ Կենտրոնական Բանկի վերահսկողության ծառայությունում, որտեղ վրադեցրել է տարբեր ղեկավար պաշտոններ, ինչպես նաև համակարգել է Միջին Ասիայի և Կովկասի բանկերի վերահսկողության բազեյան կոմիտեի տարածաշրջանային խմբի աշխատանքը Հայաստանում: 1999թ.-ին տեղափոխվել է «Հայներարտբանկ» ՓԲԸ որպես ֆինանսական տնօրեն, իսկ 2006թ.-ին նշանակվել է գլխավոր տնօրենի տեղակալ: Աշխատել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում որպես գլխավոր տնօրեն-տնօրինության նախագահի տեղակալ և ֆինանսական դեպարտամենտի տնօրեն (2007-2008), այնուհետև՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում՝ որպես գլխավոր ֆինանսական տնօրեն: 2012թ. մարտին նշանակվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ: Գևորգ Թառումյանն աշխատում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 2012թ.-ի հունիսից որպես գլխավոր տնօրենի տեղակալ և ֆինանսական տնօրեն:

2016թ. դեկտեմբերի 21-ին «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը ձեռք բերեց Բանկի բաժնետոմսերի 13.5%-ը «Ամերիա Գրուպ» (Սի-Ռուայ) ընկերությունից:

2018թ. փետրվարի 14-ին Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) ձեռք բերեց Բանկի լրացուցիչ բողարկված բոլոր 16,291 բաժնետոմսերը 14,426,666 հազար դրամով:

2019թ. մարտի 4-ին «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունն ամրողությամբ ձեռք բերեց Բանկի լրացուցիչ բողարկված 146 բաժնետոմսերը 87,555 հազար դրամով:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն էին՝ «Ամերիա Գրուպ» (Սի-Ռուայ)` 56.53%, ՎԶԵԲ` 17.78%, ԱԶԲ` 13.96% «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ` 11.73%.

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաջիվների սպասարկումը, վարկերի և երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեքրերով և արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ է: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկն ունի 19 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փ. 2:

2019թ. դեկտեմբերի 31-ին Բանկի աշխատակիցների թիվը կազմում էր 1,050 (2018թ-ին՝ 891):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 34-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարրեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոշնդրությունների հետ մեկտեղ, լրացուցիչ բարություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ֆինանսական հաշվետվորյուններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության դեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկավարության գնահատականից:

Բացի այդ, 2020թ. առաջին ամիսներին համաշխարհային շուկայում տեղի են ունեցել զգալի ցնցումներ՝ պայմանավորված կորոնավիրուսի բռնկումով: Այլ գործուների հետ մեկտեղ, հիվանդության բռնկումը հանգեցրել է ֆոնդային բորսայի ցուցանիշների կտրուկ անկման: Այս զարգացումները կարող են ել ավելի մեծացնել գործունեության իրականացման հետ կապված անորոշության մակարդակը Հայաստանի գործարար միջավայրում: Կառավարությունը նախաձեռնել է 300 միլիարդ դրամ գումարով աջակցության ծրագիր, որը կարող է մեղմացնել բացասական ազդեցությունը Հայաստանի տնտեսության և կազմակերպությունների վրա (տես Ծանոթագրություն 36):

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացված ֆինանսական հաշվետվորյունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվորյունների միջազգային ստանդարտների (ՖՀՍՍ) պահանջների համաձայն:

Այս ֆինանսական հաշվետվորյուններն իրենցից ներկայացնում են Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվորյունների առաջին փաթեթը, որտեղ կիրառվել են ՖՀՍՍ 16 «Վարձակարգություններ» պահանջները: Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համապատասխան փոփոխությունները ներկայացված են Ծանոթագրություն 3-ում:

(բ) Զավման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվորյունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վճասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեքորերի, որոնք ներկայացված են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվորյունների ներկայացման արժույթն է: 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրույթամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 479.7 դրամ և 483.75 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 537.26 դրամ և 553.65 դրամ 1 եվրոյի համար:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվորյունները ՖՀՍՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար դեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման լնդրացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվորյուններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ժամուագրություններում.

- Ֆինանսական ակտիվների դասակարգում. այն թիգնես մողելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 4 (ե) (i):
- շափանիշների սահմանում որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) շափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մերուաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների շափման համար օգտագործվող մողելների ընտրություն և հաստատում – Ծանոթագրություն 30 (զ):

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այս ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա լնդրացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ժամուագրություններում.

- Ֆինանսական գործիքների արժեգրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մողելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 30 (զ),
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում – Ծանոթագրություն 35:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի փոփոխություններ

ՖՀՍՍ 16

Բանկը սկսել է կիրառել ՖՀՍՍ 16 «Վարձակալություններ» 2019թ. հունվարի 1-ից: Բանկը կիրառել է ՖՀՍՍ 16-ն օգտագործելով պարզեցված հետընթաց մոտեցումը և որոշել է շափել օգտագործման իրավունքի ձևով ակտիվը վարձակալության գծով պարտավորությանը հավասար գումարով (որոշակի ճշգրտումներով): Համապատասխանաբար, 2019թ. համար ներկայացված համայնքի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում, այսինքն՝ այն ներկայացվում է ինչպես նախկինում ՀՀՍՍ 17-ի և ՖՀՍՍԿ մելնարանություն 4 համաձայն: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների մանրամասները ներկայացված են ստորև: Բացի այդ, ՖՀՍՍ 16-ի բացահայտման պահանջներն ընդհանուր առնամբ չեն կիրառվել համայնքի տեղեկատվության նկատմամբ:

(ա) Վարձակալության սահմանումը

Նախկինում Բանկը պայմանագրի սկզբում որոշում էր, թե արդյոք համաձայնությունը հանդիսանում էր վարձակալության պայմանագիր կամ պարունակում էր վարձակալություն՝ ՖՀՍՍԿ Սեկնարանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում» համաձայն: Այժմ Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն վարձակալության սահմանման հիման վրա, ինչպես ներկայացված է ստորև:

Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը: Բանկն օգտագործում է ՖՀՍՍ 16-ով տրվող վարձակալության սահմանումը որոշելու համար, արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

ՖՀՍՍ 16-ին անցնելիս Բանկը որոշել է օգտվել գործնական բնույթի պարզեցումից, որը թույլ է տալիս չերանայել վարձակալության գործարքների բացահայտման համար նախկինում իրականացված գնահատման արդյունքները: Բանկը ՖՀՍՍ 16-ը կիրառել է միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք նախկինում որոշակիացվել են որպես վարձակալության պայմանագրեր: Պայմանագրերը, որոնք չեն որոշակիացվել որպես վարձակալության պայմանագրեր ՀՀՍՍ 17-ի և ՖՀՍՍԿ Սեկնարանություն 4-ի համաձայն, չեն վերագնահատվել ՖՀՍՍ 16-ի պահանջներին համապատասխանող վարձակալություն բացահայտելու համար: Այդ իսկ պատճառով, ՖՀՍՍ 16-ի վարձակալության սահմանումը կիրառվել է միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կերպել կամ փոփոխվել են 2019թ. հունվարի 1-ին կամ հետո:

(բ) Բանկը՝ որպես վարձակալ

Որպես վարձակալ Բանկը վարձակալում է գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի գրասենյակների տարածքները:

Համարելի ժամանակաշրջանում որպես վարձակալ Բանկը դասակարգում էր վարձակալությունները, որոնցով վարձակալին էին փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, որպես ֆինանսական վարձակալություն: Այս վարձակալության դեպքում վարձակալված ակտիվները սկզբնապես չափվում էին իրական արժեքից և նվազագույն վարձավճարների ներկա արժեքից նվազագույնով: Նվազագույն վարձավճարներն այն վճարներն էին, որոնք վարձակալության ժամկետի ընթացքում պահանջվում էին վարձակալից՝ առանց պայմանական ռենտաների: Ակզենտան ճանաչումից հետո ակտիվները հաշվառվում էին վերջիններիս նկատմամբ կիրառելի հաշվառման հաշվառման քաղաքականության համաձայն:

Այլ վարձակալությունների շրջանակում պահպող ակտիվները դասակարգվում էին որպես գործառնական վարձակալություններ և չեն ճանաչվում Բանկի ֆինանսական վիճակի նախն հաշվետվությունում: Գործառնական վարձակալության շրջանակում կատարվող վճարումները ճանաչվում էին շահույթում կամ վճարում գծային մերույղ վարձակալության ժամկետի ընթացքում:

Ստացված վարձակալության խրախուսումները ճանաչվում էին որպես վարձակալության գծով ընդիմանուր ծախսի անբաժանելի մաս վարձակալության ժամկետի ընթացքում:

ՖՀՍՍ 16-ի համաձայն՝ Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ, այսինքն, այս վարձակալությունները հաշվառվում են հաշվառման հաշվեկշռում:

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ ինչք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գլուխ:

Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա գրադեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Բանկին չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Բանկը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեքրկումից կրուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաշափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրությունով, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրությունով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Բանկը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրությը:

Բանկը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրությը, ինչք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուններից ստացված տոկոսադրությները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները:

- հաստատուն վճարումները, ներառյալ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես ակնկալվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարածզման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Բանկը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Այս վերաշափում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույթի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների թանկի գնահատականի փոփոխություն, եթե Բանկը փոխում է գննան, երկարածզման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաշափում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

(i) ՀՀՍՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալություն

Նոր ստանդարտին անցնելիս՝ ՀՀՍՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալությունների գծով պարտավարությունները չափում էին մնացած վարձավճարների ներկա արժեքով՝ գեղշված Բանկի լրացուցիչ փոխառության դրույթով 2019թ. հունվարի 1-ի դրույթամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի չափում է այն գումարով, որը հավասար է վարձակալության գծով պարտավորության՝ ճշգրտված վարձակալության գծով կատարած կանխավճարներով կամ հաշվեգրված վարձավճարներով:

Նախկինում ՀՀՍՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալության պայմանագրերի նկատմամբ Բանկը կիրառել է մի շարք գործնական բնույթի պարզեցումներ: Մասնավորապես, Բանկը՝

- չի ճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ այն վարձակալությունների հետ կապված, որոնց դեպքում վարձակալության ժամկետն ավարտվում է սկզբնական ճանաշման ամսաթվից հետո 12 ամսվա լրնքացքում,
- բացառել է սկզբնական ուղղակի ծախսումներն օգտագործման իրավունքի ձևով ակտիվների չափումից սկզբնական կիրառման ամսաթվին և
- կիրառել է դատողություններ հետադարձ ամսաթվով վարձակալության ժամկետը որոշելիս:

(ii) ՀՀՍՍ 17-ի համաձայն որպես ֆինանսական վարձակալություն դասակարգված վարձակալություն

Բանկը չուներ որպես ֆինանսական վարձակալություն դասակարգված վարձակալության պայմանագրեր 2019թ. հունվարի 1-ի դրույթամբ:

(q) Բանկը՝ որպես վարձատու

Բանկը ֆինանսական վարձակալության պայմանագրեր է կնքում հաճախորդների հետ և վարձակալության գծով ստացվելիք գումարները ճանաշում է վարձակալությունում գրանցումների մեծությանը հավասար գումարով՝ վարձակալության ժամկետի մեկնարկի ամսաթվից սկսած: Վարձակալի համար ՖՀՍՍ 16-ով նախատեսված հաշվապահական հաշվառումն ըստ էության չի փոխվել ի համեմատություն ՀՀՍՍ 17-ով սահմանված հաշվապահական հաշվառման: Վարձակալները շարունակում են բոլոր վարձակալությունները դասակարգել երկու տեսակի՝ ֆինանսական և գործառնական վարձակալության՝ կիրառելով ՀՀՍՍ 17-ով սահմանված դասակարգման նույն սկզբունքը: Վարձակալությունը դասակարգելու համար Բանկը գնահատում է, արդյոք վարձակալությամբ

փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ոլիսկերը և հատուցները, որի դեպքում վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, իսկ հակառակ դեպքում՝ որպես գործառնական վարձակալություն: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է որոշ ցուցանիշներ, մասնավորապես, արդյոք վարձակալության ժամկետի մեջ է ներառվում ակտիվի տնտեսական ծառայության մեջ մասը:

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ իմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը: Եթե պայմանագիրը պարունակում է վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչներ, Բանկը կիրառում է ՖՀՍՍ 15-ր պայմանագրում սահմանված հատուցումը վերագրելու համար:

Բանկը կիրառում է ապահանաչման և արժեգործության ՖՀՍՍ 9-ի պահանջները վարձակալությունում զուտ ներդրումների նկատմամբ: Հետագայում Բանկը կանոնավոր կերպով ուսումնասիրում է վարձակալությունում համախառն ներդրումների հաշվարկում օգտագործվող գնահատված չերաշխավորված մնացորդային արժեքները:

ՖՀՍՍ 16-ին անցնելիս Բանկից չեն պահանջվում ճշգրտումներ այն վարձակալությունների գծով, որոնց շրջանակում այն հանդես է գալիս որպես վարձատու, բացառությամբ ենթավարձակալությունների: Բանկը չունի ենթավարձակալության պայմանագրեր, այդ իսկ պատճառով, Բանկի՝ որպես վարձատուի կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման մոտեցումը չի փոխվել:

(η) Ազդեցությունը ֆինանսական հաշվետվորյունների վրա

(i) Ազդեցությունը ստանդարտին անցնելիս*

ՖՀՍՍ 16-ին անցնելիս Բանկը ճանաչել է ստորև ներկայացված լրացուցիչ իրավունքի ձևով ակտիվները և լրացուցիչ վարձակալության գծով պարտավորությունները: ՖՀՍՍ 16-ի սկզբնական կիրառումը կուտակային ազդեցություն չի ունեցել չքաշխաված շահույթի վրա: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տանդարտին անցման ազդեցությունը:

հազ. դրամ	1 հունվարի 2019թ.
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	10,984,619
Այլ ակտիվներ (տրված կանխավճարներ)	(739,942)
Վարձակալության գծով պարտավորություններ	(10,244,677)

Որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալությունների գծով պարտավորությունները չափելիս Բանկը վարձավճարները գեղեցիկ է լրացուցիչ փոխառության դրույքով 2019թ. հունվարի 1-ի դրույթի: Կիրառված միջին կշռված դրույքը կազմում է 12.92%:

հազ. դրամ	1 հունվարի 2019թ.
ՀՀՍՍ 17-ի համաձայն Բանկի ֆինանսական հաշվետվորյուններում բացահայտված գործառնական վարձակալության գծով հանձնառություններ առ 31 դեկտեմբերի 2018թ.	2,763,036
Վարձավճարների ներառում չեղյալ համարվող վարձակալությունների շրջանակում	17,241,900
Զգեղշկած վարձակալության գծով պարտավորություններ առ 1 հունվարի 2019թ.	20,004,936
Բանկի՝ որպես վարձակալի միջին կշռված լրացուցիչ փոխառության դրույքը առ 1 հունվարի 2019թ.	12.92%
Վարձակալության գծով պարտավորություններ ճանաչված առ 1 հունվարի 2019թ.	10,244,677

* ՖՀՍՍ 16-ի ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա ներկայացված է Ծանոթագրություն 22-ում:

Բանկն առաջին անգամ կիրառել է ստանդարտների որոշ փոփոխություններ, որոնք գործում են 2019թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Բանկը վաղաժամ չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ, մեկնարանություններ կամ փոփոխություններ: Ցուրաքանչյուր փոփոխության բնույթը և ազդեցությունը նկարագրվում է ստորև:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Բացառությամբ Ծանոթագրություն 3-ում բացահայտված փոփոխությունների, ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար: 2019թ. հունվարի 1-ից գործող այլ նոր ստանդարտները և փոփոխությունները ազդեցություն չեն ունեցել ստորև ներկայացված Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսարվի փոխարժեքով:

Հաշվետու ամսարվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հողվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վճասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույթով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված անորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված անորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսարվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափող արտարժույթով ոչ դրամային հողվածները վերահաշվարկվում են գործառնության ամսարվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վճասում, բացառությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափող բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վճաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ են կանխիկ բորբագամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդներն, այդ թվում՝ ՀՀ դրամով արտահայտված պարտադիր պահուստը և այլ բանկերում պահվող ահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են անորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույթ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վճառում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույթն այն դրույթն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ճեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույթը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ճեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ոիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույթ՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույթի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույթի աճբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ բողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույթի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտաքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտ և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույթը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույթը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույթը վերանայվում է լրացող դրույթով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույթների փոփոխություններն արտացոլելու նպատակով: Արդյունավետ տոկոսադրույթը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրույթամբ, եթե սկսվում է համապատասխան ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույթը՝ ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլև չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամուտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույթը՝ ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

Ներկայացում

Ծահույթի կամ վճարի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույթի մերույթ հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Ծահույթի կամ վճարի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված այլ տոկոսային եկամուտը ներառում է իրական արժեքով՝ չափությունը կամ վճարի միջոցով իրական արժեքով չափվող ոչ ածանցյալ պարտքային ֆինանսական գործիքների և ֆինանսական վարձակալություններում գուտ ներդրումների գծով տոկոսային եկամուտը:

Ծահույթի կամ վճարի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսները, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույթի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույթի հաշվարկում (տես Ծանոթագրություն 4 (զ)):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կիանզեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառությունը գծով վճարը ճանաչվում է գծային մերույթ՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում թանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՍՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՍՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում թանկը նախ կիրառում է ՖՀՍՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՍՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՍՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսները հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ չափույթի կամ վճարի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորդված չէ որպես իրական արժեքով՝ չափույթի կամ վճարի միջոցով չափվող.

- ակտիվը պահպում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և շմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորդված չէ որպես իրական արժեքով՝ չափույթի կամ վճարի միջոցով չափվող.

- ակտիվը պահպում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և շմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուսները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նոյն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

- արդյունավետ տոկոսադրույթի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վճարներ:

Եթե այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապահանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շափույթ կամ վճար:

Առևտրական նպատակով չպահպող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ թանձնվող կարող է անշրջելի լնտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս լնտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վճարի կազմ, և շահույթում կամ վճարում արժեգլուխում չի ճանաչվում: Շահարաժինները ճանաչվում են շահույթում կամ վճարում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահարաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապահակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապահակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վճարի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորդշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապահակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վճարի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Քիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն քիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահիվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և դեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը:

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք դեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի դեկավարությանը:
- քիզնես մոդել (և այդ քիզնես մոդելում պահիվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում քիզնեսի դեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրազործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահիվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի իմունիքով, չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վճարի միջոցով, քանի որ չեն պահիվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՝ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՝ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում շմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվորյան հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը:

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակափրման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեզըսի իրավունքի ակտիվների գծով պայմանագրվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույթների պարբերաբար վերասահմանումը:

Բանկն ունի ֆիքսված տոկոսադրույթով երկարաժամկետ վարկերի պորտֆել, որոնց հետ կապված հնարավորություն ունի վերանայել տոկոսադրույթը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հիմնական տոկոսադրույթի փոփոխության դեպքում: Վարկառուն հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույթի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Բանկը որոշել է, որ այս վարկերի պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, քանի որ այս հնարավորությունից օգտվելու դեպքում տոկոսադրույթն այնպես է փոփոխվում, որ դառնում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում շմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվորյան հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի համար հատուցում: Փոխարենը, Բանկը այս վարկերը դիտարկում է որպես ըստ իրենց եռթյան լողացող տոկոսադրույթով վարկեր (տես Ծանոթագրություն 4 (ե) (iii)):

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբանական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվորյան հանձնառությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

ii. Ապաճանաշում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաշում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաշելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի կամ ապաճանաշված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաշված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաշվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով շափող նախորդշված բաժնային ներդրումային արժեքորերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաշված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաշվում շահույթուն կամ վնասում նշված արժեքորերի ապաճանաշման ժամանակ: Ապաճանաշման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաշվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունում ճանաշված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաշվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեքորերի փոխատվորյունը և վաճառքի ու հետզննան գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակող ներգրավվածության շափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաշում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

iii. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապահանչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ:

- Վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վճառում՝ որպես ապահանչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույթների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույթի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապահանչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չնարկված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի փոփոխությունը պայմանագրով արժույթում է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն փոփոխության նպատակն է առավելագույն չափով վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես փոփոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դրամական փոփոխությունը կատարելը (տես ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն աղբում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապահանչման չափանիշները միշտ չեն որ քավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում գնահատելու համար փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հաճախեցնում ֆինանսական ակտիվի ապահանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես փոփոխություն օգուտ կամ կորուստ շահույթում կամ վճառում: Լողացող տոկոսադրույթով ֆինանսական ակտիվների համար փոփոխություն օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույթը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Փոփոխման շրջանակում ցանկացած կրած ծախսուն կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման փոփոխությունն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեգրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույթով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույթով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույթի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույթի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույթով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույթը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապահանաչում է ֆինանսական պարտավորությունը, եթե փոփոխվում են վերջինիս պայմանները և եթե փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վճառում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գործի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով որակական հոսքերի գեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և գեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած որակական հոսքերի գեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապաճանաչնան պայմանները, պարտավորության անորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վճարում: Լողացող դրույթով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույթը ճշգրտվում է արտացղելու համար լնթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Յանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Յանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույթի վերահաշվարկի միջոցով:

iv. Արժեգորկում

Տես նաև Ծանոթագրություն 30 (գ):

Քանիլ ճանաչում է կորսարի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վճարի միջոցով իրական արժեքով չափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար:

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- գուտ ներդրումներ ֆինանսական վարձակալություններում,
- ֆինանսական երաշխափորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Քաժնային գործիքներում ներդրումների գծով արժեգորկումից կորուստ չի ճանաչվում:

Քանիլ կորսարի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վճարի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով:

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ասմարվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ (բացառությամբ ֆինանսական վարձակալություններում գուտ ներդրումների), որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես Ծանոթագրություն 30 (գ)):

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսարվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի լնթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, բայց ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեգորկված չեն) և 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեգորկված են):

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված զնահատականն են և չափում է հետևյալ կերպ:

- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսարժի դրույթամբ. որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարրերությունն է),
- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսարժի դրույթամբ. որպես համախառն հաշվեկշռային արժեքի և զնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարրերություն,
- չօգտագործված վոխսատվորյան հանձնառություններ. որպես հետևյալ նշվածների միջև տարրերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է վոխսառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր. որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք վոխսառություն են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Տես նաև Ծանոթագրություն 30 (գ):

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, զնահատվում է ֆինանսական ակտիվն ապածանաչելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 4 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստը չափում են հետևյալ կերպ:

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապածանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես Ծանոթագրություն 30 (գ));
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապածանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապածանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը գեղշվում է ապածանաչման ակնկալվող ամսարժից մինչև հաշվետու ամսարիվ՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսարժի դրույթամբ Բանկը զնահատում է ամորտիզացված արժեքով չափում ֆինանսական ակտիվները, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափում պարտքային ֆինանսական ակտիվները և գումար ներդրումները ֆինանսական վարձակալություններում պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի զնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ բողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեքի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատքարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, ֆիզիկական անձանց տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտաստումներում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկումակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկումակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի բողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանակությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Սա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափող ֆինանսական ակտիվներ՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- փոխատվության համձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր՝սովորաբար որպես պահուստ,
- երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված քաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հաճճնառության քաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված քաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու քաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված քաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված քաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված քաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և

- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափողով պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեքորենը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), եթե գոյություն չունի անբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: «Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, եթե Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխառությունը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեգործումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վճասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվորյունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ՝ վճարնան ենթակա գումարների փոխառություն Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհաղիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այլ գործիքի բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- արդյոք երաշխավորությունը պահանջվում է պարտքային գործիքի պայմանագիրը կարգավորող օրենքներով և կանոնակարգերով,
- արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
- արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելածար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխառություն ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեգործված է և ոչ էլ ենթարկել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այս

ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխառուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում են շահույթում կամ վճարում՝ «պարտքային ֆինանսական ակտիվների արժեքը կորուստներ» հոդվածում:

(գ) Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը, ֆակտորինգի գծով ստացվելիք գումարները և ակրելի փակցությունը կամ ամորտիզացված արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետազոտման ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը, և
- գումարները ֆինանսական վարձակալություններում:

(հ) Ավանդներ, բողարկված պարտքային արժեքորեր և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, բողարկված պարտքային արժեքորերը և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետազոտման չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորշում են որպես շահույթի կամ վճարում միջոցով իրական արժեքով չափվող:

(ի) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխառություն համար վճար, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դերիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույթով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետազոտման դրամը չափվում են հետևյալ նշաններից ավելի բարձրով՝ ՖՀՍՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուատից (տես Ծանոթագրություն 4 (ե) (iv)) և սկզբանապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՍՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վճարում միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուատ (տես Ծանոթագրություն 4 (ե) (iv)) ՖՀՍՍ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուատների կազմում:

(թ) Հետզննան և հակադարձ հետզննան պայմանագրեր

Վաճառքի և հետզննան պայմանագրերով («ուղղություն») վաճառված արժեքերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեքերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունում, իսկ պայմանագրային կողմից պարտավորությունը ներառվում է ուղղությունը գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետզննան գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վճառում ուղղությունը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդ:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ուղղություն») ձեռք բերված արժեքերը գրանցվում են որպես հակադարձ հետզննան պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ: Զենքերման և վերաբաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վճառում ուղղությունը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեքերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահպող պարտավորություն և շափում է իրական արժեքով:

(ժ) Հիմնական միջոցներ

(ի) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վճառում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- | | |
|---------------------------------------|--------------|
| - վարձակալված գույքի բարեկավում | 5-ից 20 տարի |
| - համակարգիչներ և կապի սարքավորումներ | 5-ից 10 տարի |
| - տնտեսական գույք | 5-ից 10 տարի |
| - փոխադրամիջոցներ | 7 տարի |

(ի) Ωչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական արժեքի ինքնարժեքին:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վճառում գծային մերուդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության լնիքացրում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 1-ից 10 տարի:

(1) **Պահուստներ**

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունում ճանաչվում է, եթե Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են գեղեցրվ ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի լնիքացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ոխսկերը:

(ի) **Քաժնետիրական կապիտալ**

(i) **Սովորական բաժնետոմսեր**

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների բողարկմանն ուղղակիորեն վերագրելի լուսացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

(ii) **Էմիսիոն եկամուտ**

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

(iii) **Ծահարաժիններ**

Ծահարաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահարաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, եթե հայտարարվում են:

(δ) **Առգրավված գույք**

Առգրավված գույքը հաշվառվում է սկզբնական արժեքից և զուտ իրացման արժեքից նվազագույնով:

(γ) **Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում**

Ցուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրույթամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի լնիքացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ոխսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների

Աերիոսքներից մեծապես անկախ դրամական միջոցների ներիութեր չառաջացնող ակտիվների փոխատուցվող գումարը որոշվում է այն դրամատեղ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, եթե ակտիվի կամ նրա դրամատեղ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վճարում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխատուցվող գումարը որոշելիս օգտագործված զնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն շափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(h) Սեզմենտային հաշվետվորյուններ

Գործառնական սեզմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են զլիսավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեզմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները զնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվորյուն: Բանկի սեզմենտային հաշվետվորյունները հիմնված են հետևյալ գործառնական սեզմենտների վրա՝ մանրածախ բանկային գործունեություն, կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն, առևտրային բանկային գործունեություն:

(d) Հարկում

Շահույթահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահույթահարկը ճանաչվում է շահույթում կամ վճարում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հողվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահույթահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսարժի դրույթամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվորյուններում արտացոլվելու նպատակով՝ որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարրերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարրերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, որն ազդեցույթուն չունի ոչ հաշվապահական և ոչ հարկվող շահույթի կամ վճարի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վճարների, չօգտագործված հարկային գեղշերի և նվազեցվող ժամանակավոր տարրերությունների գծով այն շափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթը, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարրերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե

հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է զոյտքյուն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսարվի դրույթամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Զճանաշված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսարվի դրույթամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույթները, որոնք ակնկալվում են, որ կիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսարվի դրույթամբ:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

(η) Հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Սի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ գործում են 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները: Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և մեկնարանություններն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումների փոփոխությունները ֆՀՍՍ ստանդարտներում,
- «Էական» տերմինի սահմանում (ՀՀՍՍ 1-ի և ՀՀՍՍ 8-ի փոփոխություններ),
- ՖՀՍՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»:

5 Մեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակների համար Բանկի գործունեությունը բաժանված է հետևյալ երեք գործառնական սեզմենտի՝ հիմք ընդունելով մատուցվող ապրանքները և ծառայությունները:

Մանրածախ բանկային
գործունեություն

Ֆիզիկական անձանց, փոքր և միկրո ձեռնարկությունների ավանդների սպասարկում, սպառողական վարկերի, օվերլուաֆտների, վարկային քարտերի, փոքր և միկրո վարկերի տրամադրում:

Կորպորատիվ և ներդրումային
բանկային գործունեություն

Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի և վարկային գծերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների սպասարկում, ներդրումային բանկային ծառայությունների մատուցում, այդ թվում՝ անդերքայթինգի ծառայություններ և ֆինանսական խորհրդատվություն:

Առևտրային բանկային
գործունեություն

Արտարժույթի առուվաճառքի գործառնություններ, պարտատոմսերի պորտֆելի կառավարում, կարճաժամկետ միջոցների ներգրավվում կամ տրամադրում միջքանկային վարկերի միջոցով, հետզննան պայմանագրեր իրացվելիության կառավարման նպատակների համար, բրոքերային ծառայությունների մատուցում և այլն:

Ուսուրաների բաշխման և գործունեության վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով՝ դեկավարությունը վերահսկում է իր ստորաբաժանումների գործունեության արդյունքներն առանձին իինունքով: Շահութահարկը կառավարվում է շահույթը նախքան եկամտահարկով հարկումը իինունքով և բաշխվում է գործառնական սեզմենտների միջև:

Գործառնական սեզմենտների միջև փոխանցումների գները հիմնված են պարզած ձեռքի հեռավորության սկզբունքի վրա, ինչպես և երրորդ կողմերի հետ գործարքների դեպքում:

2019թ. կամ 2018թ. չի գրանցվել մեկ արտաքին հաճախորդի կամ պայմանագրային կողմի հետ իրականացված որևէ գործարք, որից ստացված հասույթը կազմել է Բանկի ընդհանուր հասույթի 10%-ը կամ ավելին:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված տեղեկատվություն Բանկի գոծառնական սեզմենտների եկամուտի և շահույթի, որոշ ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ:

	Սանրածախ քանային գործունեություն հազ. դրամ	Կորպրոպարտիվ և ներդրումային քանային գործունեություն հազ. դրամ	Առևտրային քանային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2019թ.				
Չուտ տոկոսային եկամուտ	6,049,625	20,393,147	4,555,842	30,998,614
Չուտ ոչ տոկոսային եկամուտ	1,519,349	3,895,845	3,535,000	8,950,194
Միջազգային եկամուտ	9,803,150	(5,747,293)	(4,055,857)	-
Գործառնական շահույթ	17,372,124	18,541,699	4,034,985	39,948,808
Պարտքային կորուստների գծով ծախս	(3,309,378)	(3,861,650)	-	(7,171,028)
Այլ արժեգույն	-	(29,783)	-	(29,783)
Մաշվածություն և ամորտիզացիա	(2,093,029)	(599,723)	(165,842)	(2,858,594)
Անձնազմի գծով և այլ ընդհանուր վարչական ծախսեր	(9,095,247)	(3,905,817)	(918,825)	(13,919,889)
Շահույթ նախրան շահութահարկով հարկում	2,874,470	10,144,726	2,950,318	15,969,514
Շահութահարկի գծով ծախս	(626,582)	(2,584,849)	(643,115)	(3,854,546)
Շահույթ տարվա համար	2,247,888	7,559,877	2,307,203	12,114,968

	Սանրածախ քանային գործունեություն հազ. դրամ	Կորպրոպարտիվ և ներդրումային քանային գործունեություն հազ. դրամ	Առևտրային քանային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2019թ.				
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	178,203,827	421,360,830	77,843,858	677,408,515
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	336,668,100	501,886,209	6,936,319	845,490,628

Տոկոսաբեր ակտիվները ներառում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, շահույթի կամ վճարի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերը և փոխատվորյունները, հակադարձ հետզննան պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված համախառն վարկերը և փոխատվորյունները և ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները:

Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկերի ավանդները և մնացորդները (բացառությամբ լրու հաշվեների), հետզննան պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշվեները և ավանդները, բողարկված պարտքային արժեքները, այլ փոխառությունները և ստորադաս փոխառությունները:

	Սանրածախ քանային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ քանային գործունեություն հազ. դրամ	Առևտրային և ներդրումային քանային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2018թ.				
Չուտ տոկոսային եկամուտ	1,382,860	21,223,002	4,725,209	27,331,071
Չուտ ոչ տոկոսային եկամուտ	1,438,143	3,435,683	4,577,401	9,451,227
Միջսեգմենտային եկամուտ	12,266,116	(8,441,826)	(3,824,290)	-
Գործառնական շահույթ	15,087,119	16,216,859	5,478,320	36,782,298
Պարտքային կորուստների գծով ծախս	(2,425,331)	(6,797,680)	(157,954)	(9,380,965)
Այլ արժեզրկում	-	(22,749)	-	(22,749)
Մաշվածություն և ամորտիզացիա	(985,516)	(160,440)	(83,397)	(1,229,353)
Անձնվազմի գծով և այլ ընդհանուր փարչական ծախսեր	(8,327,863)	(3,015,020)	(1,482,380)	(12,825,263)
Ծահույթ նախրան շահութահարկով հարկում	3,348,409	6,220,970	3,754,589	13,323,968
Ծահութահարկի գծով ծախս	(709,069)	(1,283,923)	(828,532)	(2,821,524)
Ծահույթ տարվա համար	2,639,340	4,937,047	2,926,057	10,502,444

	Սանրածախ քանային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ քանային գործունեություն հազ. դրամ	Առևտրային և ներդրումային քանային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2018թ.				
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	118,651,578	445,244,596	66,142,737	630,038,911
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	280,388,443	377,860,540	22,638,025	680,887,008

Տոկոսաբեր ակտիվները ներառում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, շահույթի կամ վճասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերը և փոխատվությունները, հակադարձ հետզննան պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված համախառն վարկերը և փոխատվությունները և ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները:

Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկերի ավանդները և մնացորդները (բացառությամբ լրու հաշիվների), հետզննան պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները, թողարկված պարտքային արժեքները, այլ փոխառությունները և ստորադաս փոխառությունները:

Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Ստորև ներկայացված է հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի քաջածքը ըստ սեզոնների ՖՀՄՍ 15-ի շրջանակում 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	Սանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2019թ.				
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով նկամուտ	3,454,430	1,829,542	155,192	5,439,164
Եկամուտ խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայություններից	-	1,001,576	-	1,001,576
Այլ հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	365,843	292,164	-	658,007
Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	3,820,273	3,123,282	155,192	7,098,747
2018թ.				
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով նկամուտ	2,722,827	1,569,308	219,095	4,511,230
Եկամուտ խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայություններից	-	721,322	1,800,617	2,521,939
Այլ հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	166,569	171,340	-	337,909
Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	2,889,396	2,461,970	2,019,712	7,371,078

6 Զուտ տոկոսային եկամուտ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույթի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվորյուններ	53,157,387	47,053,601
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեքներ	3,015,197	3,056,988
Ֆակտորների գծով ստացվելիք գումարներ	939,980	677,225
Հակադարձ հետզննան պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	538,526	542,952
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	504,202	471,902
Բանկերին տրված վարկեր և փոխատվորյուններ	124,304	417,820
Այլ	38,959	22,237
	58,318,555	52,242,725
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեքներ	852,706	711,566
Արդյունավետ տոկոսադրույթի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	59,171,261	52,954,291
Այլ տոկոսային եկամուտ		
Իրական արժեքով՝ շահուութիւն կամ վնասի միջոցով միջոցով չափվող ներդրումային արժեքներ	624,945	396,791
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	375,741	196,270
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	188,819	92,814
Այլ տոկոսային եկամուտ	1,189,505	685,875
Ընդամենը տոկոսային եկամուտ	60,360,766	53,640,166
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	12,166,015	10,669,140
Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ	9,976,484	10,895,124
Թողարկված պարտքային արժեքներ	3,123,159	2,604,298
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,708,196	1,225,204
Վարձակալության գծով պարտավորություններ	1,294,627	-
Հետզննան պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	558,606	281,181
Ակրեդիտիվների և տրամադրված երաշխափորությունների գծով վճարվելիք գումարներ	521,002	631,857
Այլ	14,063	2,291
	29,362,152	26,309,095
Զուտ տոկոսային եկամուտ	30,998,614	27,331,071

7 Սիջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Պլաստիկ քարտերի սպասարկման վճարներ	2,602,582	2,051,820
Դրամական փոխանցումներ	933,286	942,134
Կանխիկացում, հաշվեմերի սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ	806,024	890,990
Բրոքերային ծառայություններ և աներրայիններ	585,077	184,281
Երաշխավորությունների և ակրեդիտավունների տրամադրում	267,337	261,087
Վճարահաշվարկային գործառնություններ	167,842	136,278
Այլ	77,016	44,640
	5,439,164	4,511,230

(ա) Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Բանկի հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթը հիմնականում ներառում է միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը, խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայությունների մատուցումից ստացվող հասույթը: Բանկը միջնորդավճարների և այլ վճարների, խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայությունների գծով հասույթը հիմնականում ճանաչում է ժամանակի որոշակի պահին: 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31 ավարտված տարիների շահույթի կամ վճասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթը ներառում է.

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը	5,439,164	4,511,230
Եկամուտ խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայություններից	1,001,576	2,521,939
Այլ հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	658,007	337,909
	7,098,747	7,371,078

(ը) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի վերաբերյալ:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Այլ ակտիվներում ներառված դեբիտորական պարտք	80,815	30,387

8 Սիջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	1,158,619	828,537
Դրամական փոխանցումներ	228,980	169,092
Երաշխավորությունների և ակրեդիտիվների տրամադրում	41,777	55,364
Այլ	72,004	58,601
	1,501,380	1,111,594

9 Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեքների գծով	414,608	244,025
Զուտ (վնաս)/օգուտ արժուրային և տոկոսարդույթային ածանցյալ գործիքների գծով	(99,450)	751,552
	315,158	995,577

10 Զուտ օգուտ փոխարժեքային տարրերություններից

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Զուտ օգուտ սփոթ գործարքներից	4,043,700	3,586,028
Զուտ օգուտ/(վնաս) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	533,971	(451,969)
	4,577,671	3,134,059

11 Այլ գործառնական եկամուտ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Եկամուտ տույժերից և տուգանքներից	1,121,772	1,382,383
Եկամուտ խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայություններից	1,001,576	2,521,939
Օգուտ անդրտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեքների վաճառքից	398,569	-
Զուտ եկամուտ առզրավված ակտիվների վաճառքից	232,127	106,280
Այլ	425,880	231,629
	3,179,924	4,242,231

12 Այլ գործառնական ծախսեր

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Վճարային համակարգերի գծով ծախսեր	831,320	626,757
Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող պետական իիմնադրամին	684,933	485,453
Ծրագրային ապահովման սպասարկում	362,373	341,874
Հաճախորդներին տրված վարկերը սկզբնապես շուկայական տոկոսադրույթներով ճանաչելու հետևանք	280,787	-
Գործակալական վճար	209,165	197,039
Տերմինալների օգտագործման վճարներ	109,368	126,706
Գրավի գրանցման ծախսեր	106,482	53,038
Ֆինանսական համակարգի հաշտարար	78,260	67,411
Ինկասացիա	74,842	64,444
Վարկային ռեզիստրի գծով ծախսեր	68,789	60,938
Պահառուական ծառայություններ	35,386	26,848
Քեշբեր և հաճախորդների մերգրավման գծով ծախսեր	24,515	35,603
Մշտադիրկման ծառայություններ	18,696	21,192
Այլ.	<u>520,974</u>	<u>368,338</u>
	<u>3,405,890</u>	<u>2,475,641</u>

13 Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վճախ և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվորյունում գրանցված ֆինանսական գործիքների գծով արժեզրկումից կորուստները:

հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրամց համարժեքներ	(19,843)	-	-	(19,843)
Հակադարձ հետզհմնան պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(8)	-	-	(8)
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	61,602	-	-	61,602
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	1,080,240	1,756,197	4,653,501	7,489,938
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	7,599	-	(53,803)	(46,204)
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	(27,120)	-	-	(27,120)
Ավելիությունների գծով ստացվելիք գումարներ	(22,854)	-	-	(22,854)
Ամրաժիգացված արժեքով շափող ներդրումային արժեքորեր	(373,558)	-	-	(373,558)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով շափող ներդրումային արժեքորեր	(79,423)	-	-	(79,423)
Այլ ֆինանսական ակտիվներ	(10,541)	258	222,722	212,439
Հանձնառություններ	(4,000)	(5,613)	(14,328)	(23,941)
Ընդամենը ծախս պարուքային կորուստների գծով	612,094	1,750,842	4,808,092	7,171,028

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վճարի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների գծով արժեզրկումից կրուստները:

հազ. դրամ	1-ին փոռ	2-րդ փոռ	3-րդ փոռ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեներ	17,021	-	-	17,021
Հակադարձ հետզննան պայմանագրերի գծով ստացվելիք գործարներ	7	-	-	7
Բանկերին տրված վարկեր և փոխատվորյուններ	(5,651)	-	60,652	55,001
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվորյուններ	4,454,462	182,071	4,135,777	8,772,310
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գործարներ	2,486	-	211,682	214,168
Ֆակտորինգի գծով ստացվելիք գործարներ	24,455	-	-	24,455
Ավելիդաշիվների գծով ստացվելիք գործարներ	21,618	(112,660)	-	(91,042)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեքորեր	85,437	-	-	85,437
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեքորեր	72,517	-	-	72,517
Այլ ֆինանսական ակտիվներ	8,024	(2,025)	270,040	276,039
Հանձնառություններ	(20,546)	(17,082)	(7,320)	(44,948)
Ընդամենը ծախս պարուքային կրուստների գծով	4,659,830	50,304	4,670,831	9,380,965

14 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա*	2,858,594	1,229,353
Գովազդ և շուկայավարում	899,241	698,705
Այլ ծախսեր վարձակալության գծով (2018թ-ին՝ գործառնական վարձակալություն)	472,016	2,204,391
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	413,885	319,010
Մասնագիտական ծառայություններ	263,041	223,635
Վարկերի վերադարձման գծով ծախսեր	210,898	114,508
Անվտանգության ծառայություն	200,941	168,667
Դաշնարարացներ և կրրություն	180,677	104,121
Կապի և տեղեկատվական ծառայություններ	150,939	130,506
Գործուղումների և ներկայացուցական ծախսեր	128,400	134,270
Բարեգործություն և հովանավորություն	124,058	94,191
Էլեկտրականության և կոմունալ ծախսեր	95,144	103,734
Գրասենյակային ծախսեր	85,938	46,405
Ապահովագրություն	44,427	36,276
Հարկեր, բացառությամբ աշխատավարձի գծով հարկերի և շահութափակի	23,998	24,563
Այլ	525,225	485,879
	6,677,422	6,118,214

* 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մաշվածության և ամորտիզացիայի գումարում ներառված 1,027,215 հազար դրամը վերաբերում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ամորտիզացիային՝ ֆՀՍՍ 16 «Վարձակալություններ» պահանջների համաձայն (տես Ծանոքագրություն 22):

15 Հահութահարկի գծով ծախս

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Հճարացիկ տարվա հարկի գծով ծախս	2,784,667	2,923,474
Նախորդ տարվա ընթացիկ հարկի գծով ճշգրտումներ	-	127,794
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարրերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	1,069,879	(229,744)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	3,854,546	2,821,524

2019թ.-ին լճարացիկ հարկի գծով կիրառելի դրույքը կազմում է 20% (2018թ.-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2019թ. հազ. դրամ	%	2018թ. հազ. դրամ	%
	15,969,514		13,323,968	
Շահույթ նախքան հարկումը	15,969,514			
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	(3,193,903)	(20.0)	(2,664,794)	(20.0)
Զնվագեցվող ծախսներ	(754,970)	(4.7)	(37,641)	(0.3)
Հարկի դրույքի նվազեցման հետևանք*	94,327	0.6	-	-
Նախորդ տարվա շահութահարկի ճշգրտում	-	-	(127,794)	(1.0)
Չուտ օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից և զուտ վճար շահույթի կամ վճարի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով (չափավող մաս)	-	-	8,705	0.1
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	(3,854,546)	(24.1)	(2,821,524)	(21.2)

* Համաձայն 2019թ. հունիսի 25-ի հարկերի մասին որոշման՝ 2020թ. հունվարի 1-ից գործում է նոր հարկային օրենսգիրքն ըստ որի շահութահարկի դրույքը 20%-ից նվազել է 18%: Հաշվի առնելով, որ օրենսդրության փոփոխությունն ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանում, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրույթամբ հետաձգված հարկի գծով մնացորդները հաշվարկվել են օգտագործելով հարկի կիրառելի դրույքը, որն ըստ ակնկալիքների պետք է գործեր հակադարձման ժամանակ:

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվորություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարրերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություն և զուտ հետաձգված հարկային պարտավորություն համապատասխանաբար 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրույթամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարրերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարրերությունների փոփոխությունները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	Ծահույթում կամ վճառում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.
Իրական արժեքով՝ շահույթի կամ վճասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	(36,011)	(34,929)	-	(70,940)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեքորեք Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվորյուններ	(54,470)	(14,296)	(34,464)	(103,230)
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներ և պահուստներ	(179,080)	(1,078,514)	-	(1,257,594)
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներ և պահուստներ	(18,770)	(119,645)	-	(138,415)
Հիմնական միջոցներ	(51,740)	34,824	-	(16,916)
Օգտագործման իրավունքի ձևի ակտիվ/վարձակալության զծով պարտավորություն	-	89,699	-	89,699
Այլ ակտիվներ	44,296	38,437	-	82,733
Այլ պարտավորություններ	594,242	7,053	-	601,295
Այլ փոխառություններ	(112,569)	7,492	-	(105,077)
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	185,898	(1,069,879)	(34,464)	(918,445)

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	ՖՀՍՍ 9 կիրառման հետևանք	Ծահույթում կամ վճառում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.
Իրական արժեքով՝ շահույթի կամ վճասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	(30,281)	-	(5,730)	-	(36,011)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեքորեք Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվորյուններ	(84,556)	-	14,503	15,583	(54,470)
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներ և պահուստներ	(197,755)	173,222	5,763	-	(18,770)
Հիմնական միջոցներ	(68,334)	-	16,594	-	(51,740)
Այլ ակտիվներ	25,243	-	19,053	-	44,296
Այլ պարտավորություններ	448,558	-	145,684	-	594,242
Այլ փոխառություններ	(42,690)	-	(69,879)	-	(112,569)
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(1,025,103)	965,674	229,744	15,583	185,898

16 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Կամիսկը դրամարկրում	30,542,976	23,812,923
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	192,296,163	108,760,743
Նոստրո հաշիվներ այլ քանկերում		
- Aa1-ից Aa3 վարկանիշով	15,619,437	-
- A1-ից A3 վարկանիշով	3,872,463	2,055,194
- Baa1-ից Baa3 վարկանիշով	4,351,050	8,659,732
- Ba1-ից Ba3 վարկանիշով	591,763	363,521
- առանց վարկանիշի	103,187	744,991
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ քանկերում	24,537,900	11,823,438
Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	247,377,039	144,397,104
Պարտքային կորստի գծով պահուստ	(23,349)	(43,192)
Ընդամենը գուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	247,353,690	144,353,912

Պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, Բանկն ունի մեկ քանկում տեղաբաշխված միջոցներ (2018թ-ին Բակը չուներ որևէ այլ քանկում տեղաբաշխված միջոցներ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 15,619,437 հազար դրամ:

Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում

ՀՀ ԿԲ-ում պահպող նոստրո հաշիվները վերաբերում են վճարահաշվարկային գործունեությանը (տես Ծանոթագրություն 18) և անհրաժեշտության դեպքում կարող են ելքագրվել:

Ստորև բերվող այլուսակներում ներկայացված է դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	2019թ.		
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			
Մնացորդը առ 1 հունվարի	(43,192)	-	-
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-
Կորստի պահուստի գուտ վերաշափում	43,192	-	43,192
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(23,349)	-	(23,349)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	(23,349)	-	(23,349)

	2018թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
հազ. դրամ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(26,171)	-	-	(26,171)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	-	-	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորսի պահուստի գուտ վերաչափում	26,171	-	-	26,171
Ակզենտավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(43,192)	-	-	(43,192)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	(43,192)	-	-	(43,192)

17 Ներդրումային արժեքորեն և ածանցյալ ֆինանսական ակտիվներ

(ա) Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
-ՀՀ կառավարության արժեքորեն	5,639,623	3,896,848
-Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	496,024	495,621
Ընդամենը պետական պարտատոմսեր	6,135,647	4,392,469
Հայկական կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր		
-B1-ից B3 վարկանիշով	882,314	1,027,465
-առանց վարկանիշի	1,164,084	745,688
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	2,046,398	1,773,153
Ընդամենը Բանկի կողմից պահվող պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	8,182,045	6,165,622
Վաճառքի և ինտօնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեքորեն	-	526,169
Ընդամենը պետական պարտատոմսեր	-	526,169
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեքորեն	8,182,045	6,691,791
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		
Տոկոսադրյալ սվուֆեր	-	84,237
Արժուրային սվուֆեր	73,561	40,982
Ընդամենը ածանցյալ ֆինանսական ակտիվներ	73,561	125,219
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	8,255,606	6,817,010
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		
Արժուրային սվուֆեր	35,314	20,621
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	35,314	20,621

Ծահույթի կամ վճասի միջոցով իրական արժեքով չափող ներդրումային արժեքների պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշներից:

(p) Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափող ներդրումային արժեքներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահպող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	1,134,931	2,351,831	397,295	74,444	1,026,410	4,984,911
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	256,008	519,857	109,772	24,266	319,450	1,229,353
Օտարություններ/ դուրսգրումներ	(112,528)	(23,762)	(48,406)	-	(281,226)	(465,922)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	1,278,411	2,847,926	458,661	98,710	1,064,634	5,748,342
Հաշվեկշռային արժեք						
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	3,252,644	3,419,351	1,863,326	199,420	1,505,596	10,240,337

22 Վարձակալություն

Բանկը վարձակալում է ակտիվներ, մասնավորապես, զիսամասային գրասենյակի և մասնաճյուղերի գրասենյակների տարածքները և այլ տարածքներ: Վարձակալության ժամկետը որպես կանոն կազմում է 10-ից 20 տարի:

Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ:

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ

	2019թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	10,984,619
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ	74,839
Ժամանակաշրջանի մաշվածության գումար	(1,027,215)
Վարձակալության պայմանագրի փոփոխություն և ապահանաչում	1,202,876
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	11,235,119

(բ) Վարձակալության գծով պարտավորություն

	2019թ. հազ. դրամ
Մինչև մեկ տարի ժամկետով	1,826,982
Մեկից երկու տարի ժամկետով	1,806,574
Երկուսից հինգ տարի ժամկետով	4,841,814
Ավելի քան հինգ տարի ժամկետով	17,548,888
Ընդամենը չգեղչված վարձակալության գծով վճարվելիք գումարներ	26,024,258
Զվարտակած ֆինանսական ծախսեր	(14,651,001)
Վարձակալության գծով պարտավորություն	11,373,257

(գ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	2019թ. հազ. դրամ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածություն	1,027,215
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	1,294,627

(դ) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

	2019թ. հազ. դրամ
Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալությունների գծով	1,444,183
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ	1,444,183

23 Այլ ակտիվներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Չափարտված գործարքների գծով դերիտորական պարտքեր	2,043,477	2,119,304
Հաշիվներ թիրինգային կազմակերպություններում՝ օգտագործման սահմանափակումներով	569,931	447,384
Բրոքերային հաշիվներ	373,512	244,954
Պարտքային կորստի գծով պահուստ	(42,495)	(18,498)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	2,944,425	2,793,144
Կանխավճարներ մատակարարներին	2,299,207	1,880,690
Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ	863,805	473,701
Պաշարներ	188,858	145,357
Այլ	83,685	164,719
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	3,435,555	2,664,467
Ընդամենը այլ ակտիվներ	6,379,980	5,457,611

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է այլ ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համարյունը՝ 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	2019թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Մնացորդը առ 1 հունվարի	14,884	209	3,405	18,498
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(37,133)	37,133	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	-	(37,359)	37,359	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	26,592	484	185,327	212,403
Դուրսգրումներ	-	-	(188,406)	(188,406)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	4,343	467	37,685	42,495

հազ. դրամ	2018թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Մնացորդը առ 1 հունվարի	6,860	2,234	43,205	52,299
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(209)	209	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(282)	(1,869)	2,151	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	8,515	(365)	267,889	276,039
Դուրսգրումներ	-	-	(309,840)	(309,840)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	14,884	209	3,405	18,498

24 Բանկերի ավանդներ և մնացորդներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	13,092,867	7,078,390
Վարկեր և ժամկետային ավանդներ առևտրային բանկերից		
- Մինչև 12 ամիս սկզբնական մարման ժամկետով	10,674,325	23,530,588
- Ավելի քան 12 ամիս սկզբնական մարման ժամկետով	4,568,199	3,421,295
Ակրեդիտիվների գծով պարտավորություններ	5,512,922	8,625,734
Լորու հաշվներ	640,500	420,762
	34,488,813	43,076,769

Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԿԲ-ն Բանկին տրամադրում է վարկեր, որն իր հերթին վարկեր է տրամադրում համապատասխան պայմանները բավարարող վարկառություն: Վարկերի մշտականացումը և վարչարարությունն իրականացվում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակի կողմից:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, Բանկը չունի այնպիսի բանկեր (2018թ-ին՝ մեկ բանկեր), որոնց գծով մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում էր 20,643,011 հազար դրամ:

25 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	77,232,696	61,904,034
- Իրավաբանական անձինք	260,795,880	145,889,262
Ժամկետային ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	171,586,444	133,060,914
- Իրավաբանական անձինք	83,608,413	58,231,922
	593,223,433	399,086,132

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հաճախորդների ընթացիկ հաշիվներից և ավանդներից 1,977,340 հազար դրամ (2018թ-ին՝ 11,001,416 հազար դրամ) գումարով մնացորդները ծառայում են որպես գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխատվության հանձնառությունների դիմաց:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երեք հաճախորդ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ չորս հաճախորդ), որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 144,761,622 հազար դրամ (2018թ-ին՝ 44,068,684 հազար դրամ):

26 Թողարկված պարտքային արժեքներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր	50,000,346	46,233,668
Մուրհակներ	4,572,709	4,612,688
	54,573,055	50,846,356

2019թ. դեկտեմբերի դրույթամբ Բանկը թողարկել և տեղաբաշխել է պարտքային արժեքներ դրամով և ԱՄՆ դրամով՝ 8 միլիարդ դրամ և 86.7 միլիոն ԱՄՆ դրամ անվանական արժեքով (2018թ.-ին՝ պարտքային արժեքներ դրամով, ԱՄՆ դրամով և եվրոյով՝ համապատասխանաբար 5 միլիարդ դրամ, 81 միլիոն ԱՄՆ դրամ և 3 միլիոն եվրո անվանական արժեքով): 2019թ. դեկտեմբերի դրույթամբ պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում էր համապատասխանաբար 8,125,944 հազար դրամ և 41,874,402 հազար դրամ (2018թ.-ին՝ համապատասխանաբար 5,090,669 հազար դրամ, 39,469,585 հազար դրամ և 1,673,414 հազար դրամ):

Բանկի կողմի թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի արժեքների ֆոնդային բորսայում:

2016թ.-ին իր մերդումների կառավարչի՝ «ResponsAbility Investments AG» միջոցով Բանկը չորս լյուքսեմբուրգյան իիմնադրամներում տեղաբաշխել էր ԱՄՆ դրամով արտահայտված 20,000,000 ԱՄՆ դրամ գումարով մուրհակներ, որոնց մարման ժամկետը լրանում է 2021թ.-ին: 2019թ. դեկտեմբերի դրույթամբ մուրհակների հաշվեկշռային արժեքը կազմում է 4,572,709 հազար դրամ (2018թ.-ին՝ 4,612,688 հազար դրամ):

(ա) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	50,846,356	40,932,595
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Թողարկված պարտքային արժեքների վաճառք	21,864,967	24,855,545
Թողարկված պարտքային արժեքների մարում	(17,659,493)	(12,849,554)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	4,205,474	12,005,991
Արտադրությի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(564,912)	(96,733)
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	3,123,159	2,604,298
Վճարված տոկոսներ	(3,037,022)	(4,599,795)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	54,573,055	50,846,356

27 Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	126,654,327	120,852,547
Փոխառություններ հայկական ֆինանսական կազմակերպություններից	31,280	60,662
	126,685,607	120,913,209
Ստորադաս փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	36,495,281	44,489,851
Ստորադաս փոխառություններ վերջնական վերահսկող կողմից	-	5,924,274
	36,495,281	50,414,125

(ա) Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների կենտրոնացում

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հիմն ֆինանսական կազմակերպությունից (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ յոթ) ստացված փոխառություններ, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 114,833,909 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 127,166,023 հազար դրամ):

(թ) Ստորադաս փոխառություն

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստորադաս փոխառություններն իրենցից ներկայացնում են՝

- Կապակցված կողմ չհանդիսացող միջազգային ֆինանսական կազմակերպությունից ստացված փոխառություն (25,027,671 հազար դրամ), որի մարման ժամկետում է՝ 2022թ. հունվարի 11-ը:
- Այլ երկու ֆինանսական կազմակերպությունից ստացված փոխառություն՝ 4,307,276 հազար դրամ գումարով և 2026թ. հունվարի 15-ին մարման ժամկետով և 7,160,334 հազար դրամ գումարով և 2027թ. հունվարի 15-ին մարման ժամկետով:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջնական վերահսկող կողմից ստացված 5,924,274 հազար դրամ գումարով փոխառությունը, որի մարման ժամկետը պայմանագրի համաձայն լրանում է 2021թ. հունվարի 11-ին, ամբողջությամբ մարվել է 2019թ-ին:

Ստացված փոխառությունները Բանկը դիտարկում է որպես ստորադաս փոխառություններ, եթե սնանկության դեպքում փոխառությունը մարվում է Բանկի մյուս բոլոր պարտավորությունների ամբողջական մարումից հետո:

(զ) Կովենանտներ

Բանկը պարտավոր է պահպանել որոշակի կովենանտներ փոխառության պայմանագրերի հետ կապված: 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը պահպանել է բոլոր այդ կովենանտները:

(ա) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	Այլ փոխառություններ	Ստորագաս փոխառություններ
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	120,913,209	50,414,125
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր	36,670,697	2,402,111
Մարումներ	(28,146,725)	(15,346,760)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	<u>8,523,972</u>	<u>(12,944,649)</u>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(2,887,489)	(564,649)
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	6,198,375	3,778,109
Վճարված տոկոսներ	(6,062,460)	(4,187,655)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	<u>126,685,607</u>	<u>36,495,281</u>
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	98,128,094	40,919,768
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր	109,241,838	9,290,363
Մարումներ	(85,915,500)	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	<u>23,326,338</u>	<u>9,290,363</u>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(552,218)	22,123
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	4,910,452	5,984,672
Վճարված տոկոսներ	(4,899,457)	(5,802,801)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	<u>120,913,209</u>	<u>50,414,125</u>

28 Այլ պարտավորություններ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Աշխատավիցներին վճարվելիք գումարներ	3,433,379	2,944,207
Կրեդիտորական պարտքեր ճանապարհին	1,262,818	887,189
Առևտրական կրեդիտորական պարտքեր	995,216	621,549
Ֆակտորինգի պայմանագրերին վերաբերող ֆինանսական պարտավորություններ	954,480	948,514
Ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամին վճարվելիք գումարներ	176,713	126,004
Այլ կրեդիտորական պարտքեր	1,438,284	1,562,388
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	8,260,890	7,089,851
Այլ վճարվելիք հարկեր	305,946	301,576
ՀՀ ԿԲ-ի կողմից դեռ չհաստատված նորմատիվային կապիտալի համարում	95,484	-
Հետաձգված եկամուտ	3,003	2,385
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	404,433	303,961
Ընդամենը այլ պարտավորություններ	8,665,323	7,393,812

29 Քաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 116,710 սովորական բաժնետոմսից (2018թ.-ին՝ 116,564): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 320 հազար դրամ և բոլոր բաժնետոմսերն ամբողջությամբ վճարված են:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահարաժենները և քվեարկել թանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

2019թ.-ին թանկը թողարկել է լրացուցիչ 146 բաժնետոմս՝ 320,000 դրամ անվանական արժեքով (2018թ.-ին՝ 16,291 բաժնետոմս՝ 320,000 դրամ անվանական արժեքով) և 599,687 դրամ տեղաբաշխման արժեքով (2018թ.-ին՝ 885,560 դրամ): 2019թ.-ին թողարկված բոլոր բաժնետոմսերմ ամբողջությամբ ծեռք են բերվել «Ի-Էս-Փի-Էս Հոլիհանդ Լիմիթիդ» ընկերության կողմից:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Ներդրումային արժեքերի վերագնահատման պահուստ

Ներդրումային արժեքերի վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեքերի իրական արժեքի կուտակային գուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապահովագումը կամ արժեզրկումը:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չքաշխված շահույթի չափով:

2019թ.-ին Բանկը հայտարարել և վճարել է 1,050,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ (2018թ.-ին՝ 1,148,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ):

30 Ոխսկերի կառավարում

Ոխսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և Բանկի գործառնությունների կենսական տարրն է: Շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

(ա) Ոխսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ոխսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ոխսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների վոփոխությունները, առաջարկող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն պրակտիկան/փորձն արտացոլելու նպատակով:

Տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործադրների հաստատման համար:

Ոխսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ոխսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Տնօրինությանը և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ոխսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործուները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործուների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ոխսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպունքներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

(ը) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթակվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտաքույքի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթակվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաշափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն, որը զլսավորում է Գլխավոր տնօրեննը: Շուկայական ռիսկի սահմանաշափերը հաստատվում են Տնօրինության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաշափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտաքույքի դիրքեր, որոնք կանոնավոր կերպով նշտարիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Տնօրինության կողմից:

Բացի այդ, Բանկն իրականացնում է մեծ թվով սրբես թեստեր առանձին առևտրային պորտֆելների և Բանկի ընդհանուր դիրքի վրա շուկայի բազմաթիվ բացառիկ սցենարների ֆինանսական ազդեցությունը մոդելավորելու համար: Սրբեսի թեստերը ցույց են տալիս կորուստների հավանական չափը, որոնք կարող են առաջանալ ծայրահեղ պայմաններում:

(ի) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Բանկը ենթակվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

Սիօհին արդյունավետ տոկոսադրույթներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույթները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ։ Այս տոկոսադրույթներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն լրացած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը։

	2019թ.			2018թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույթ, %		Այլ արտաքինություն	Միջին արդյունավետ տոկոսադրույթ, %		Այլ արտաքինություն
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար		ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	
Տոկոսաբեր ակտիվներ						
Իրական արժեքով՝ շահուսրի կամ վնասի միջոցով չափվող ներդրմային աշխերդեր	9.5%	6.7%	4.8%	9.5%	6.4%	4.9%
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրմային արժեքորդեր	10.2%	7.5%	-	10.9%	5.0%	5.0%
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրմային արժեքորդեր	8.6%	6.2%	-	9.0%	5.7%	-
Բանկերին արված վարկեր և փոխառություններ	-	5.3%	-	7.3%	-	1.0%
Հակադարձ հետզննան պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6.1%	3.4%	0.5%	7.0%	3.0%	1.0%
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	12.7%	8.9%	6.2%	13.6%	8.6%	7.1%
Ֆինանսական վարձակարգության գծով ստացվելիք գումարներ	13.9%	7.9%	6.5%	13.7%	7.3%	8.4%
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	14.2%	8.8%	6.1%	14.8%	8.6%	5.2%
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	-	8.7%	5.3%	-	6.3%	6.7%
Տոկոսակիր						
պարտավորություններ	6.5%	2.2%	1.7%	6.7%	3.3%	0.6%
Բանկերի ավանդներ և մնացորդներ	-	-	-	6.1%	-	-
Հետզննան պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	9.0%	4.1%	1.8%	9.0%	4.1%	3.0%
Հաճախորդների ժամկետային ավանդներ	9.7%	5.2%	-	9.7%	5.4%	3.3%
Ստորադաս փոխառություններ	-	10.2%	6.3%	-	9.4%	6.4%
Այլ փոխառություններ	8.4%	5.0%	2.8%	7.9%	6.1%	3.0%

Տոկոսադրույթի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույթի ճեղվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույթի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույթների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վճարի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների, բացառությամբ տոկոսակիր դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցանկանց ավանդների, եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (ըկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զյուրյուն ունեցող դիրքերի հիման վրա:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
100 ըկ զուգահեռ աճ	(1,049,753)	(1,162,410)
100 ըկ զուգահեռ նվազում	<u>1,049,753</u>	<u>1,162,410</u>

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (ըկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2019թ. Սեփական կապիտալ հազ. դրամ	2018թ. Սեփական կապիտալ հազ. դրամ
100 ըկ զուգահեռ աճ	(315,398)	(529,312)
100 ըկ զուգահեռ նվազում	<u>315,398</u>	<u>529,312</u>

(ii) Արժութային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջափորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջափորման փոխարարերություն՝ ՖՀՍՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող այլուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դրամ հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտաքույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեներ	31,370,523	136,945,002	5,668,474	173,983,999
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով շափող ներդրումային աշխերդեր	1,788,708	45,873	-	1,834,581
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով շափող ներդրումային արժերդեր	3,353,097	-	-	3,353,097
Ամորտիզացված արժեքով շափող ներդրումային արժերդեր	2,542,987	-	-	2,542,987
Բանկերին տրված վարկեր և փոխատվորյուններ	20,101,586	4,824,324	-	24,925,910
Հակադարձ հետզննան պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,346,506	7,524,129	-	8,870,635
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվորյուններ	328,225,481	80,824,999	1,740,067	410,790,547
Արեղյատիվների գծով ստացվելիք գումարներ	1,574,039	3,472,163	-	5,046,202
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	1,994,946	948,658	-	2,943,604
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	6,902,267	3,015,623	2,985	9,920,875
Այլ ակտիվներ	1,761,925	29,107	57,915	1,848,947
Ընդամենը ակտիվներ	400,962,065	237,629,878	7,469,441	646,061,384

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկերի ավանդներ և մնացորդներ	13,556,167	4,869,901	1,018,093	19,444,161
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	361,523,559	63,486,589	7,214,487	432,224,635
Թողարկված պարտքային արժեքութեր	46,447,112	-	-	46,447,112
Ստորադաս փոխառություններ	25,027,671	11,467,610	-	36,495,281
Այլ փոխառություններ	74,938,072	36,480,965	-	111,419,037
Այլ պարտավորություններ	1,292,686	450,630	18,164	1,761,480
Ընդամենը պարտավորություններ	522,785,267	116,755,695	8,250,744	647,791,706
ԶՈՒՏ ԴՐԱՋ	(121,823,202)	120,874,183	(781,303)	(1,730,322)
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	118,470,708	(122,495,280)	(239,651)	(4,264,223)
ԶՈՒՏ ԴՐԱՋ	(3,352,494)	(1,621,097)	(1,020,954)	(5,994,545)

Ստորև բերվող այլուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դրամ հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտաքույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեներ	12,701,409	46,349,316	5,225,918	64,276,643
Իրական արժեքով շահույթի կամ վճարի միջոցով շափող ներդրումային աշխերդեր	1,750,450	80,331	-	1,830,781
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով շափող ներդրումային արժերդեր	5,031,472	1,355,683	-	6,387,155
Ամորտիզացված արժեքով շափող ներդրումային արժերդեր	13,480,810	-	-	13,480,810
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	1,328,545	1,273,907	104,764	2,707,216
Հակադարձ հետզննան պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	914,220	2,769,206	-	3,683,426
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	380,471,956	49,326,693	1,887,584	431,686,233
Արեղյատիվների գծով ստացվելիք գումարներ	6,393,795	1,874,744	-	8,268,539
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	1,805,094	155,594	-	1,960,688
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	6,954,432	3,098,930	1,656	10,055,018
Այլ ակտիվներ	2,073,597	302,581	825,200	3,201,378
Ընդամենը ակտիվներ	432,905,780	106,586,985	8,045,122	547,537,887
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	14,904,074	17,877,791	352,463	33,134,328
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	239,398,240	42,178,044	13,640,743	295,217,027
Թողարկված պարտքային արժեքություն	44,082,273	1,673,414	-	45,755,687
Ստորադաս փոխառություններ	41,113,611	9,300,514	-	50,414,125
Այլ փոխառություններ	71,682,222	37,904,405	-	109,586,627
Այլ պարտավորություններ	1,523,212	555,423	23,638	2,102,273
Ընդամենը պարտավորություններ	412,703,632	109,489,591	14,016,844	536,210,067
Զուտ դիրքը	20,202,148	(2,902,606)	(5,971,722)	11,327,820
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	(9,717,582)	3,321,900	6,028,089	(367,593)
Զուտ դիրքը	10,484,566	419,294	56,367	10,960,227

Ստորև աղյուսակում ներկայացված 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կճվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վճար ստորև ներկայացված գումարների չափով։ Վերլուծությունն իրականացնելիս հաշվի չեն առնվել հարկերը և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ։ Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից առաջացող եկամուտը (ծախսը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման)։ Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույթները, կմնան անփոփոխ։

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դրամի փոխարժեքի աճ 10%-ով	(335,249)	1,048,457
ՀՀ դրամի նկատմամբ Եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	(162,110)	41,929

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ։

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վճառ կրելու ռիսկն է, եթե հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները։ Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ենրայալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի և Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով։ Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրինության կողմից։

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- փոխառումների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարումնակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, բողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարումնակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ գործիքների, որոնց գծով Բանկը ենթարկված է պարտքային ռիսկին, շարունակական հսկողության և մշտադիմական ընթացակարգերը։

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկավորման քամին, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրություն է վարկի դիմումը Վարկավորման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական բաժնի կողմից՝ կախված առանձին ռիսկերից:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերազնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց վարկային դիմումներն ուսումնասիրվում են Մանրածախ վարկավորման ստորաբաժանման կողմից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և շճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի առտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեքբերում ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխատվությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեքբերը պահպում են որպես հակադարձ հետզնման և արժեքբերի փոխառության գոծառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գրավի և այդ վարկերի և փոխատվությունների գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

Զճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետվությունների ուղղությամբ ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

Արժեզրկման գնահատում

2018թ. հունվարի 1-ից Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ զնահատելու համար ակնկալվող դրամական պակասուրդները՝ գեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ։ Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է։ Ստորև ներկայացված են ակնյալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և առանցքային տարրերը։

Պարտազանցման
տեղի ունենալու
հավանականության

Պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է։ Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի զնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապամանաշվել և դեռևս պորտֆելում է։

Պարտքի գումարը
պարտազանցման
պահին

Պարտքի գումարը պարտազանցման պահին ապագա պարտազանցման ամսարվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարբռի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները։

Կորուստը
պարտազանցման
դեպքում

Կորուստը պարտազանցման դեպքում դա այն կորուստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում։ Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից։ Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս։

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում են, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեղել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա։ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից։ Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների ինույթից։

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը։ Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեգրկված, ինչպես ներկայացված է ստորև։

1-ին փուլի

Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա։ 1-ին փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից։

2-րդ-փուլի

Եթե վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, Բանկը ձևափորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով։ 2-րդ փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից։

3-րդ փուլի

Վարկերը համարվում են պարտքային առումով արժեգրկված։ Բանկը ձևափորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով։

Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեգրկված

Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեգրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեգրկված ֆինանսական ակտիվներ են։ Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեգրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետազայում ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույթի հիման վրա։ Ակնկալվող պարտքային կորուստների ճանաչվում կամ ապահանաչվում է այնքանով, որքանով հետազայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները։

Պարտազանցման սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտազանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեգրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտափոխությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից։

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին՝ ելնելով դեկավարության դատողությունից։ Եթե այդ դեպքը տեղի է ունենում, Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է։

Պարտազանցման տեղի ունենալու հավաճականության գնահատման գործընթաց

Պահառուական և միջքանկային հարաբերություններ

Բանկի պահառուական և միջքանկային հարաբերությունները և պայմանագրային կողմերն իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոբերներ և դիլերներ, ֆոնդային բորսաներ և քլիփինգային կազմակերպություններ: Այս հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հրապարակային տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Խմբավորում

Բանկը չունի ներքին վարկանիշային համակարգ իրավաբանական անձանց տրված վարկերի համար, որը կարող է օգտագործվել պարտազանցման տեղի ունենալու հավաճականությունը գնահատելու համար: Բանկն առանձնացնում է պորտֆելների հետևյալ տեսակները:

- կորպորատիվ վարկեր,
- սպառողական վարկեր,
- հիփոքերային վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով պարտազանցման տեղի ունենալու հավաճականությունը հիմնված է անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվության վրա և հաշվարկվում է հավաճականության փոփոխության մատրիցների միջոցով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվությունը: Հավաճականությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ընդհանուր վարկերի ժամկետանց դասերի միջև տեղափոխող վարկերի մասնաբաժինը: Պարտազանցման տեղի ունենալու հավաճականությունը հաշվարկելիս Բանկը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք կան ազդեցություն ունեն պարտազանցման տեղի ունենալու հավաճականության վրա:

Պարտքի գումարը պարտազանցման պահին

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենց ներկայացնում է արժեգրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը՝ հաշվի առնելով թե՛ պարտքի գումարը մեծացնելու հաճախորդի հնարավորությունը առաջիկա պարտազանցման դեպքում և թե՛ հնարավոր վաղաժամ մարումը: 1-ին փուլի վարկի գծով պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ծեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեգրկված ֆինանսական ակտիվների համար պարտազանցման պահին պարտքի գումարը դիտարկվում է գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

3-րդ փուլի և ծեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեգրկված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտազանցման պահին հավասար է այդ վարկերի հաշվեկշռային արժեքին:

Պարտքի գումարը պարտազանցման պահին որոշվում է նախքան պարտազանցման տեղի ունենալու ամսաթիվը չկատարված պարտազանություններով վարկերի ամորտիզացված արժեքի վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա:

Կորուստը պարտազանցման դեպքում

Հաճախորդներին տրված 1-ին փուլի վարկերի, ինչպես նաև անհատական հիմունքով ոչ էական 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար, Բանկը պարտազանցման դեպքում կորուստը հաշվարկում է պորտֆելի մակարդակով: Բանկը պարտազանցման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները չկատարված պարտականություններով բոլոր վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվորյունը և գեղշփում է պարտազանցման ամսաթվի դրույթամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույթով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվորյունը ներառում է չկատարված պարտականություններով վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարտմից ստացված դրամական միջոցներ, երաշխավորից ստացված դրամական միջոցներ, գրավի վաճառքից ստացված դրամական միջոցներ և այլն): Առանձին վերցված նշանակալի 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում կորուստը հաշվարկում անհատական հիմունքով՝ հաշվի առնելով ակնկալվող դրամական միջոցները, ներառյալ գրավի իրացումից ստացվելիք դրամական հոսքերը:

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Բանկն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվորյունը: Բանկը համարում է, որ պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե ակտիվների գծով վճարումները ավելի քան 30 օր ժամկետանց են:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Բանկի դեկավարությունը դիտարկում է նաև հետևյալ գործուները՝

- տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպություններում,
- վարկառուի զգալի ֆինանսական դժվարությունները,
- վարկի պայմանների վերանայումը վարկառուի ֆինանսական վիճակի վատքարացման պատճառով,
- մակրոտեսական ցուցանիշների վատքարացումը և դրանց հնարավոր ազդեցությունը վարկառուի ֆինանսական արդյունքների վրա:

Ապագայամետ տեղեկատվություն և տարրեր տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների նորելերում Բանկը հիմնվում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես, այնպիսի տնտեսական ելակետային տվյալների վրա, ինչպիսիք են՝

- սպառողական գների ինդեքսը,
- ԱՄՆ դրամ/ՀՀ դրամ փոխարժեքը,
- ՌԴ ռուբլի/ՀՀ դրամ փոխարժեքը,
- արտահանման ծավալները,
- ներմուծման ծավալները:

Ապագայամետ տեղեկատվությունը Բանկը ստանում է արտաքին առբյուրներից (Տնտեսական հետաքննությունների բաժնից): Բանկի Պարտքային ռիսկի բաժնի փորձագետները գնահատում են տարրեր սցենարներին վերագրելի կշիռները: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ակնկալվող պարտքային կարուստների հաշվարկի յուրաքանչյուր տնտեսական սցենարում օգտագործված առանցքային ապագայամետ տնտեսական փոփոխականները/ներայիւրագումները:

ԱՊԿ սցենար	Որոշված հավաճականություն %	2020թ.	2021թ.
Հիմնական գործողներ			
Ապառողական գների ինդեքս			
Լավատեսական	20%	101.805	100.605
Բազային	60%	105.000	103.800
Վատատեսական	20%	108.195	106.995
ԱՄՆ դրամ/ՀՀ դրամ փոխարժեք			
Լավատեսական	20%	436.3428	443.6428
Բազային	60%	483.3000	490.6000
Վատատեսական	20%	530.2572	537.5572
ՌԴ ռուբլի /ՀՀ դրամ փոխարժեք			
Լավատեսական	20%	9.5033	9.7233
Բազային	60%	7.0400	7.2600
Վատատեսական	20%	4.5767	4.7967
Արտահանում, մլն. դրամ			
Լավատեսական	20%	3,161.75	3,356.75
Բազային	60%	2,807.00	3,002.00
Վատատեսական	20%	2,452.25	2,647.25
Ներմուծում, մլն. դրամ			
Լավատեսական	20%	6,165.15	6,567.15
Բազային	60%	5,686.00	6,008.00
Վատատեսական	20%	5,206.86	5,608.86

Վերը դյուսակում ներկայացված բազային կանխատեսումների հետ մեկտեղ (60% հավաճականությամբ) Բանկը օգտագործում է նաև ցնցումային մակրոտնտեսական փոփոխականներ ակնկալվող պարտքային կորուստները լավատեսական (20% հավաճականությամբ) և վատատեսական (20% հավաճականությամբ) սցենարներով հաշվարկելու համար: Այս ցուցանիշները կշռվում են բազային սցենարի ցուցանիշների հետ մեկտեղ ակնկալվող պարտքային կորուստների վերջնական ցուցանիշը ստանալու համար:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քիրինգի պայմանագրերը, հետզնման գլխավոր պայմանագրերը և արժեքորթերի փոխատվորյան գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետզնման պայմանագրերը և արժեքորթերի փոխառության և փոխատվորյան պայմանագրերը: Ֆինանսական գործիքները, այդ թվում՝ փարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունում:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանավոր արժեքորթերի տեսքով վաճառքի և հետզնման, հակադարձ վաճառքի և հետզնման պայմանագրերի գծով:

Այս զրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես զրավ ստացված/տրամադրված արժեքորերը կարող են զրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմին կողմից զրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ Բանկը և Վերջինին պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով. կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորություններ միաժամանակ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական պարտավորությունների տեսակներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվորյունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվորյունում ներկայացված՝ ֆին. պարտավորությունների գումար	Ֆինանսական պարտավորությունում չհաշվանցված գումարներ
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	23,549,559	-	23,549,559 (23,549,559)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	23,549,559	-	23,549,559 (23,549,559)
Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	-	-	-

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

